ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2018

Հոդվածների ժողովածու

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

(Հոդվածների ժողովածու)

Երևան
«Միսմա» ՍՊԸ
2018

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. О. ТУМАНЯНА

МАГИСТР

(Сборник статей)

Ереван
ООО «Мисма»
2018

RA MINSITRY OF EDUCATION AND SCIENCE

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TOUMANYAN

MASTER STUDENT

(Collection of articles)

Yerevan
“Misma” LTD
2018

Խմբագրակազմ

Ս. Թումանյան, բ.գ.թ., (համակարգող), **Վ. Եղիազարյան**, բ.գ.դ., պրոֆ.,
Վ. Փիլոյան, բ.գ.թ., **Կ. Առուստամյան** բ.գ.թ., **Ա. Սանթոյան**, բ.գ.թ.,
Մ. Թովմասյան, ֆ.-մ. գ.թ., **Լ. Վարդանյան**, բ.գ.թ., **Թ. Թադևոսյան**, բ.գ.թ.,
Վ. Հարությունյան, տնտ.գ.թ, **Ա. Կոխլիկյան**, պ.գ.թ.

ՄԱԳԻՍՏՐՈՍ (Հոդվածների ժողովածու)
/ՀՀ ԿԳՆ; Վանաձորի պետական համալսարան, Խմբագրակազմ – Երևան:
«Միսմա» ՍՊԸ, 2018. – 256 էջ:

Ժողովածուն ամփոփում է ՎՊՀ 2017-18 ուստարվա մագիստրատուրայի ուսանողների ատենախոսության թեմաներով գրված գիտական այն հոդվածները, որոնք երբևէ չեն հրատարակվել: Հոդվածները խմբագրակազմի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

©Հեղինակային խումբ, 2018
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2018
© «Միսմա» ՍՊԸ, 2018

Редколлегия

С. Туманян, к. филол. н. (координатор), **В. Егиазарян**, д. филол. н., проф., **В. Пилоян**, к. филол. н., **К. Арустамян**, к. филол. н., **А. Сантоян**, к. филол. н., **М. Товмасян,** к. физ.-мат. н., **Л. Варданян,** к. филол. н., **Т. Тадевосян**, к. филол. н., **В. Арутюнян**, к.э.н., **А. Кохликян**, к. ист. н.

МАГИСТР (Сборник статей)
/МОН РА; Ванадзорский государственный университет, Редколлегия – Ереван ООО «Мисма», 2018. – 256 с.

В сборник включены неизданные статьи студентов магистратуры ВГУ 2017-18 уч. года по темам их диссертаций. Статьи рецензированы, отредактированы и рекомендованы для печати по решению редколлегии.

© Авторская группа, 2018
© Ванадзорский государственный университет им. О. Туманяна, 2018
© ООО «Мисма», 2018

Editorial Board

S. Toumanyan, Candidate of Philological Sciences, (Coordinator), **V. Yeghiazaryan**, Doctor of Philological Sciences, Professor, **V. Piloyan**, Candidate of Philological Sciences, **K. Arustamyan**, Candidate of Philological Sciences, **A. Santoyan**, Candidate of Philological Sciences, **M. Tovmasyan**, Candidate of Physical and Mathematical Sciences, **L. Vardanyan**, Candidate of Philological Sciences, **T. Tadevosyan**, Candidate of Philological Sciences, **V. Harutyunyan,** Candidate of Economic Sciences, **A. Kokhlikyan**, Candidate of Historical Sciences

MASTER STUDENT (Collection of articles)
/RA Ministry of Education and Science; Vanadzor State University, Editorial Board - Yerevan: "Misma" LTD, 2018. - 256 p.

The collection summarizes those scientific articles written on the basis of Master students' thesis topics of VSU 2017-18 academic year, that have never been published. The Editorial Board has reviewed, edited and guaranted the articles for publication.

© The group of authors, 2018
© Vanadzor State University named after H. Toumanyan, 2018
© "Misma" LTD, 2018

ՔԻՄԻԱ

ХИМИЯ

CHEMISTRY

Մայմեխ ջրամբարի ջրի որակական ցուցանիշների վերլուծություն

Բաբայան Սիրուշ
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ, «Քիմիա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ք.գ.թ., դոցենտ Հ. Խանզադյան

Հանգուցային բառեր. *ջուր, ջրամատակարարում, վերգետնյա և ստորգետնյա ջրեր, սանիտարական պահպանման գոտիներ,ջրի կոշտություն, քիմիական կազմ, օրգանոլեպտիկ ցուցանիշներ*

Ջուրը կենսոլորտի կարևորագույն բաղադրիչներից է: Շրջակա միջավայրի բազմազան ու բազմատեսակ գործոններից օրգանական աշխարհի համար ջուրն ունի յուրահատուկ նշանակություն, քանի որ օրգանիզմներում կատարվող բոլոր պրոցեսները (ասիմիլյացիա, դիսիմիլյացիա, դիֆուզիա, օսմոս, հիդրոլիզ, օքսիդավերականգնում) ընթանում են ջրային լուծույթներում: Ջրի, հատկապես քաղցրահամ ջրի, խնդիրը ձեռք է բերել համամոլորակային հնչեղություն, քանի որ աշխարհի երկրների զգալի մասը սակավաջրության խնդիր ունի: Մեր երկիրն էլ զերծ չէ այս խնդրից, ուստի խիստ կարևոր է եղած ջրային պաշարների որակի պահպանումը, ինչն ուղղակի կապված է շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի հետ:

Աշխատանքի նպատակն վերլուծելՎանաձոր քաղաքը սնուցող Մայմեխ ջրամբարի ջրի որակի ցուցանիշները՝ պարզելու համար, թե որքանով է այդ ջուրը համապատասխանում բնակչությանը մատակարարվող խմելու-տնտեսական նշանակության ջրերի նկատմամբ ներկայացվող պահանջներին:

Բնակավայրերի ջրամատակարարումը ջրային ռեսուրսների օգտագործման տեսակներից մեկն է: Ջրօգտագործման մնացած տեսակների մեջ տնտեսական-խմելու ջրամատակարարումը մեծ նշանակություն ունի, քանի որ դրա հետ է կապված հասարակական առողջական վիճակի բարձր մակարդակի, շատ էպիդեմիոլոգիական հիվանդությունների կանխարգելման, բնակավայրերի ընդհանուր սանիտարական նորմերի ապահովումը:

Մարդկային օրգանիզմի պահանջն է օգտվել խմելու ջրից, սակայն բնակավայրերի ջրամատակարարման խնդիրը և հիգիենիկ նշանակությունը դուրս է ֆիզիոլոգիական պահաջմունքի բավարարումից [1, 5-9]:

Խմելու-տնտեսական նշանակության ջրամատակարարումը միջոցառումների և տեխնիկական շինությունների ամբողջությունն է, որն ապահովում է բնակչությանը բարձրորակ խմելու ջրով, թույլատրում է լայնորեն օգտագործել ջուրը հիգիենիկ և կենցաղային նպատակներով, ապահովում է բնակավայրերի ջրային պահանջն ամբողջությամբ՝ սանիտարական և կոմունալ բարեկցության պահպանման նպատակով:

Խմելու-տնտեսական նշանակության ջրամատակարարման առանձնահատուկ գիծը ջրի որակի և քանակի համապատասխանությունն է սանիտարա-հիգենիկ նորմատիվներին:

Տարբերվում են ջրամատակարարման երկու տեսակներ՝ տեղական և կենտրոնացված: Այսպիսի բաժանման հիմնական հատկանիշը համարվում է ջրի հավաքման եղանակը: Տեղական ջրամատակարարման դեպքում ջուրը

վերցվում է մակերեսային կամ ստորերկրյա աղբյուրներից մեխանիկական եղանակով և խողովակաշարով ճնշման տակ հասցվում է սպառման կետ:

Կենտրոնական ջրամատակարարման դեպքում բոլոր տեսակի ջրային աղբյուրների ջուրը հավաքվում է ջրավազանում,ենթարկվում համապատասխան սանիտարա-հիգիենիկ մշակման, ապա խողովակաշարերով հասցվում սպառողին:

Ջրախողովակները ապահովում են ջրի պահպանումը աղտոտումից, անհրաժեշտության դեպքում նրա բնական որակների բարելավումը, ինչպես նաև սանիտարական նորմաներին համապատասխանող քանակներով անխափան օգտագործումը [2, 10-27; 3, 32-36]:

Ջրամատակարարման աղբյուրներին ներկայացվող հիմնական հիգիենիկ պահանջը կայանում է նրանում, որ ջրի որակը բնական վիճակում կամ մշակումից հետո երաշխավորի ինֆեկցիոն հիվանդություններից, առողջության համար վտանգավոր դոզաներով զանազան թունավոր և ռադիոակտիվ նյութերից պաշտպանվածությունը:

Ջրամբարների ջրի քիմիական բաղադրությունը և նրա տատանումները արտացոլում են գետերի, հալոցքների, գրունտային և անձրևաջրերի բաղադրության բազմազանությունը: Ջրամբարների ռեժիմին բնորոշ առանձնահատկությունն է ջրի գոլորշիացման հետևանքով հանքային աղերի կոնցենտրացիայի աստիճանական բարձրացումը, որը ջրային սյան բարձրության տարբեր հատվածներում տարբեր է: Արհեստական ջրամբարների ստեղծումը դրական երևույթ է շրջակա միջավայրի բնակավայրերի համար [3, 32-36]:

Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվում են հիգիենիկ պահանջներ՝ որակի հսկողության նկատմամբ:

Ջրային աղբյուրների որակական հատկանիշները պետք է համապատասխանեն սահմանված չափանիշների: Թեև ստորգետնյա ջրերի որակի մասին տվյալները համեմատաբար սակավ են, այնուհանդերձ կարելի է ենթադրել, որ ընդհանուր առմամբ ստորգետնյա ջրային աղբյուրների որակական հատկանիշը շատ բարձր է: Հայաստանի տարածքների մեծ մասում աղբյուրների ջուրը կարելի է օգտագործել որպես խմելու ջուր՝ առանց լրացուցիչ մաքրման: Հետագա աղտոտումը կանխելու նպատակով աղբյուրների շրջակայքում ստեղծվում են սանիտարական գոտիներ:

Խմելու տնտեսական նշանակության ջրմուղները և ջրամատակարարման աղբյուրները ունեն սանիտարական պահպանման գոտիներ [4]:

Գոտիները կազմակերպվում են ինչպես ստորգետնյա, այնպես էլ մակերեսային աղբյուրների ջուր մատակարարող բոլոր ջրմուղների համար:

Սանիտարական պահպանման գոտիները երեքն են: Առաջին գոտին, որը կոչվում է խիստ ռեժիմ, ներառում է ջրառների տեղական տարածքը և ջրմուղների կառույցների տեղադրման հրապարակները: Սրա նշանակությունը ջրառի տեղի և ջրառների կառույցների պահպանումն է աղտոտումից և վնասումից:

Երկրորդ և երրորդ գոտիները, որոնք կոչվում են սահմանափակման գոտիներ, ներառում են ջրամատարակարարման աղբյուրների ջրի աղտոտման կանխարգելմանն ուղղված տարածքներ:

Ջրատարների սանիտարական պահպանումն ապահովում է սանիտարապահպանման շերտագծով:

Նշված երեք գոտիներից յուրաքանչյուրում, ինչպես նաև սանիտարական

պահպանման շերտագծերի սահմաններում, իրենց նշանակությանը համապատասխան, սահմանվում է հատուկ ռեժիմ և որոշվում է ջրի որակի վատթարացման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ամբողջությունը:

Գոտիների սահմանների որոշումը և համապատասխան կազմակերպչական, տեխնիկական, հիգիենիկ և հակահամաճարակային անհրաժեշտ միջոցառումների մշակումը կախված է ջրամատակարարման աղբյուրների (ստորգետնյա կամ մակերեսային) տեսակից, դրանց բնական պաշտպանվածությունից և քիմիական ու մանրէաբանական աղտոտման հնարավորությունից:

Սանիտարական պահպանման գոտիների սահմանները որոշվում են՝ կախված մի շարք գործոններից: Աղտոտման տարածման հեռավորությունը կախված է ջրամատակարարման աղբյուրի տեսակից (ստորերկրյա կամ մակերեսային), աղտոտման բնույթից (քիմիական կամ մանրէաբանական), հիդրոերկրաբանական պայմաններից:

Ստորերկրյա ջրերը բաժանվում են երկու խմբի՝ պաշտպանված և չպաշտպանված: Պաշտպանված ստորերկրյա ջրերին են պատկանում ճնշումային և ոչ ճնշումային միջշերտային ջրերը, որոնք սանիտարական պահպանման բոլոր գոտիների սահմաններում ունեն համատարած ջրահենային ծածկ, որը բացառում է բավարար պաշտպանված այլ հորիզոններից տեղային սնման հնարավորությունը:

Ոչ բավարար պաշտպանված ստորերկրյա ջրերին են պատկանում գրունտային ջրերը, ճնշումային և ոչ ճնշումային միջշերտային ջրերը, որոնք սանիտարական պահպանման գոտու մակերեսում ունեն սնուցման ոչ բավարար պաշտպանվածություն այլ հորիզոններից կամ անմիջական հիդրավլիկ կապի միջոցով բաց ջրամբարներից:

Ստորերկրյա ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման տարածքում միջոցառումների իրականացումը հետապնդում է ջրառում ջրի կազմի բնական կայունության պահպանման խնդիրը՝ դրա աղտոտման կանխման և վերացման միջոցով:

Ջրամատակարարման աղբյուրները՝ ստորերկրյա և մակերեսային, պետք է բավարարեն ջրի որակի ապահովման ցուցանիշներին, այսինքն՝ ջրատար հորիզոնի տիպը (արտեզյան, ճնշումային, գրունտային, ոչ ճնշումային), ջրատար հորիզոնի տեղադրման խորությունը, հզորությունը, ջրատար հորիզոնի սնման և դատարկման պայմանները: Սրանից բացի ջրամբարների համար պետք է նշվեն հայելու մակերեսը և օգտագործման ռեժիմը, ջրամբարի պլանը, դրա առավելագույն և նվազագույն խորությունը, հատակի, ափերի, հատակային նստվածքների բնույթը, ծաղկման, բուսածածկման, տիղմակալման առկայությունը, հոսքերի և քամիների գերիշխող ուղղությունը, ջրամբարների ջրի շարժման արագությունը [4, 67-75]:

Անվտանգ խմելու ջուր ունենալու համար ջրատարները չպետք է անցկացվեն աղբավայրերի, ասենիզացիոն, ոռոգման ֆիլտրացիոն դաշտերի, գերեզմանոցների, անասնագերեզմանոցների, արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտների տարածքներով:

Այս միջոցառումներն ուղղված են աղտոտումից ջրի զերծ պահելուն, հետևաբար նաև որակի պահպանմանը:

Մայմեխ ջրամբարի ջրի որակական ցուցանիշների վերլուծության նպատակով կատարվել է ջրի որակի հսկվող պարամետրերի՝ զգայորոշման և քիմիական կազմի, որոշումներ: Անալիզները կատարվել են ջրամբարների ջրի որակի հետազոտման մեթոդներով [5, 19, 57, 63, 70]: Զգայորոշման ցուցանիշներից

որոշվել են հոտը, ջերմաստիճանը, ջրածնային ցուցիչը, գունավորությունը, թափանցիկությունը,պղտորությունը:

Քիմիական բաղադրիչներից որոշվել են կոշտությունը, պերմանգանատային օքսիդացումը, լուծված թթվածնի քանակը, մի շարք իոններ (քլոր, սուլֆատ, ամոնիում, նիտրիտ, նիտրատ, մնացորդային քլոր, կալցիում, մագնեզիում, երկաթ):

Անալիզի ճշտությունը մեծապես կախված է անալիզվող օբյեկտի ճիշտ նմուշառումից: Ձրի դեպքում դա առավել քան ակտուալ է, քանի որ դրանից է կախված յուրաքանչյուր որոշվող ցուցանիշի ճշգրտությունը:

Այս դրույթի պահպանմամբ նմուշառում կատարված ջրի անալիզի արդյունքները ամփոփված են աղյուսակում:

Վերլուծելով խմելու տնտեսական նշանակության ջրամատակարարման աղբյուրների բնույթի, նրանց ծագման աղբյուրների, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների վերաբերյալ մեզ հասու տեղեկատվությունը, կարող ենք եզրահանգել, որ ազգաբնակչությանը բարձրորակ և անվտանգ խմելու ջրով ապահովելու համար չափազանց կարևոր է ոչ միայն ջրամատակարար աղբյուրների ջրերի նախնական որակական բարձր ցուցանիշների առկայությունը, այլև այդ ջրերը ապահով և առանց կողմնակի աղտոտման վտանգի մինչև սպառող բարեհաջող տեղ հասցնելը:

Որակական ցուցանիշներ	Չափման միավոր	Գարուն			Ամառ			Աշուն		
		04.04	18.04	25.04	05.07	12.07	25.07	07.09	19.09	24.09
pH		8.2	7.4	7.6	7.8	8.0	8.2	6.9	7.5	8.0
Թափանցիկ.	Սմ	28	28	28	30	30	30	28	29	30
Պղտորություն	Մգ/լ	0.01	0.02	0.02	0	0	0	0	0	0
Կոշտություն	Մմոլ/լ	3.0	3.0	2.0	2.5	4.0	3.92	0.96	2.4	3.5
Ձոր մնացորդ	Մգ/լ	108	164	190	110.5	120	128	84	85	96
Պերմ.օքսիդ.	Մգ/լ	2.1	1.92	3.28	3.0	1.0	2.96	0.9	0.5	1.44
Լուծվ. թթվածին	Մգ/լ	11.8	10.5	13.2	8.6	9.8	10.2	10.9	11.3	9.6
Քլոր իոն	Մգ/լ	7.0	6.5	5.0	6.0	8.0	8.5	9.5	8.0	8.2
Սուլֆատ իոն	Մգ/լ	6.0	5.0	5.33	6.0	23.0	25.0	15.0	12.0	10.0
Նիտրիտ իոն	Մգ/լ	0.001	0.003	0.001	0.002	0.0015	0.002	0.001	0.001	0.0015
Նիտրատ իոն	Մգ/լ	0.5	1.0	0.5	0.48	0.5	0.48	1.0	0.5	1.0
Ամոնիում իոն	Մգ/լ	0.03	0.03	0.02	0.02	0.04	0.02	0.026	0.025	0.03
Երկաթ իոն	Մգ/լ	0.02	0.01	0.02	0.02	0.02	0.015	0.02	0.01	0.02
Մնաց. քլոր	Մգ/լ	0.2	0.3	0.3	0.2	0.0	1.6	0.42	0.32	0.4
Կալցիում իոն	Մգ/լ	20.6	24.6	22.8	37.2	29.2	28.5	20.2	29.3	33.2
Մագնեզիում իոն	Մգ/լ	6.5	3.8	6.2	3.9	6.03	5.9	6.08	6.2	7.3

Մայմեխ ջրամբարի ջրի որակական ցուցանիշները ըստ սեզոնայնության 2017թ.

Վերլուծելով նաև անալիզի արդյունքները կարելի է եզրահանգել, որ Վանաձոր քաղաքը սնուցող Մայմեխ ջրամբարի ջրի որակը ընդհանուր առմամբ համապատասխանում է բնակչությանը տրվող որակյալ և առողջապահական տեսակետից անվտանգ ջրին ներկայացվող չափանիշներին: Տարվա կտրվածքով համապատասխանում է դասակարգման փափուկ ջրեր կատեգորիային, PH ցուցիչը նորմայի սահմաններում է փոփոխվում, չեն գերազանցված ջրում պարունակվող իոնների թույլատրելի կոնցենտրացիաները: Այնուհանդերձ, դիտվում են նաև որոշ շեղումներ՝ կախված տարբեր եղանակային պայմաններում ջրի որակական կազմի փոփոխությունների հետ, ինչը բնորոշ է ջրամբարների ջրերի համար: Այսպես. ջրում պարունակվող օրգանական և անօրգանական վերականգնիչների ընդհանուր չափանիշ համարվող օքսիդացման տվյալների նվազում դիտվել է գարուն, ամառ, աշուն սեզոնափոխությամբ: Նույնպիսի օրինաչափություն կա լուծված թթվածնի դեպքում, որի կոնցենտրացիան ջրում կախված է մի շարք բնական գործոններից: Պղտորության թույլատրելի սահմանին մոտեցող ցուցանիշներ արձանագրվել են գարնանային հալոցքների ժամանակ:

Այսպիսով, ընդհանրական եզրակացությունը Մայմեխ ջրամբարի ջրի որակական ցուցանիշների մասին հետևյալն է. դրանք բավարարում են առողջ և անվտանգ խմելու ջրի որակին ներկայացվող պահանջներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Львович А. И., Вода и жизнь, Москва, 1986.
2. Соколов А. А., Исследование водных ресурсов и водного баланса земного шара, Москва, 1981.
3. Авакян А. Б., Современные проблемы создания комплексного использования и исследования водохранилищ, Водные ресурсы, 1982.
4. Սանիտարական կանոններ և նորմեր (ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների)՝ հաստատված ՀՀ առողջապահության և արդարադատության նախարարությունների կողմից, 2002:
5. Вода питьевая. Методы анализа. Издательство стандартов, 1976.

Анализ качественных показателей питьевой воды Маймехского водоема

Бабаян Сируш
Биолого-химический факультет, «Химия»,
руководитель магистерской диссертации –
к.х.н., доцент А. Ханзадян

Резюме

Ключевые слова: *вода, водоснабжение, подземные и надземные воды, санитарно-защитные зоны, жесткость воды, химический состав, органолептические показатели*

Проведен анализ качественных показателей воды Маймехского водоема для выяснения соответствия требованиям, которые предъявляются хозяйственно-питьевым водам, подаваемым населению.

Посредством анализа данных общих показателей качества воды выяснено, что, хотя вода Маймехского водоема посезонно подвергается некоторым изменениям, тем не менее по качественным показателям она пригодна для обеспечения населения здоровой и безопасной водой.

The Analysis of Indexes of Quality of Water of Storage Pool of Maymekh

Babayan Sirush
Faculty of Biology and Chemistry, Chemistry
Academic Supervisor: H. Khanzadyan,
Ph. D in Chemistry, Associate Professor

Summary

Key words: *water, water supply, underground and overground water, sanitary protection zones, the hardness of water, chemical composition, organoleptic properties*

The analysis of indexes of quality of water of storage pool of Maymekh was conducted, for that, what to find out, whether it corresponds to the requirements presented to water intended for drinkable and economic needs. Coming from data of determination of general indexes of quality of water organoleptic properties and chemical composition, it turned out that water of storage pool of Maymekh, although, is exposed to some changes depending on season, is however suitable for providing of population healthy and safe water.

Տարրերի և մոլեկուլների կառուցվածքում վալենտական կապերի և ատոմական օրբիտալների գծային համակցության մեթոդների համեմատական վերլուծություն

Բախչինյան Մարիամ
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ, «Քիմիա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ք.գ.թ., դոցենտ Ա. Սահակյան

Հանգուցային բառեր. *էլեկտրոններ, ատոմ, մոլեկուլ, քիմիական կապ, ատոմային օրբիտալ, մոլեկուլային օրբիտալ*

Բնության մեջ քիմիական տարրերի միայն փոքր մասն է գտնվում մեկուսացված ատոմական վիճակում, դրանք «ազնիվ» կամ իներտ գազերն են: Մնացած տարրերի ատոմներն առաջացնում են բարդ համակարգեր՝ մոլեկուլներ, ասոցիատներ և բյուրեղներ, որոնք ունեն ավելի կայուն էլեկտրոնային կառուցվածք, քան առանձին բաղադրիչ ատոմները: Ատոմների միջև գոյություն ունեցող քիմիական ուժերի բնույթը երկար ժամանակ մնում էր անհայտ: Ներկայումս հայտնի է, որ ցանկացած քիմիական կապ առաջանում է ատոմների արտաքին էլեկտրոնային թաղանթում գտնվող էլեկտրոնների մասնակցությամբ, այսինքն կապի բնույթը էլեկտրական է և որոշվում է էլեկտրոնների շարժման օրինաչափություններով: Մոլեկուլի առաջացման հետևանքով փոխվում է ատոմների հատկապես արտաքին շերտերի էլեկտրոնների շարժման բնույթը: Քիմիական կապի ժամանակակից տեսությունը կառուցվում է ատոմի քվանտամեխանիկական տեսության հիման վրա ու ձգտում է բացատրել մոլեկուլների հատկությունները՝ ելնելով ատոմների հատկություններից:

Բնութագրել քիմիական կապը նշանակում է նկարագրել մոլեկուլում էլեկտրոնային խտության բաշխումը: Քիմիական կապը ձևավորվում է ատոմների փոխազդեցության արդյունքում, որն ուղեկցվում է էներգիայի անջատումով: Այդ էներգիան կազմում է 40-ից մինչև 1000 կՋ/մոլ: Էներգիայի այդպիսի լայն միջակայքը պայմանավորվում է քիմիական կապերի տեսակներով, որոնք ներկայումս դասակարգվում են որպես կովալենտային, իոնային, ջրածնային և մետաղական կապեր [4, 14-16]:

Ատոմի կառուցվածքը քննարկելիս դիտարկվել է Շրեդինգերի հավասարումը և դրա կիրառումն ատոմում՝ էլեկտրոնների դինամիկ վարքի նկարագրման համար: Ինչպես գիտենք այդ հավասարման ճշգրիտ մաթեմատիկական լուծումը կարող է ստացվել միայն ջրածնանման ատոմների համար [1, 226]: Մոլեկուլում էլեկտրոնի վարքի նկարագրման հիմնախնդիրը մնում է մինչև վերջ չլուծված, քանի որ անհնար է ստանալ ալիքային հավասարման ճշգրիտ լուծումներ, եթե համակարգը կազմված է ավելի քան մեկ էլեկտրոնից և մեկ պրոտոնից: Բորն-Օպենհեյմերի մոտավորության կիրառումը նույնպես հիմնախնդրին վերջնական լուծում չի տալիս: Խնդիրն այն է, որ ստացվեն մոլեկուլային ալիքային ֆունկցիաներ (Ψմոլ), որոնք կնկարագրեն էլեկտրոնների վարքը մոլեկուլներում: Հայտնի է խնդրի լուծման՝ մոլեկուլային ալիքային ֆունկցիաները գտնելու, երկու եղանակ՝ վալենտային կապերի (ՎԿ) տեսությունը և մոլեկուլային օրբիտալների մեթոդը (ՄՕ), որոնք հիմնված են տարբեր սկզբնական ենթադրությունների վրա և տար-

բերվում են ալիքային ֆունկցիայի ընտրությամբ, բայց սկզբունքորեն փոխլրացնում են միմյանց:

ՎԿ-մեթոդը: Այս մեթոդի հիմնադիրներն են Հայտլերը և Լոնդոնը, որոնք, օգտագործելով Լյուիսի կողմից առաջարկված էլեկտրոնային զույգերի միջոցով կովալենտ կապի առաջացման մեխանիզմը, բացահայտեցին ջրածնի մոլեկուլում քիմիական կապի քվանտամեխանիկական բնույթը: Հետագայում այդ մեթոդը զարգացվեց Պոլինգի, Սլեյտերի և ուրիշների կողմից:

Մեթոդի էությունը հետևյալն է.

- Կովալենտ կապն առաջանում է էլեկտրոնային զույգերի միջոցով՝ հակադարձ սպիններով երկու էլեկտրոններով, որոնցից յուրաքանչյուրը, նախքան կապի առաջացումը, պատկանում է տարբեր ատոմի (դոնոր-ակցեպտորային կապի դեպքում էլեկտրոնային զույգը պատկանում է ատոմներից մեկին՝ դոնորին):
- Մոլեկուլներում միջուկների միջև էլեկտրոնային խտության մեծացումը բացատրվում է հարևան ատոմների էլեկտրոնային ամպերի վերածածկմամբ:
- Ատոմների միջև քիմիական կապն այնքան ավելի ամուր է, որքան ավելի շատ են վերածածկվում էլեկտրոնային ամպերը: Այդ առումով նախընտրելի են հիբրիդ օրբիտալները:

Մոլեկուլային օրբիտալների մեթոդը (ՄՕ-մեթոդը) առաջարկվել և զարգացվել է Մալիկենի, Հունդի, Հերցբերգի, Հյուկելի և ուրիշների կողմից:

ՄՕ մեթոդի հիմնական սկզբունքներն են.

- Մոլեկուլը դիտվում է որպես միջուկների և էլեկտրոնների համակցություն, որտեղ յուրաքանչյուր էլեկտրոն շարժվում է մյուս էլեկտրոնների և բոլոր միջուկների դաշտում:
- էլեկտրոնի վիճակը մոլեկուլում նկարագրվում է ալիքային ֆունկցիայով, որը բնութագրվում է քվանտային թվերի հավաքածուով: Այդ ֆունկցիան անվանվում է մոլեկուլային օրբիտալ (ՄՕ): Ի տարբերություն միակենտրոն ԱՕ (էլեկտրոնը մեկ միջուկի դաշտում), ՄՕ ընդհանուր դեպքում բազմակենտրոն է: Ալիքային ֆունկիայի մոդուլի քառակուսին $|\psi|^2$ մոլեկուլում որոշում է էլեկտրոնի գտնվելու հավանականության խտությունը: Յուրաքանչյուր մոլեկուլային օրբիտալի համապատասխանում է որոշակի էներգիա:
- էլեկտրոններով զբաղեցված ՄՕ համախումբն անվանվում է մոլեկուլի էլեկտրոնային կոնֆիգուրացիա: Այն կառուցվում է ատոմի համար ընդունված հիմնարար դրույթների համաձայն.

1. նվազագույն էներգիայի սկզբունքը,
2. Հունդի կանոնը,
3. Պաուլիի սկզբունքը [3, 102]:

Նկարագրել մոլեկուլը ՄՕ տեսությամբ, նշանակում է որոշել օրբիտալների տեսակը, դրանց էներգիան և էլեկտրոնների բաշխումը ըստ օրբիտալների: Քանի որ մոլեկուլային օրբիտալները բազմակենտրոն են, ապա պարզագույն մոտեցմամբ դրանք կարելի է ներկայացնել որպես ատոմային օրբիտալների գծային համակցություն՝ գումար և տարբերություն: Դա մոլեկուլի նկարագրման համար

ամենատարածված մեթոդներից մեկն է: Այսպես, եթե երկատոմ մոլեկուլի ատոմային օրբիտալները նշանակենք Ψ_A և Ψ_B, ապա մոլեկուլի համար կունենանք հետևյալ ալիքային ֆունկցիաները.

$$\Psi + = C_1\Psi_A + C_2\Psi_B$$
$$\Psi - = C_3\Psi_A - C_4\Psi_B$$

C_1, C_2, C_3, C_4գործակիցները ցույց են տալիս համապատասխան ատոմային օրբիտալների մասնակցության բաժինը ՄՕ առաջանալիս: Դիտարկենք երկկենտրոն ՄՕ ձևը և հարաբերական էներգիան, որոնք առաջանում են երկու $1s^1$ օրբիտալներից (օրինակ՝ ջրածնի մոլեկուլում): Միջմիջուկային տիրույթում ելային ԱՕ-ների վրածածկ է կատարվում և, եթե ԱՕ-ների ալիքային ֆունկցիաների նշանները վրածածկի մարզում միատեսակ են, ապա դա համապատասխանում է դրական վրածածկին՝ ԱՕ-ներիգումարում: ԱՕ-ների տարբեր նշանների դեպքում տեղի է ունենում բացասական վրածածկ՝ ԱՕ-ների հանում: ԱՕ-ները գումարելիս միջմիջուկային տիրույթում առաջանում է էլեկտրոնային մեծ խտությամբ՝ երկկենտրոն ՄՕ: Այդպիսի ՄՕ էներգիապես ավելի շահավետ է, քան սկզբնական ԱՕ-ները ևանվանվում է կապող ՄՕ (նշանակվում է σ կապող$1s$):

ԱՕ-ները հանելիս միջմիջուկային տիրույթում առաջանում է ավելի փոքր էլեկտրոնային խտությամբ երկկենտրոն ՄՕ, քան սկզբնական ատոմներում է: Դա էներգիապես շահավետ չէ, և անվանվում է փխրեցնող (նշանակվում է σ փխրեցնող $1s$):

Ատոմային օրբիտալների գծային համակցության մեթոդով ՄՕ կառուցելիս պահպանում են հետևյալ կանոնները.

- Համակցվող ԱՕ-ները էներգիայով պետք է մոտ լինեն: Այդ դրույթն ակնհայտ է, քանի որ էներգիայի մեծ տարբերության դեպքում էլեկտրոնը մի ԱՕ-ից կանցնի մյուսին և ՄՕ չի առաջանա:
- ՄՕ առաջացնող ԱՕ-ները պետք է հնարավորին չափով լրիվ վրածածկվեն: Այդ դեպքում միջուկները դիրքորոշվում են այնպես, որ վրածածկը լինի առավելագույնը [4, 25-33]: Սովորաբար ատոմային օրբիտալից ՄՕ առաջացումը կարելի է պատկերել էներգետիկ դիագրամի ձևով, որում ուղղահայաց առանցքի վրա նշանակվում է օրբիտալների էներգիան.



Նկ. 1. ԱՕ և ՄՕ էներգիական մակարդակների դիագրամը

Ջրածնի մոլեկուլում երկու էլեկտրոն է առկա, որոնք նվազագույն էներգիայի և Պաուլի սկզբունքներով զբաղեցնում են $\sigma_{կապող}1s$ օրբիտալը՝ հակազուգահեռ սպիններով.

$$H_2[\,(\sigma_{կապող}1s)^2\,]$$

H_2^+ իոնը կազմված է երկու պրոտոնից և մեկ էլեկտրոնից: Ակնհայտ է, որ մոլեկուլային իոնի միակ էլեկտրոնը կզբաղեցնի ավելի շահավետ $\sigma_{կապող}1s$ օրբիտալը՝

$$H_2^+[\,(\sigma_{կապող}1s)^1\,]$$

Հելիումի մոլեկուլային իոնի He_2^+ երեք էլեկտրոններից երկուսն զբաղեցնում են կապող, իսկ մեկը՝ փխրեցնող օրբիտալը.

$$He_2^+[\,(\sigma_{կապող}\,1s)^2(\sigma_{փխրեցնող}1s)^1]$$

Հելիումի մոլեկուլի դեպքում համակարգում առկա 4 էլեկտրոններից երկուսն զբաղեցնում են կապող, իսկ երկուսը՝ փխրեցնող օրբիտալները.

$$He_2[\,(\sigma_{կապող}\,1s)^2(\sigma_{փխրեցնող}1s)^2]$$

Մոլեկուլային օրբիտալների տեսության համաձայն՝ կապի կարգը կարելի է որոշել որպես կապող ու փըխրեցնող էլեկտրոնների քանակի կիսատարբերություն.

$$Կապի\ կարգը = \frac{\Sigma_{\text{n}\,կապող} - \Sigma_{n\,փխրեցնող}}{2}$$

Որքան մեծ է ԿԿ-ն, այնքան ամուր է քիմիական կապը (փոքր է կապի երկարությունը և մեծ է կապի էներգիան):

Եթե ԿԿ=0, ապա քիմիական կապ չի առաջանում [2]:

H_2^{-2} և He_2 միացությունները հայտնի չեն (ԿԿ=0): H_2^+, H_2^-, He_2^+մասնիկներ իրապես գոյություն ունեն (ԿԿ≠0):

Երկրորդ պարբերության հոմոմիջուկ երկատոմ մոլեկուլների համար ՄՕ լրացման կարգը որոշվում է $2s$ և $2p$ ԱՕ էներգիաների տարբերությամբ: Նշանակալից տարբերության դեպքում, ինչը բնութագրական է պարբերության վերջին տարրերին՝ թթվածնից սկսած, ՄՕ ըստ էներգիայի, դասավորվում են հետևյալ ձևով.

$$\sigma կապող 2s < \sigma փխրեցնող\,2s < \sigma կապող 2p_x < \pi կապող 2p_y = \pi կապող 2p_z < \pi փխրեցնող 2p_y = \pi փխրեցնող 2p_z < \sigma փխրեցնող 2p_x:$$



Նկ. 2. էլեկտրոնների բաշխումն ըստ ՄՕ մեթոդի

Նշված երկու մեթոդներն ունեն իրենց և՛ առավելությունները, և՛ թերությունները: ՎԿ-մեթոդը պատմականորեն սկզբից է մշակվել և իր էությամբ ավելի մոտ է քիմիական կապի առաջացման դասական մոտեցումներին (էլեկտրոնային զույգերի միջոցով), որը ավելի հարազատ է քիմիկոսներին: Մեթոդը հստակ կերպով է բացատրում σ և π կապերի առաջացումը էլեկտրոնային վերածածկման միջոցով: Ալիքային ֆունկցիան, որը նկարագրում է կապ առաջացնող էլեկտրոնների վիճակը, անվանվում է տեղայնացված օրբիտալ (ՏՕ): Նշենք, որ տեղայնացված օրբիտալը նկարագրող էլեկտրոնները, Պաուլի սկզբունքին համապատասխան, պետք է ունենան հակազուգահեռ սպիններ, այսինքն ՎԿՄ բոլոր սպինները զույգված են, և բոլոր մոլեկուլները պետք է լինեն դիամագնետիկներ: Հետևաբար վալենտային կապերի մեթոդը սկզբունքորեն չի կարող բացատրել մոլեկուլների մագնիսական հատկությունները: ՎԿ մեթոդի շրջանակներում անհասկանալի է թթվածնի պարամագնիսականությունը: Մագնիսի կողմից ձգվելու ընդունակությունը վկայում է մոլեկուլում չզույգված էլեկտրոնների առկայության մասին: Նշանակում է $O = O$ կառուցվածքը թթվածնի մոլեկուլի բավարար նկարագրությունը չէ: Ըստ վալենտային կապերի մեթոդի՝ թթվածնի մոլեկուլը կենտ էլեկտրոններ չունի, հետևաբար պետք է որ օժտված լիներ դիամագնիսական հատկություններով, սակայն հեղուկ թթվածինը ձգվում է մագնիսի կողմից: Դա փորձնական ապացույց է, ընդսմին՝ անառարկելի: Այս փաստն, իհարկե, միակը չէ: ՄՕ տեսության համաձայն՝ թթվածնի ատոմների միջև առկա է կրկնակի կապ, իսկ բուն մոլեկուլը երկռադիկալ է՝ կենտ էլեկտրոնների զուգահեռ սպիններով, հետևաբար և օժտված է պարամագնիսականությամբ: Առավելագույն մուլտիպլետության սկզբունքին համապատասխան՝ երկու էլեկտրոններն զբաղեցնում են «քանդող» π^* օրբիտալները, և թթվածնի մոլեկուլում հայտնվում են կենտ էլեկտրոն-

ներ, որոնք էլ մոլեկուլային թթվածնի պարամագնիսականության պատճառն են:

Այնուամենայնիվ, տեղայնացված կապերի սկզբունքն ունի մի շարք կարևոր առավելություններ, որոնցից մեկը դրա ակներևությունն է: ՎԿՄ բավականին լավ կանխատեսում է ատոմների վալենտային հնարավորությունները և առաջացած մոլեկուլների տարածական կառուցվածքը: Վերջինս պայմանավորված է ԱՕ-ի հիբրիդացմամբ, որով բացատրվում է տարբեր էներգիական վիճակում գտնվող ԱՕ հաշվին առաջացած երկկենտրոն, երկէլեկտրոն քիմիական կապերի նույն էներգիայով օժտված լինելու փաստը:

Սակայն ՎԿ-մեթոդը չի կարողանում բացատրել միաէլեկտրոն կապը H_2^+ մասնիկում, չի բացատրում նաև O_2^+, F_2^+ և այլ իոնների գոյությունը, որոնք հստակ կերպով բացատրվում են ՄՕ-մեթոդով: Եթե ելնենք այն դրույթից, որ տարրի վալենտականությունը հավասար է արտաքին էլեկտրոնային թաղանթում առկա չզույգված էլեկտրոնների թվին, ապա իներտ գազերը չպետք է միացություններ առաջացնեին: Սակայն ներկայումս հայտնի են Xe, Kr, Rn իներտ գազերի ավելի քան 100 միացություն թթվածնի և հալոգենների հետ: ՎԿ մեթոդը չի բացատրում նաև էլեկտրոնադեֆիցիտ միացությունների, օրինակ՝ B_2H_6 միացության գոյության փաստը [4; 3, 125-128]:

Աշխատանքի նպատակն է գրականության մեջ հայտնի տվյալներից կատարել համեմատական վերլուծություն վալենտական կապերի և մոլեկուլային օրբիտալների մեթոդների միջև: Վալենտային կապերի (ՎԿ) տեսությունը և մոլեկուլային օրբիտալների մեթոդը (ՄՕ) հիմնված են տարբեր սկզբնական ենթադրությունների վրա և տարբերվում են ալիքային ֆունկցիայի ընտրությամբ, բայց սկզբունքորեն փոխլրացնում են միմյանց:

Այսպիսով, տեսական քիմիայում բացարձակ առաջնությունը տրվում է մոլեկուլային օրբիտալների (ՄՕ) տեսությանը: ՄՕ-ների ԱՕԳՀ մեթոդի սկզբունքները կիրառվում են նաև առավել բարդատոմների միջև իրագործվող քիմիական կապերիբնույթն ու էությունը քննարկելու դեպքում: Ընդ որում, մի շարք նյութերի կառուցվածքի և առանձին հատկանիշների յուրահատկությունները տվյալ մեթոդը շատ ավելի հաջողությամբ է բացատրում, քան ՎԿ մոթոդը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատուրյան Կ. Ե., Տեսական քիմիա, 1991:
2. Հասրաթյան Գ. Ս., Քիմիայի մի քանի տեսական հարցերի ուսուցման մեթոդիկա, Երևան, 1982թ. (43, 112-121):
3. Մխիթարյան Հ. Հ., Ընդհանուր և անօրգանական քիմիա, Երևան, 2014:
4. Սահակյան Լ. Ա., Ղազարյան Ռ. Կ., Սահակյան Ն. Վ. և ուրիշ., Օրգանական քիմիա. Հետերոցիկլիկ միացություններ, Երևանի, 2008:

Сравнительный анализ методов валентных связей и линейной комбинации атомных орбиталей в строении элементов и молекул

Бахчинян Мариам
Биолого-химический факультет, «Химия»,
руководитель магистерской диссертации –
к.х.н., доцент А. Саакян

Резюме

Ключевые слова: *электроны, атом, молекула, химическая связь, атомная орбиталь, молекулярная орбиталь*

Целью работы является проведение сравнительного анализа известных в литературе данных, касающихся методов валентных связей и молекулярных орбиталей. Теория валентных связей (ВС) и метод молекулярных орбиталей (МО) основаны на разных начальных предположениях и отличаются выбором волновой функции, однако принципиально взаимодополняют друг друга.

На основе проведенного анализа можно утверждать, что в теоретической химии абсолютное преимущество дается теории молекулярных орбиталей (МО). Принципы метода ЛКАО МО применяются также при обсуждении природы и сущности реализующихся среди более сложных атомов химических связей. Причем данный метод намного лучше объясняет особенности строения и отдельных качеств ряда веществ, чем метод ВС.

The Comparative Analysis of the Methods of Valence Bonds and Linear Combination of Atomic Orbitals in the Structure of Elements and Molecules

Bakhchinyan Mariam
Faculty of Biology and Chemistry, Chemistry
Academic Supervisor: A. Sahakyan,
Ph. D in Chemistry, Associate Professor

Summary

Key words: *electrons, atom, molecule, chemical bond, atomic orbital, molecular orbital*

The purpose of the work is to make a comparative analysis of the data known in the literature between valence bonds and molecular orbital methods. The theory of valence bonds (VB) and the method of molecular orbitals (MO) are based on different initial supposition and are different by the choice of wave function, but in principle they complement each other.

Thus, in theoretical chemistry the absolute priority is given to the theory of the molecular orbital (MO). The principles of the MO method are also used during discussing the nature and essence of the chemical bonds between more complex atoms. Moreover, the singularity of the structure and specific features of various substances are explained by this method more successfully, than by the VB method.

Լիթիումի նիոբատի ($LiNbO_3$) միաբյուրեղների սինթեզը և օպտիկական անհամասեռությունների ուսումնասիրությունը՝ կախված աճի պայմաններից

Մադոյան Գայանե
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ, «Քիմիա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ֆ.-մ.գ.թ., դոցենտ Մ. Թովմասյան

Հանգուցային բառեր. *միաբյուրեղ, սինթեզ, Չոխրալսկու մեթոդ, օպտիկական սպեկտր, հալույթ, թափանցելիություն*

Լիթիումի նիոբատի ($LiNbO_3$) սեգնետոէլեկտրական բյուրեղներն իրենց հատկությունների հանրույթով և գիտությունում ու տեխնիկայում լայն կիրառության հնարավորությամբ յուրահատուկ միաբյուրեղներ են: Դրանք օժտված են մի շարք առանձնահատուկ էլեկտրական, օպտիկական և ակուստիկ բնութագրերով: Այդպիսի հատկությունների շնորհիվ էլ դրանք լայնորեն օգտագործվում են օպտիկական, էլեկտրաօպտիկական և ակուստաօպտիկական սարքերում որպես օպտիկական դիապազոնի մոդուլյատորներ, օպտիկա- և ակուստաէլեկտրական փոխարկիչներ, զտիչներ և այլն [5; 6, 1-7; 7, 69-82, 8; 231-235]:

Ոչ գծային օպտիկայում կիրառվող միաբյուրեղները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին. նրանք պետք է օժտված լինեն փոխազդող լույսի ալիքային տիրույթում թափանցիկությամբ և նրանց համար պետք է բավարարվի ֆազային համաձայնեցվածության պայմանը, այսինքն բյուրեղները պետք է օժտված լինեն բավականին բարձր լույսի բեկումով և բարձր օպտիկական որակներով:

Այնպիսի բնագավառների զարգացումը, ինչպիսիք են քվանտային էլեկտրոնիկան, օպտոէլեկտրոնիկան, նյութերի և բժշկական ախտորոշման հետազոտման ակուստիկ մեթոդները ավելի ու ավելի խիստ պահանջներ են դնում նոր սինթեզվող և արդեն հայտնի նյութերի վրա, որոնք էլ խթանում են նոր մեթոդներ և միջոցներ գտնելու այդպիսի բյուրեղների օպտիկական, էլեկտրական և ակուստիկ հատկությունների կայունացման համար: Այդ բյուրեղների գործնական կիրառման մեծ հնարավորություններն էլ պայմանավորում են հետաքրքրությունը դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունների ուսումնասիրության հանդեպ:

Չնայած այդ բյուրեղների տարբեր մեթոդներով ինտենսիվ հետազոտություններին, դրանց շատ հատկություններ մինչև այժմ ուսումնասիրված են ոչ բավարար: Առավել սկզբունքային հարցերից մեկը հանդիսանում է լիթիումի նիոբատի օպտիկական հատկությունների անկայունության խնդիրը 300-400 K ջերմաստիճանային տիրույթում: Առկա են մի շարք անորոշություններ կապված ներառուկների ազդեցությամբ նիոբատ լիթիումի միաբյուրեղների պիրոէլեկտրական հատկությունների և բյուրեղի կառուցվածքի առանձնահատկությունների վրա նրա միաբյուրեղական վիճակում գտնվելու ջերմաստիճանային ողջ տիրույթում:

Լիթիումի նիոբատի միաբյուրեղների հիմքի վրա աշխատող օպտիկական սարքավորումների աշխատանքի կարևոր բնութագիրեր են էլեկտրաօպտիկական, ոչ գծային-օպտիկական գործակիցները և օպտիկական վնասվածքների հանդեպ բարձր կայունությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ պարամետրերը խիստ կախված են ինչպես կողմնակի նյութերի ներառուկների առկայությունից, այնպես էլ միաբյուրեղների քանակաչափական բաղադրությունից: Այդ պարամետրերի բարելավում դիտվում է, երբ բյուրեղական վանդակացանց են մտցվում սահմանափակ քանակությամբ երկվալենտ և եռավալենտ հավելուկներ ($Zn^{2+}, Mg^{2+}, Gd^{3+}$ և B^{3+}): Ընդ որում օպտիկական համասեռության

վրա էական ազդեցություն է թողնում նաև հավելուկի մտցրման եղանակը [3, 55-57; 4, 319-321]: Լիթիումի նիոբատի օպտիկապես բարձրորակ միաբյուրեղներ հալույթից աճեցվել են բորի 0,08 և 0,12 կշռ.% կոնցենտրացիաներով [3, 58]:

Լիթիումի նիոբատի միաբյուրեղներ կարելի է ստանալ բյուրեղացման մի քանի եղանակներով՝ լուծույթում հալույթից, հալույթից Բրիջմեն-Ստոկբարգերի և Չոխրալսկու մեթոդներով [2, 33-39]: Սակայն բավարար մաքրության և անհրաժեշտ չափերի միաբյուրեղների ստացման առավել արդյունավետ մեթոդ է Չոխրալսկու մեթոդը: Ստացման այս կամ այն մեթոդի կիրառումը պայմանավորված է միաբյուրեղների կիրառման բնագավառից և դրանով պայմանավորված նրանց որակական բնութագրերին ներկայացվող պահանջներից:

Մեր կողմից հալույթից արտաձգման եղանակով՝ Չոխրալսկու մեթոդով [1], քանակաչափական բաղադրությամբ, 70 մմ տրամագծով և գլանային մասի 90 մմ երկարությամբ, «001» բյուրեղագրական ուղղությամբ լիթիումի նիոբատի միաբյուրեղները աճեցվել են «Кристалл – 3М» բյուրեղակայանքի (նկ. 1) վրա օդի միջավայրում: Միաբյուրեղների աճի օպտիմալ արագությունը կազմել է 2,5 մմ/ժամ, իսկ պտույտի արագությունը 15 պտույտ/րոպե: Ջերմային լարվածությունները հանելու համար աճեցված միաբյուրեղները 24 ժամ ենթարկվել են ջերմային մշակման $T = 1240\ ^{o}C$ ջերմաստիճանի դեպքում «KS/6000» բարձրջերմաստիճանային թրծատուփային վառարանում: Աճեցված բյուրեղների ընդհանուր տեսքը տրված է նկար 2-ում:

Նկար 1. Չոխրալսկու մեթոդով միաբյուրեղների աճեցման կայանքի ընդհանուր տեսքը



Նկար 2. Լիթիումի նիոբատի միաբյուրեղների ընդհանուր տեսքը

Բովախառնուրդը ստացել ենք պինդֆազային սինթեզի մեթոդով «ՕՀԿ» տեսակի Li_2CO_3: Nb_2O_5 խառնուրդից: Խառնուրդի համասեռությունը ապահովելու համար այն պատրաստվել է մեթիլ սպիրտում երկարատև և խնամքով խառնելու միջոցով, որից հետո, թրծատուփային վառարանում, $T = 200\ ^oC$ ջերմաստիճանում, 2 ժամ ենթարկվել է նախնական ջերմային մշակման: Պինդֆազային սինթեզի օպտիմալ ջերմաստիճանն ընտրել ենք Q-1500D դերիվատոգրաֆով քիմիական ռեակցիայի ուսումնասիրման միջոցով: Սինթեզն իրականացրել ենք «KS/600» վառարանում 4 ժամ պահելով 1250 ^{o}C ջերմաստիճանային պայմաններում:

Հալույթից բարդ օքսիդային նյութերի միաբյուրեղների աճեցման ժամանակ, կախված բաղադրիչների գոլորշացման աստիճանի տարբերությունից, կարող են առաջանալ տարատեսակ քանակաչափական խախտումներ: Ուսումնասիրվող համակարգում առավել հեշտ գոլորշացող բաղադրիչը լիթիումն է, հետևաբար պետք է ենթադրել, որ միաբյուրեղների աճի ընթացքում կարող է առաջանալ լիթիումի պակաս: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ կատարել ենք քանակաչափական ճշտումներ և միաբյուրեղների աճեցման ժամանակ հալույթին ավելացրել ենք 0,05-0,35 կշռ.% $LiOH$:

Սինթեզված լիթիումի նիոբատի $(LiNbO_3)$ միաբյուրեղներից պատրաստել ենք 1 մմ հաստությամբ լավ փայլեցրած թիթեղյա նմուշներ և ուսումնասիրել օպտիկական թափանցելիությունը $(T_\lambda, \%)$ սպեկտրի 300-800 նմ սպեկտրային տիրույթում: Օպտիկական սպեկտրները գրանցել ենք «SPECORD–UV–VIZ» սպեկտրաֆոտոմետրի միջոցով:

Նկ. 3-ում բերված են աճեցված միաբյուրեղների նմուշների օպտիկական թափանցելիության սպեկտրները 300-800 նմ սպեկտրային տիրույթում:

Ինչպես երևում է թափանցելիության սպեկտրներից, սպեկտրի երկարալիքային տիրույթում ($\lambda_{max} = 500$ *նմ*), առկա է կլանման համեմատաբար թույլ շերտ, որն ըստ երևույթին պայմանավորված է քանակաչափական խախտումների հետևանքով առաջացած կառուցվածքային թերություններով:



Նկար 3. $LiNbO_3$-ի միաբյուրեղների օպտիկական թափանցելիության սպեկտրները. 1- առանց հավելուկի, 2- 0,15 կշռ.% LiOH, 3- 0,20 կշռ.% LiOH

Սպեկտրների համադրումը ցույց է տալիս, որ օպտիկական կլանման այդ շերտի ինտենսիվությունը $LiOH$-ի քանակի ավելացման հետ փոքրանում է հասնելով նվազագույնի 0,15-0,20 կշռ.%-ի դեպքում, որից հետո թափանցելիության էական փոփոխություն չի դիտվում (նկ. 4): Միևնույն ժամանակ դիտվում է օպտիկական թափանցելիության նշանակալից ընդհանուր մեծացում առանց հավելուկի նմուշի համեմատ:



Նկար 4. $LiNbO_3$-ի միաբյուրեղների օպտիկական թափանցելիության կախվածությունը LiOH-ի ավելցուկային պարունակությունից ($\lambda_{max} = 500$ նմ)

Հաշվի առնելով, որ հալույթից բարդ օքսիդների բյուրեղացման ժամանակ հնարավոր է բաղադրիչներից մեկի պակասումը (առավել ակտիվ գոլորշացման հետևանքով), որը բերում է բաղադրության քանակաչափական խախտումների և միաբյուրեղների կառուցվածքային թերությունների, որոնք վատացնում են միա-

բյուրեղների օպտիկական մի շարք բնութագրեր, և նկատի ունենալով, որ մեր դեպքում կառուցվածքային թերությունները կարող են պայմանավորված լինել լիթիումի հնարավոր պակասով, միաբյուրեղներն աճեցրել ենք հալույթին լիթիումի որոշակի չափաբաժիններ (0,05 – 0,35 կշռ.% սահմաններում) $LiOH$-ի ձևով ավելացնելով և ուսումնասիրել ենք դրանց նմուշների օպտիկական կլանման (թափանցելիության) սպեկտրները սպեկտրի տեսանելի տիրույթում (300-800 նմ):

Ստացված արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Չոխրալսկու մեթոդով աճեցված լիթիումի նիոբատի բարելավված օպտիկական բնութագրերով միաբյուրեղներ կարելի է ստանալ հալույթին ավելացվող լիթիումի հավելուկի կոնցենտրացիայի փոփոխման և դրան համապատասխան օպտիմալ աճի արագության ընտրության միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Александров О.А., Сорокин В.С., Технология полупроводниковых материалов. С-Петербург, 2003, 182 с.
2. Кузьминов Ю.С. Электрооптический и нелинейнооптический кристалл ниобата лития. М., «Наука», 1987, 264 с.
3. Палатников М.Н., Сидоров Н.В., Калинников В.Т. Технология управляемого синтеза монокристаллическихи керамических материалов на основе ниобатов-танталатов щелочных металлов. Цветные металлы. 2000.№ 10, с. 54-59.
4. Палатников М.Н. и др. Влияние способа приготовления твердых прекурсоров Nb_2O_5:Mg на характеристики полученных на их основе кристаллов $LiNbO_3$:Mg. Журнал Неорганической химии. 2014. Т. 59, № 3, с. 318-322.
5. Gillardi, G. Lithium niobate optical modulator /G. Gillardi, P. Milanese, S. Pensa// US Patent Nº 7460739B2, 2008.
6. Tulli, D. Room temperature direct bonding of $LiNbO_3$crystal layers and its application to high-voltage optical sensing. J. Micromech. Microeng, 2011, v.21, p. 1-7.
7. Wooten, Ed L. Review of Lithium Niobate Modulators for Fiber-Optic Communacations Systems / Ed L. Wooten, K.M. Kissa, A. Yi-Yan, E. J. Murphy, D. A. Lafaw, P. F. Hallemeier, D. Maack, D. V. Attanasio, D.J. Fritz, G. J. McBrien, And D.E. Bossi //IEEE JOURNAL OF SELECTED TOPICS IN QUANTUM ELECTRONICS, 2000, v. 6, Nº 1, p. 69-82.
8. Yudistira, D. Surface acoustic Wave generation in ZX-cut $LiNbO_3$ superlattices using coplanar electrodes. Applied Physics Letters, 2009, v. 95, p. 231-235.

Синтез монокристаллов ниобата лития ($\mathbf{LiNbO_3}$) и исследование оптических неоднородностей, связанных с условиями роста

Мадоян Гаяне
Биолого-химический факультет, «Химия»,
руководитель магистерской диссертации –
к. физ.-мат. н., доцент М. Товмасян

Резюме

Ключевые слова: *синтез, ниобат лития, монокристалл, оптическая прозрачность, расплав, примесь*

В работе исследована оптическая прозрачность монокристаллов ниобата лития ($LiNbO_3$) выращенного методом Чохральского, в зависимости от условий синтеза монокристаллов. Для устранения дефектов кристаллической структуры, влияющих на оптические характеристики, вызванные стехиометрическими нарушениями, монокристаллы выращивались из расплава с избыточными концентрациями 0,05-0,35 мас.% *гидроксида лития*. Показано, что монокристаллы с улучшенными оптическими характеристиками получают из расплава с избыточной концентрацией гидроксида лития 0,20-0,25 мас.% и со скоростью роста 2,5 мм/ч.

Synthesis of Lithium Niobate Single Crystals ($\mathbf{LiNbO_3}$) and Investigation of Optical Inhomogeneties Associated with Growth Conditions

Madoyan Gayane
Faculty of Biology and Chemistry, Chemistry
Academic Supervisor: M. Tovmasyan,
Ph. D in Physics and Mathematics,
Associate Professor

Summary

Key words: *synthesis, lithium niobate, single crystal, optical transparency, melt, admixture*

In this work, the optical transparency of lithium niobate ($\mathrm{LiNbO_3}$) single crystals grown by the Czochralski method was investigated depending on the conditions for the synthesis of single crystals. To eliminate defects in the crystal structure that affect the optical characteristics caused by stoichiometric disturbances, single crystals were grown from a melt with excess concentrations of 0,05-0,35 wt. % lithium hydroxide. It is shown that with improved optical characteristics single crystals are obtained from a melt with an excess concentration of lithium carbonate 0,20-0,25 wt. %, and at a growth rate of 2.5 mm/h.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

PUBLIC MANAGEMENT

Կարմիր խաչ միջազգային կազմակերպության գործունեության արդիականությունը

Ավդալյան Ալեսյա
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
Դ. Հակոբյան

Հանգուցային բառեր. *ԿԽՄԿ, գործունեություն, Միջազգային մարդասիրական իրավունք, զինված հակամարտություն, զոհ, աջակցություն*

Միջազգային հարաբերությունների կառավարումը զինված հակամարտության ժամանակ հանդիսանում է մարդասիրական ինքնուրույն ինստիտուտ, որի նպատակն է պաշտպանել զոհերին զինված հակամարտության ժամանակ: Միջազգային մարդասիրական իրավունքի ծնունդը նշանավորվեց «Կարմիր խաչ» միջազգային կազմակերպության ստեղծումով:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (այսուհետ՝ ԿԽՄԿ) անկողմնակալ, չեզոք և անկախ կազմակերպություն է, որի մարդասիրական առաքելությունն է պաշտպանել զինված ընդհարումների և բռնության այլ իրավիճակների զոհերի կյանքն ու արժանապատվությունը: Այն հումանիտար օգնություն է ցուցաբերում մարդկանց, ովքեր տուժել են հակամարտությունների և զինված բռնությունների արդյունքում, ինչպես նաև տարածում է պատերազմի ժամանակ տուժածներին պաշտպանող նորմեր: Կարմիր խաչի շարժումն իր գլխավոր նպատակն է համարում կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները, օգնել բոլորին առանց խտրականության՝ դրանով հանդերձ օժանդակելով երկրի վրա խաղաղության հաստատմանը: Այն բաղկացած է ամբողջ աշխարհում սփռված մոտ հարյուր միլիոն կամավորներից [2]:

Կազմակերպությունը ծավալում է հետևյալ գործունեությունը.

1. Պատերազմի ժամանակ հումանիտար օգնություն,
2. Կալանքի տակ գտնվող քաղաքացիական բնակչությանը և անձանց օգնության ցուցաբերում,
3. Առանձնացված ընտանիքի անդամների վերամիավորում,
4. Անհայտ կորածների որոնում,
5. Միջազգային մարդասիրական իրավունքի տարածում:

ԿԽՄԿ-ն գործունեությունն իրականացնում է 2 ուղղություններով.

1. Օպերատիվ գործունեություն՝ ցույց է տալիս օգնություն պատերազմական և այլ իրավիճակներում տուժած ազգաբնակչությանը
2. Գործունեություն՝ ուղղված միջազգային մարդասիրական իրավունքի և մարդասիրական սկզբունքի, ինչպես նաև գիտելիքների և ինֆորմացիայի տարածմանը:

Գործունեության այս ուղղություններով պայմանավորված Կարմիր խաչի գործունեությունը տարբերվում է միջազգային այլ կազմակերպությունների գործունեությունից:Այն հիմնված է միջազգային հանրային իրավունքի վրա:

Առանձնացվում է ԿԽՄԿ-ի գործունեության 3 տեսակ.

1. Պատասխան գործունեություն՝ ուղղվում է պատերազմական իրավիճակի

մեղմացմանը և կանխարգելմանը, երբ լարվածությունը նոր է սկսվում կամ արդեն սկսվել է,

2. Կարգավորիչ գործունեություն՝ ուղղվում է կյանքի պայմանների բարելավմանը և արժանապատվության վերականգնմանը թեժ գոտիներում,
3. Գործունեություն՝ ուղղված կայուն կյանքի բարելավմանը թեժ գոտիներում [1]:

Բավականին մեծ է ԿԽՄԿ-ի ցուցաբերած օգնությունը սկսած Առաջին համաշխարհային պատերազմից մինչև մեր օրերը: ԿԽՄԿ-ն Ժնևյան կոնվենցիաների մասնակից պետություններից ստացել է զինված հակամարտությունների զոհերին օգնելու մանդատ:

Ներկայումս ԿԽՄԿ-ի 16800 աշխատակիցներ ավելի քան 80 երկրներում օգնում են զինված հակամարտության և բռնության զոհ դարձած մարդկանց:

Ակտիվ գործունեություն ծավալելով Սիրիայում, Ուկրաինայում, Աֆղանստանում, Իրաքում, Իսրայելում և այլուր, ԿԽՄԿ-ն ձեռք է բերել բնակչության վստահությունը՝ բժշկական օգնությունտրամադրելով, խմելու ջրի մատչելիություն ապահովելով, ինչպես նաև տարբեր երկրների մասնագիտացված օգնության ծրագրերի կազմակերպումով:

2014թ. ԿԽՄԿ-ն ակտիվացրել է հակամարտության հետևանքով տեղահանված անձանց ցուցաբերվող օգնությունը [9]:

ԿԽՄԿ-ն փորձում է փրկել մարդկային կյանքեր՝տրամադրելով բժշկական օգնություն, առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներ և միջոցներ: Ֆիզիկական վերականգնման ոլորտում ԿԽՄԿ-ի ծառայություններն օգնում են հաշմանդամություն ունեցող մարդկանց ապրել ակտիվ կյանքով՝ ստանալ կրթություն, աշխատել, զբաղվել սպորտով:

ԿԽՄԿ-ն աջակցում է կազմակերպության անդամ երկրների առողջապահության համակարգերին, վերապատրաստում է բժշկական անձնակազմերին և այլ բուժաշխատողներին: Օգնություն է ցույց տալիս մարդկանց, ովքեր ունեցել են դժվարություններ իրենց ընտանիքներին պահելու հարցում: Դրանք ներառում են կանանց, ովքեր ստիպված են ստանձնել տան գլխավորի պաշտոնը և հաշմանդամներին:

ԿԽՄԿ-ն իր գործունեության շրջանակներում պարբերաբար այցելում է կալանավայրեր, պաշտպանում է ձերբակալվածներին, օգնում է նրանց կապ հաստատել հարազատների հետ, օգնում է վիրավորներին և հաշմանդամներին, աջակցում է իշխանության ջանքերին՝ նախորդ հակամարտությունների ժամանակ անհայտ կորածներին որոնելու հարցում: Հակամարտության երկու կողմերի խնդրանքով ԿԽՄԿ-ն որպես չեզոք միջնորդ մասնակցում է զոհված զինծառայողների մարմինների հանձնելու գործընթացին: ԿԽՄԿ-ն նաև կապ է պահպանում բոլոր հակամարտող կողմերի հետ, քննարկում է պատերազմի և միջադեպերի հետ կապված հարցեր:

ԿԽՄԿ-ն շարունակում է ջանքեր գործադրել օգնելու պատերազմող երկրների բնակչությանը բարձրացնել իրենց եկամուտները և հասնել տնտեսական կայունության:

ԿԽՄԿ-ի գործունեության հիմնական ձևերից է համարվում Միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ գիտելիքի տարածումը, իրավունքի

խախտման կանխումները և կողմերին իրենց պարտականությունների մասին հիշեցումը: Այս ամենի նպատակով ԿԽՄԿ-ն կազմակերպում է սեմինարներ բնակչության տարբեր խմբերի համար:

Հանդիսանալով Միջազգային մարդասիրական իրավունքի կատարման երաշխավոր, ԿԽՄԿ-ն շարունակաբար իրականացնում է մշտադիտարկում՝ ծագող և շարունակվող զինված հակամարտությունների շրջանակներում, վերլուծության է ենթարկում զինված հակամարտությունների փոփոխման բնույթը [3]:

ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով վերահսկում ու գնահատում է տեղահանվածների կարիքները, վերջիններիս արդյունավետ կերպով օգնություն ցուցաբերելու նպատակով:

ԿԽՄԿ-ի կողմից տարբեր երկրներին հատկացվող օգնությունը 2008թ. կազմել է.

1. Ավելի քան 15 մլն. մարդ տարբեր երկրներում ստացել են սանիտարահիգիենիկ օգնություն,
2. 2.8 մլն. մարդ ստացել են սննդի օգնություն,
3. 3.4 մլն. մարդ ստացել են անհրաժեշտ բժշկական օգնություն:

Կոմիտեի պատվիրակների կողմից կազմակերպվել է այցելություն 495 բանտարկյալների:

Իսրայելում և օկուպացված տարածքներում 2017թ. 950000 մարդ ստացել են մաքուր ջուր, 835000 մարդ՝ բժշկական օգնություն, ներառյալ ֆիզիկական և հոգեբանական վերականգնողական ծառայություններ, իսկ 40000 մարդու համար կազմակերպվել է ընտանեկան այցեր իսրայելյան բանտերում [7]:

Իսկ Ուկրաինայում 2016թ. 1380000 տոննա օգնություն ստացել են շրջանների մարդիկ, ովքեր տուժել են հակամարտության հետևանքով, 1.4 մլն մարդ ստացել են մշտական մաքուր ջուր, 15 հիվանդանոցներ, որոնք ավիրվել էին ռմբակոծության ժամանակ ստացել են ջեռուցիչներ, վերանորոգվել են տանիքները,165000 մարդ ստացել են սննդամթերք [8]:

Եթե ընդհանրական ձևով ներկայացնելու լինենք, ապա կարող ենք ասել, որ Կարմիր խաչի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր մարդու իրավունքների պաշտպանությամբ: Հումանիտար ոլորտում միջազգային հարաբերությունների զարգացման միտումները պահանջում էին սահմանել ԿԽՄԿ-ի դերը միջազգային մարդասիրական իրավունքի զարգացման և իրականացման գործում:

Կարմիր խաչի շարժումը գործում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում և իր կազմում ընդգրկում է մոտ մեկ միլիոն կամավորներ և անդամներ: Շարժումն ունի մեկ հիմնական նպատակ՝ առանց խտրականության կանխել և թեթևացնել մարդկային տառապանքները, պաշտպանել մարդկային արժանապատվությունը:

ԿԽՄԿ-ի գործունեությանը դժվար է գնահատական տալ, քանի որ նրա դերը անգնահատելի է միլիոնավոր մարդկանց կյանքերի փրկման գործում: Նա պատերազմի ժամանակ պաշտպանում է մարդկային համերաշխության գաղափարը և մարդկային արժանապատվությունը: Երկար տարիների ընթացքում ԿԽՄԿ կուտակել է յուրահատուկ փորձ, դարձել է աշխարհի խոշորագույն մարդասիրական կազմակերպությունը և կարևոր տեղ է գրավել մի շարք պետությունների հասարակական կյանքում տասնամյակներ շարունակ:

ԿԽՄԿ-ն, որը հիմնվել էր Անրի Դյունանի ջանքերի շնորհիվ և ուղղված էր մարդկային տառապանքները թեթևացնելուն, հասել է իր նպատակներին:

Ուսումնասիրելով նրա գործունեությունը, տեսնելով արդյունքները դժվար է գտնել բացթողումներ, քանի որ այնտեղ աշխատում են պրոֆեսիոնալ մարդկանց խմբեր ծավալելով գլոբալ գործունեություն՝ ընտանիքի անդամների վերամիավորում, պայքար սեռական բռնության դեմ, քաղաքացիական անձանց պաշտպանություն, բժշկական ծառայությունների անվտանգության ապահովում, առողջության ապահովում, տնտեսական անվտանգության ապահովում, բանտարկյալներին այցելություն, ազգային ընկերությունների հետ համագործակցություն և այլն:

Որպես առաջարկություն ԿԽՄԿ-ի գործունեության մեջ կարող ենք ավելացնել նաև հետևյալ կետերը, որոնք ուղղված կլինեն նրա գործունեության շրջանակների ընդլայնմանը.

- ✓ Վաղաժամ ամուսնության խոչընդոտում և պատժամիջոցների կիրառում,
- ✓ Սեռային խտրականության վերացում,
- ✓ Հետամնաց երկրներում ուսման գործընթացում աջակցության ցուցաբերում,
- ✓ Առաջավոր կազմակերպությունների ուշադրության բևեռում հետամնացության դեմ պայքարում,
- ✓ Հանցագործությունների կանխում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. https://www.icrc.org/rus/resources/documents/misc/russia-icrc-200509.html
2. http://poqrik.am/yerexanerin/inchuik/
3. https://www.icrc.org/ru,
4. https://www.icrc.org/ru/where-we-work/middle-east/yemen,
5. https://www.icrc.org/ru/where-we-work/asia-pacific/afghanistan,
6. https://www.icrc.org/rus/resources/documents/update/iraq-update-260110.html
7. https://www.icrc.org/ru/where-we-work/middle-east/israel-and-occupied-territories
8. https://www.icrc.org/ru/where-we-work/europe-central-asia/ukraine
9. https://www.icrc.org/ru/document/afganistan-izmuchennyevoynoy-afgancy-iz-za-eskalacii-nasilia-stradayut-eshche-bolshe

Актуальность деятельности Международного комитета Красного Креста

Авдалян Алеся
Историко-географический факультет,
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации – Д. Акопян

Резюме

Ключевые слова: *МККК, деятельность, Международное гуманитарное право, вооруженный конфликт, жертвы, поддержка*

В представленной статье обсуждается сущность, цель МККК, актуальность и направления осуществляемой с его стороны деятельности. Исследовались виды деятельности МККК в разных странах, проявленная поддержка и уход за людьми разных категорий и групп. Во время исследования особенное внимание уделялось численным данным проявленной помощи разным странам. Представлены предложения, направленные на расширение круга деятельности МККК.

The Modernity of the Activity of International Committee of the Red Cross

Avdalyan Alesya
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: D. Hakobyan

Summary

Key words: *ICRC, activity, international human rights, armed conflict, victim, support*

In this represented article were discussed the subject of International Committee of the Red Cross, the aim, the directions of the operations done by them and modernity. The forms of actions extended in different countries, the assistance and care to people and groups of different category were studied. During the research the most attention were approved of the digital data assisted of different countries. There were represented suggestions for the expansion of the activity of International Committee of the Red Cross.

Ինստիտուցիոնալ համակարգի էվոլյուցիան և տնտեսական աճը ՀՀ-ում

Գալոյան Էդվին
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Տ. Բադոյան

Հանգուցային բառեր. *ինստիտուցիոնալ, պետություն, շուկա, տնտեսություն, կապիտալ*

Հայաստանը դեռևս բավականաչափ հեռու է գործուն ինստիտուցիոնալ համակարգով տնտեսություն լինելուց: Տրամաբանական է, որ կառուցվածքային բարեփոխումները, կառավարման համակարգի կատարելագործումը, ազատական տնտեսական և ֆինանսական համակարգի ամրապնդումը պետք է իրագործվեն իրավական համակարգի ներդաշնակ զարգացման պայմաններում: Տնտեսական դաշտում իրավահավասարության սկզբունքի օրենսդրական նորմն ապահովելու համար դեռևս առկա են առաջնահերթ խնդիրների մի մեծ շարք, որտեղ, նախ և առաջ, պետք է առանձացնել ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը:

Այսօր արդեն ոչ ոք կասկածի տակ չի առնում ինստիտուտների դերը. ընդհակառակը, վերջին տարիներին այն ամեն կերպ ընդգծվել է նույնիսկ պարզամիտ նեոլիբերալ մոտեցման նախկին կողմնակիցների կողմից, որ շուկայի «անտեսանելի ձեռքը» ինքնին կփոխի հին ինստիտուտները (պետական սեփականությունը, կենտրոնացած պլանավորումը, գների վարչական կարգավորումը և այլն):

Շուկայական խաղի կանոններին հետևելու համար պահանջվում է համապատասխան գիտելիքներ, որոնք ոչ միշտ կարելի է ստանալ դասագրքերից կամ այլ աղբյուրներից: Այստեղ կարևոր դեր ունի անձնական փորձը: Անհրաժեշտ է նաև ձևավորել հատուկ գիտելիքներ և սովորություններ, որոնց անհրաժեշտությունը նախորդ համակարգում գործնականորեն չի եղել: Նոր պայմաններում հին սովորությունները (այսպես ասած, հին, ոչ շուկայական մշակույթը) վեր են ածվում բեռի, որից անհրաժեշտ է ազատվել, հատկապես շուկայական մեխանիզմների հաջող ուսումնասիրության ճանապարհով: Դա փորձի վրա հիմնված ուսուցում է, որի համար անհրաժեշտ է երկար ժամանակ: Սակայն, այն երկրներում, որտեղ մինչև 1989թ-ը շուկայական բարեփոխումներն արդեն բավականին հեռուն էին գնացել, ավելի քիչ ժամանակ է պահանջվում, քան այնտեղ, որտեղ ինստիտուտները մեծ մասամբ համապատասխանել են «ուղղափառ» խորհրդային մոդելին: Ահա թե ինչու անցումային անկումը ավելի կարճ տևեց Լեհաստանում և Հունգարիայում, քան օրինակ՝ Ռումինիայում, Ուկրաինայում կամ Հայաստանում:

Շատ դեպքերում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ. իրոք, հին ինստիտուտները պետք է քանդվեն կամ վերանան, բայց դրանց պետք է փոխարինեն նոր ինստիտուտները, որոնց ստեղծումը դանդաղ գործընթաց է և մշտապես պահանջում է պետության միջամտությունը, որն էլ հանդիսանում է հիմնարար փոփոխությունների գործընթացում կարևորագույն ինստիտուտներից մեկը [3, 18]:

Մտածելակերպի փոփոխություններն՝ ի լրումն համակարգային վերափոխումների, բնավ չեն սահմանափակվում միայն տնտեսական ոլորտով, այլ նաև իրենց ազդեցությունն են ունենում քաղաքական, սոցիալական և մշակութային ոլորտների վրա, նույնպես դանդաղ են ընթանում: Մտավորականներն ու ժամա-

նակակից տնտեսագետները, ինչպես նաև առաջադեմ քաղաքական գործիչները ցանկանում են, որ այդ փոփոխությունները որքան հնարավոր է շուտ հաստատվեն ինչպես նոր ձևավորվող տնտեսական կառուցվածքում և դրա իրագործողների մոտ, այնպես էլ տնտեսական սուբյեկտների և բնակչության մոտ, քանի որ վերջիններս ստիպված են լինելու հետևել խիստ բյուջետային սահմանափակումների և գլոբալ մրցակցության նոր պայմաններին: Սակայն այն իրագործողները հետ են ընկնում իրենց ավելի որակավորված առաջնորդներից, որոնք, ենթադրվում է, որ գիտեն թե ինչպես գտնել նորաստեղծ շուկայական տնտեսության դեպի terra incognita տանող ճանապարհը, և համառություն կցուցաբերեն այդ «անվերջ ճանապարհորդության մեջ»՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար: Որոշ ժամանակ անց կյանքի նոր միջոցները սովորական են դառնում նաև բնակչության ավելի լայն շերտերի համար, որոնք տվյալ բարդ առաքելության առաջապահներից չեն և ընդունակ չեն դրա հետագա նպատակները լուրջ ընդունել: Արդյունքում, նրանք միայն դանդաղեցնում են առաջընթացը: Այսպիսով, յուրաքանչյուր պտուղ հասունանում է իր ժամանակին:

Ընդունված է, որ վերջին տասնամյակում ամերիկյան տնտեսության ձեռք բերած արտադրության և սպառման ավելի նշանակալի մակարդակներն ու աճի զգալի բարձր տեմպերը գլխավորապես պայմանավորված են եղել ինստիտուտների բարձր արդյունավետությամբ և ոչ թե անցկացվող տնտեսական քաղաքականության առավելությամբ: Ամերիկյան ինստիտուտները եվրոպականների պես բյուրոկրատացված չեն և դրանք ձեռներեցության զարգացման ու ձեռնարկությունների մրցունակության բարձրացման համար ստեղծում են ավելի բարենպաստ միջավայր:

Տնտեսության մեջ առկա առանձին ինստիտուտների գործունեության արդյունավետության ուսումնասիրություններն անշուշտ կարևոր են այս կամ այն բնագավառի զարգացման հեռանկարները պատկերացնելու համար: Սակայն ողջ տնտեսության արդյունավետ գործունեության և նեքին ներկառուցվածքային կապերի ներդաշնակության ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ուսումնասիրությունն իրենց ընդհանրության մեջ՝ առանձնահատուկ ուշադրության առարկա դարձնելով դրանց փոխներգործության և փոխկապվածության յուրահատկությունները: Այսինքն, տնտեսության ինստիտուցիոնալ կապերի հիերարխիայի վերլուծությունն է հենց, որ կարող է հանդիսանալ տնտեսության առաջանցիկ զարգացման ազդակների ընտրության ճկուն մեխանիզմ:

Լայնամաշտաբ ինստիտուցիոնալ վերափոխումների իրականացումը պահանջում է նաև պետական ողջ մեխանիզմի վերակառուցում: Պետությունն այս դեպքում իրեն է վերապահում ինստիտուցիոնալ նորամուծություններ իրականացնողի հիմնական գործառույթները: Սակայն ուժեղ պետական իշխանությունը կարող է լինել «գիշատիչ» և ուղղորդված դեպի իշխող փոքրաթիվ էլիտայի շահը: Նման իշխանությունը խոչընդոտում է հասարակական նախապատվությունների ձևավորմանը և առավելապես անհանգստացած է իր ազդեցության ոլորտների նվազման խնդիրներով: Այստեղ եզրակացությունը միանշանակ է. անհրաժեշտ է կազմավորել ոչ թե «ուժեղ», այլ արդյունավետ պետություն: Արդյունավետություն նշանակում է հասարակական նախապատվությունների հայտնաբերման և ներմուծման մեխանիզմների զարգացում և աջակցություն, դրանց կողմնորոշում դեպի հասարակության համընդհանուր նպատակները և դրանց իրագործման հնարավորությունները: Արդյունավետ իշխանությունը գիտակցում է իր հնարա-

վորությունների սահմանափակությունը և պատրաստ է փոխանցել իր լիազորությունները այնպիսի գործակալների, որոնք, իրականացնելով դրանք, կապահովեն առավել մեծ հատույց:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում տնտեսական աճի հիմնախնդիրների ուսումնասիրությունը ենթադրում է տնտեսական աճի գործոնների ազդեցության համալիր վերլուծություն՝ բացահայտելու համար արձանագրված խոր տնտեսական անկումը, որը տնտեսագիտական գրականության մեջ ստացել է «տրանսֆորմացիոն անկում» անվանումը: Այդ գործոնները ներառում են ինչպես տնտեսական աճի ընդհանուր գործոններ՝ կապիտալ, աշխատուժ, ԳՏԱ (սրանք այն հիմնական գործոններն են, որոնք հանդիպում են տնտեսական աճի դասական մոդելներում, իրականում այդ գործոնները բազմաթիվ են, օրինակ ամերիկացի տնտեսագետ Էդվարդ Դենիսոնը, հիմնվելով 1929-1982թթ. էմպիրիկ տվյալների ուսումնասիրության վրա, առաջարկեց տնտեսական աճի գործոնների այնպիսի դասակարգում, որն ընդգրկում էր 23 գործոն), այնպես էլ անցումային տնտեսությանը բնորոշ հատուկ գործոններ: Անհրաժեշտ է, սակայն, որոշել, թե տնտեսական աճի ինչ լրացուցիչ գործոններ են ի հայտ գալիս անցումային փուլում: Որպես նման գլխավոր գործոններ հարկ է առանձնացնել հետևյալները.

- ✓ ֆինանսական կայունացում,
- ✓ ինստիտուցիոնալ վերափոխումներ,
- ✓ քաղաքական կայունություն:

Սակայն թեմայի շրջանակներում, որպես տնտեսական աճի կարևոր գործոն, կխոսենք միայն ինստիտուցիոնալ վերափոխումների մասին:

Շուկայական ինստիտուտների ձևավորումը պետք է տանի տնտեսական աճի տեմպերի ավելացման: Այսինքն, ուղիղ համեմատական կապ գոյություն ունի ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման ու զարգացման և տնտեսական աճի տեմպերի մեծության միջև:



Գծապատկեր 1. Տնտեսական աճի հատուկ գործոնների ազդեցության մեխանիզմը ՀՀ-ում

Տնտեսական աճի և ինստիտուցիոնալ համակարգի միջև այդ ուղիղ համեմատական կապը փորձ ենք ապացուցել կատարված վերլուծությունների հիման վրա: Հանրապետությունում տնտեսության ստվերային մասի գնահատումներն իրականացվել են 1994թ. սկսած: Դրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ ըստ տարիների կազմել է միջինը 30-40% [1, 5]: Որպես ավանդական ինստիտուտների կշիռ մեր կողմից ընդունվել է այս ցուցանիշի միջին արժեքը՝ W_T=0,35: Վերջինս արտացոլում է անցումային տնտեսությունում այս ինստիտուտների առաջին գործառույթը՝ այն է «ինստիտուցիոնալ լողան»: Ավանդական ինստիտուտների հաջորդ գործառույթը ձևական ինստիտուտների գեներացիան է, որը, ցավոք, մեծամասամբ անտեսվում է արտասահմանյան օրենքների մեխանիկական ընդօրինակման պատճառով: Ձևական մոդելն անցումային տնտեսության պայմաններում բնութագրում է վերը նշված երեք տիպի ինստիտուտների զարգացման արդյունքում ընդհանուր ինստիտուցիոնալ համակարգի դինամիկան: Ինստիտուցիոնալ զարգացման համաթիվը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$I=W_T+\sum W_i,I_i,$$

որտեղ I-ինստիտուցիոնալ համակարգի զարգացման աստիճանն է, I պատկանում է [T,1] միջակայքին, W_T՝ ավանդական ինստիտուտների տեսակարար կշիռը, W_T պատկանում է (0,1) միջակայքին, W_i i-րդ ինստիտուտի (ձևական և տնտեսական) տեսակարար կշիռը, ընդ որում $\sum W_i=1-W_T$, I_i՝ i-րդ ինստիտուտի համեմատական գնահատականը, I_i պատկանում է [0,1] միջակայքին, k՝ ձևական և տնտեսական ինստիտուտների թիվը, i՝ ձևական և տնտեսական ինստիտուտների հերթական համարը, I պատկանում է [1,k] միջակայքին: Առանձնացված ինստիտուտների գնահատման արդյունքները, ինչպես նաև դրանց հիման վրա հաշվարկված ինստիտուցիոնալ համակարգի զարգացման համաթվի արժեքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Նշեմ նաև, որ 2010թ. տվյալների հիման վրա կատարված կանխատեսումների համաձայն ենթադրվում էր, որ առաջարկվող համաթիվը կհավասարվի 1-ին՝ համապատասխանելով զարգացած երկրների նույն ցուցանիշին: Սակայն 2017թ. ցուցանիշներով այդ թիվը հեռու է մեկ լինելուց: Ինստիտուցիոնալ համակարգի զարգացման ներգործությունը տնտեսական աճի վրա ամբողջությամբ չի վերանա անգամ այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ զարգացման համաթիվը հավասարվի 1-ի, քանի որ ինստիտուցիոնալ համակարգի աստիճանական էվոլյուցիան բնորոշ է նաև շուկայական տնտեսություն ունեցող երկրներին: Այսպիսով, այդ նույն 2010թ. ընկած ժամանակահատվածի ինստիտուտի խմբի գնահատումները ցույց տվեցին, որ դրանք ձևավորված են մոտ 67%-ով: Պարզ է, որ այդ պահի դրությամբ այս ոլորտում շատ անելիքներ կային, եթե հաշվի առնենք, որ ուսումնասիրության մեջ միայն ընդգրված էր ինստիտուցիոնալ համակարգի առավել տեսանելի շոշափելի մասը: Կարելի է միայն ենթադրել, որ մյուս ինստիտուտները ևս զարգացման համանման միտումներ ունեն (աղյուսակ 1): Սակայն 2017թ. տվյալներով պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ համակարգի զարգացման տեմպերը դանդաղել է և համաթիվը, կանխատեսված 1 թվից, բավական հեռու է: Իսկ ինստիտուտները ձևավորված են 88%-ով:

Ինստիտուտներ	կշիռը	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Սեփականության իրավունք	0.076	0,37	0,41	0,51	0,55	0,57	0,70	0,75	0,83	0,84	0,87	0,93	0,96
Սեփականության ձևերի փոփոխություն	0.068	0,10	0,22	0,33	0,33	0,33	0,36	0,36	0,36	0,36	0,43	0,43	0,43
Ազատ գնագոյացում	0.038	0,66	0,66	0,66	0,66	0,66	0,66	0,66	0,71	0,71	0,71	0,73	0,73
Ազատ առևտուր	0.064	0,33	0,33	0,66	0,66	0,78	1	1	1	1	1	1	1
Ազատ մրցակցություն	…	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ֆիրմա	0.072	0	0	0,33	0,33	0,33	0,39	0,39	0,39	0,45	0,45	0,45	0,48
Բանկային	0.070	0	0	0,33	0,33	0,33	0,43	0,43	0,52	0,52	0,52	0,61	0,61
Ֆինանսական ոչ բանկային	0.035	0	0	0	0	0,33	0,33	0,33	0,36	0,36	0,48	0,48	0,48
Ենթակառուց-վածքների զարգացում	…	0	0	0,31	0,36	0,45	0,56	0,73	0,82	1	1	1	1
Մակրոտնտեսական կայունացում	0.048	0	0,31	0,56	0,66	0,82	0,82	1	1	1	1	1	1
Ավանդական	0.350	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ինստիտուցիոնալ զարգացման համաթիվը	1	0,4	0,43	0,45	0,46	0,47	0,54	0,6	0,62	0,67	0,72	0,81	0,85

Աղյուսակ 1. Ինստիտուցիոնալ համակարգի զարգացումը ՀՀ-ում, 2006-2017թթ. [2]

Այս տվյալների հիման վրա հաշվարկված է նաև ինստիտուցիոնալ զարգացման համաթվի արժեքների և ՀՆԱ-ի հավելաճի տեմպերի միջև կապը, որն էլ ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Ինստիտուցիոնալ զարգացումը և տնտեսական աճը ՀՀ-ում

$$y= -46864x^4+14869x^3+10479x^2+42134x-6293.6$$
$$R^2=0.9508,$$
$$\sigma^2=4.36,$$
լագը մեկ տարի:

Ինչպես բոլոր էմպիրիկ վերլուծությունները, այս մեկը նույնպես հիմված է «այլ հավասար պայմաններում» ենթադրության վրա: Վերլուծության արդյունքում սերտ ուղիղ համեմատական կապ է արձանագրվել երկու փոփոխականների միջև: Միաժամանակ ակնհայտ է ինստիտուցիոնալ համակարգի զարգացման որոշակի մակարդակից հետո տնտեսական աճի կայունացման միտումը: Տնտեսական աճի լուրջ խթան կարող է հանդիսանալ սեփականության ձևերի փոփոխության, ազատ մրցակցության, ֆիրմային, ենթակառուցվածքների զարգացումը և այլն: Ինչևէ, Հայաստանը դեռևս ավելի մեծ հաջողությունների է հասել ֆորմալ ինստիտուտների ձևավորման գործում. դրանց զարգացումը մեկ քայլ առաջ է տնտեսական ինստիտուտներից, որոնց կայացումը արդյունավետ իրավական հիմք է պահանջում:

Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի յուրաքանչյուր հարթությունը բնութագրելու համար անհրաժեշտ է կատարել մանրամասն քննական վերլուծություն: Առաջարկված մոդելի նույնիսկ հպանցիկ դիտարկումը վկայում է, որ մեր երկրի ինստիտուցիոնալ դաշտը դեռ կայացման երկար ճանապարհ ունի անցնելու: Այնուամենայնիվ, երևույթների պատճառհետևանքային կապերի դիտարկումները վկայում են, որ ինստիտուցիոնալ դաշտի կայացման անկյունաքարերը երկուսն են. սեփականության իրավունքի պաշտպանության ինստիտուցիոնալացումը և հասարակության դերի ուժեղացումը:

Տնտեսվարման սկզբունքորեն նոր հարաբերությունների արմատավորման ճանապարհ ընտրած Հայաստանի պարագայում հասկանալի պատճառներով այսօր դժվար է պահանջել սեփականության իրավունքի՝ որպես հիմնարար ինստիտուտի ընկալման ապահովումը: Տնտեսական զարգացման արդի փուլում առաջնային նշանակություն ունեն Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացման և ազատ տնտեսվարման համար բնականոն պայմանների ապահովման խնդիրները, պետական քաղաքականության կարևորագույն ոլորտների ցանկում հատկապես առանձնանում է երկրում սեփականության իրավունքի լիիրավ իրացման և պաշտպանության հիմնահարցը: Այստեղ պետության դերը կանխորոշիչ է: Հայաստանը բավականաչափ ձեռք բերումներ արդեն իսկ ունի օրենսդրական դաշտի կայացման առումով: Մինչդեռ նույնը չի կարելի ասել իրավակիրառական պրակտիկայի և սեփականության անձեռնմխելիության գաղափարի ինստիտուցիոնալացման տեսանկյունից:

Տնտեսական վերափոխումներին զուգընթաց իրականում չեն օգտագործվել կամ քիչ են օգտագործվել ներազդեցության այն մեխանիզմները (համապատասխան ուսուցողական ծրագրերի կազմակերպում, հասարակական կարծիքի ձևավորում՝ զանգվածային լրատվության միջոցներով, պարբերական հրապարակային ելույթներ, հոդվածներ, պետական քարոզչական մեքենայի այլ լծակներ), որոնք կնպաստեն ժողովրդավարական արժեքների և ազատական տնտեսության ամրապնդման նկատմամբ հասարակական պահանջ ներկայացնող կազմակերպված հասարակության կայացմանը: Տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում որպես քաղաքականության օբյեկտ մեծամասամբ դիտարկվում է տնտեսվարող սուբյեկտը, կամ առավել

աբստրահման հարթությունում՝ իրավաբանական անձինք: Նախագծվող վերափոխումների ծրագրերը առաջին հերթին ներառում և նախատեսում են հենց ձեռնարկությունների վարքագիծն ու խնդիրները այս կամ այն փոփոխության համատեքստում: Մինչդեռ ցանկացած ձեռնարկություն, նախ և առաջ, մարդկանց խումբ է՝ ղեկավարից մինչև սովորական աշխատակիցը: Եվ բնական է, որ վերջիններս առաջնորդվում են ոչ միայն տնտեսական հետաքրքրություններով և գործող օրենքներով, այլ նաև անձնական կամ խմբային աշխարհայացքով, երևույթների սեփական ընկալմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2009:
2. EBRD Tranistion Report. 2017.
3. Kornai J., The Role of the State in a Post-Socialist Economy. – Distinguished Lectures Series, 2001, No 6. Leon Kozminski Academy of Entrepreneurship and Management, Warsaw.

Эволюция институциональной системы и экономического роста в Армении

Галоян Эдвин
Историко-географический факультет,
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации –
к.э.н., доцент Т. Бадоян

Резюме

Ключевые слова: *институциоанальная, государство, рынок, экономика, капитал*

В статье представлены темпы развития институциональной системы РА по сравнению с другими государствами. Приведено сравнение предполагаемого экономического роста с полученными результатами.

The Evolution of Institutional System and Economic Growth in Armenia

Galoyan Edvin
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: T. Badoyan,
Ph. D in Economics, Associate Professor

Summary

Key words: *institutional, state, market, economy, capital*

It is presented in this article how much the institutional system has developed in RA compared with other countries. Comparison of the expected economic growth with the result.

Պետության դերի առանձնահատկությունները Հայաստանի քաղաքական համակարգում

Գուսենկովա Նաիրա
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
պ.գ.թ. Ա. Կոխլիկյան

Հանգուցային բառեր. *պետություն, քաղաքականություն, իշխանություն, պետական ապարատ, կուսակցություն, հանրապետություն*

Քաղաքական համակարգը իշխանության համար պայքարող քաղաքական կազմակերպությունների և նրանց միջև հարաբերությունների ու քաղաքական նորմերի ամբողջությունն է: Քաղաքական համակարգի ամենագլխավոր ինստիտուտը պետությունն է, բացի պետությունից առանձնահատուկ տեղ են գրավում նաև քաղաքական կուսակցությունները:

Պետությունը հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի ձև է, որը չի կարող ստեղծվել առանձին մարդկանց անջատ-անջատ ջանքերով: Հասարակությանը միավորում է ընդհանուր, օբյեկտիվ նպատակը՝ մարդկանց միավորելը միասնական իշխանության ներքո, որը համակարգում է հասարակության անդամների տարբեր նպատակները [2, 56]:

Պետության հատուկ տեղը քաղաքական համակարգում պայմանավորված է որոշակի գործոններով՝ այն ամբողջ երկրի մասշտաբով միակ լիիշխան քաղաքական կազմակերպությունն է, այն ի շահ յուրաքանչյուրի սահմանում է հասարակության զարգացման ուղղությունները, պաշտոնական ներկայացուցիչ է երկրի ներսում և միջազգային ասպարեզում [2, 57]:

Պետության տիպը որոշվում է նրանով. թե տվյալ պետությունն ինչպիսի տնտեսական հենք է պաշտպանում, որ տիրապետող սոցիալական խավի շահերին է նա ծառայում [2, 108]:

Խոսելով Հայկական իրականության մասին հարկ է նշել, որ պետական իշխանությունը իսկապես գտնվում է տնտեսապես հզորների ձեռքում, ովքեր թվում է թե որևէ առնչություն չեն կարող ունենալ քաղաքականության հետ:

Պետության ձևի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ կառավարման ձևին, պետական կառուցվածքի և վարչակարգի ձևերին:

Ըստ կառավարման ձևի Պետությունները լինում են միապետություն և հանրապետություն [1, 76]:

Հանրապետությունը կառավարման այն ձևն է, երբ իշխանություններն ընտրվում են որոշակի ժամկետով: Գոյություն ունեն նախագահական և խորհրդարանային հանրապետություններ: Խորհրդարանական հանրապետության դեպքում օրենսդիր մարմինը ձևավորում է գործադիրը և վերահսկում այն, նախագահականի հանրապետությունում և օրենսդիր և գործադիր մարմինները ընտրվում են էլեկտորատի կողմից: Ժամանակակից Հայաստանը 2015թ.-ին տեղի ունեցած սահմանադրական ընտրությունների արդյունքնում դարձավ խորհրդարանական հանրապետություն:

Խոսելով պետական կառուցվածքի ձևի մասին պետք է նշենք որ ՀՀ-ն

ունիտար պետություն է, քանզի ամբողջ տարածքով գործում է միասնական սահմանադրություն և օրենսդրություն:

Ըստ պետական վարչակարգի՝ պետական իշխանության իրականացման ձևի պետությունները լինում են ազատական և ավտորիտար [1, 84]: Ազատական պետական-իրավական վարչակարգը գործում է բոլոր զարգացած քաղաքացիական հասարակարգ և իրավակարգ ունեցող պետություններում, որտեղ քաղաքացին օժտված է իրավունքների լայն շրջանակով, սա ինքնին ժողովրդավարություն է ենթադրում, իսկ ավտորիտարը սրա ճիշտ հակառակն է: ՀՀ դեպքում գործ ունենք դե յուրե՝ ազատական վարչակարգի, իսկ դե ֆակտո ավտորիտար վարչակարգի հետ:

Հայաստանի քաղաքական համակարգը, նույնիսկ անցելով զարգացման երկարատև և բովանդակալից ուղի, բավականին հեռու է ժողովրդավարական երկիր լինելուց:

Քաղաքական համակարգի ամենակարևոր տարրերից են քաղաքական կուսակցությունները: ՀՀ ներկայիս քաղաքական կուսակցությունները կրում են ձևական բնույթ, չունեն խոսուն գաղափարներ, հստակ ուրվագծված կազմ ու քաղաքական կողմնորոշումներ, արժանահավատ առաջնորդներ ու բարոյականության չափորոշիչներ:

Յուրաքանչյուր երկրի քաղաքական համակարգ կրում է տվյալ երկրի մշակութային, կրոնական և պատմական զարգացման առանձնահատկությունները: Հետևաբար ցանկացած երկրի քաղաքական համակարգ ձևավորվում է տեղի ավանդույթներին համապատասխան:

Հայաստանում նախկինում արդեն իսկ գործել են կառավարման նախագահական և կիսանախագահական ձևերը: Կիսանախագահական կառավարման ժամանակ գործադիր իշխանությունը բաժանվում է երկու մասի՝ պատկանելով հավասարապես նախագահին և խորհրդարանի կողմից առաջադրված վարչապետին(խորհրդարանը տեսականորեն ժողովրդի ներկայացուցիչն է): Կիսանախագահական կառավարման ձևի առանձնահատկություններից է գործադիր իշխանության տարրերի միջև եղած հարաբերությունները՝ կոնֆլիկտային կամ համագործակցող՝ կախված կուսակցական պատկանելությունից: Ինչպես վերը նշվեց նախագահական կառավարման ժամանակ պետության գլուխ կանգնած է լինում նախագահը, ով օժտված է ընդարձակ լիազորություններով և պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև: Կառավարման հենց այս ձևն է գործում ՀՀ-ում մինչ 2018թ.-ի ապրիլը: Խորհրդարանային իշխանության դեպքում իշխանությունը պատկանում է խորհրդարանի կողմից առաջադրված վարչապետին, իսկ նախագահը կրում է զուտ խորհրդանշական, ներկայացուցչական բնույթ: Խորհրդարանն էլ իր հերթին ձևավորվում է համաժողովրդական ընտրությունների հիման վրա:

Պետությունը կազմված է մի շարք պետական մարմիններից, հիմնարկներից ու պաշտոնյաներից, որոնք իրականացնում են պետության գործառույթները: Սրանք միասին կազմում են պետական ապարատը [1, 89]:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը ժողովրդավարական պետության մեջ պետական իշխանության բանական կազմակերպումն է, որի առկայության պարագայում իրականացվում են պետության բարձրագույն մարմինների

փոխադարձ վերահսկողությունը և փոխգործակցությունը՝ հակակշիռների և զսպումների համակարգի միջոցով: Այս սկզբունքի էությունն այն է, որ միասնական պետական իշխանությունը բաժանվում է երեք հարաբերականորեն անկախ ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Սրան էլ համապատասխան ստեղծվում են պետության բարձրագույն մարմինները, որոնք փոխներգործում են հակակշիռների և զսպումների մեխանիզմի հիման վրա՝ միմյանց նկատմամբ իրականացնելով մշտապես գործող հսկողություն: Իշխանության յուրաքանչյուր ճյուղ, բացի ընդհանուր շահերից, ունի նաև իր՝ որպես որոշակի համակարգի յուրահատուկ օբյեկտիվ շահերը: Բացի այդ, գոյություն ունեն նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների պաշտոնատար անձանց սուբյեկտիվ, խմբակային և անհատական շահեր, որոնք նույնպես էականորեն ազդում են այդ ճյուղերի գործառնության վրա: Հենց այդ շահերի ազդեցությամբ է հիմնականում բացատրվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև հավասարակշռությունն ապահովելու, նրանց միջև հակակշիռների և զսպումների մեխանիզմ կիրառելու անհրաժեշտությունը [3]: Օրենսդիր թևը խորհրդարանն է, գործադիրը՝ կառավարությունը իսկ դատականը՝ դատարանները: Դատավորները անձեռնմխելի են և ենթարկվում են միայն օրենսդրությանն ու սահմանադրությանը:

Իշխանության թևերը ժողովրդավարական պետություններում պետք է գործեն իրարից անկախ և անաչառ կերպով: Սակայն սա չի վերաբերվում ոչ մեր հանրապետությանը և ոչ էլ արևելյան որոշ երկրների ներկայիս իրականությանը: Պետական ապարատին բնորոշ են որոշակի արատներ, այսպես օրինակ նրանք օտարվում են հասարակությունից, սկսում են անտեսել օրենքներն ու հետապնդել սեփական շահերը: Այս բացասական երևույթները շտկելու համար ձեռնարկվում են որոշակի քայլեր, օրինակ որակյալ կադրերի պատրաստումը, պետական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության կատարելագործումը, խախտումների համար պատասխանատվության բարձրացումը և այլն:

Ուսումնասիրելով ՀՀ պետական ապարատը և դրանց միջև փոխգործակցությունը առաջնահերթ աչքի է զարնում այն խնդիրը, որ այստեղ գործող իշխանության թևերի միջև առհասարակ տարանջատում չկա: Եթե խոսում ենք իշխանության գործադիր թևի մասին նկատի ենք ունենում կառավարությանը: Օրենսդիր ճյուղը ևս անքակտելիորեն ենթարկվում է նախագահին: Դիտարկելով «անձեռնմխելի» դատական ճյուղը ևս գալիս ենք այն եզրակացությանը, որ այն նույնպես ենթարկվում է նախագահին: Սրա մասին խոսել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ղեկավար, դեսպան Յանեշ Լենարչիչը: Նրա խոսքով՝ Հայաստանում հստակ տարանջատված չեն իշխանության տարբեր ճյուղերը, ինչի հետևանքով դատական իշխանությունը լիարժեք անկախ չէ: «Դատական իշխանության անկախության հասնելն անհրաժեշտություն է, որովհետև դրան այլընտրանք չկա», նկատել է դեսպանը [6]:

Իշխանության ճյուղերի տարանջատումը ապահովում է յուրաքանչյուր ճյուղի որակյալ գործելակերպը քանզի յուրաքանչյուր ճյուղ կենտրոնանում է զուտ իր գործի վրա: Այն փաստը, որ բոլոր երեք ճյուղերն էլ վերահսկվում են մեկ

մարմնի կողմից խոսում է երկրում տիրող ամբողջատիրական վարչակարգի մասին: Խնդիրը կայանում է նրանում, որ քաղաքական համակարգի բոլոր տարրերը միավորված են ոչ թե գաղափարների և տեսլականների այլ ընդհամենը կոնկրետ անհատների շուրջ: Իսկ այդ անհատները ոչ թե քաղաքական ուժերն են այլ խոշոր տնտեսվարողները(օլիգարխներ):

ՀՀ երրորդ նախագահը Ազգային ժողովի վեցերորդ գումարման ուղերձի ժամանակ նշել է. «Երբ մենք խոսում էինք առկա հիմնախնդիրների մասին և դրանց մի մասը պայմանավորում կառավարման ձևի առանձնահատկություններով, իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացմամբ, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումներով, քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակով, կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածությամբ, շատերը թերահավատորեն էին վերաբերվում այս հանգամանքին: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներին հաջորդած ժամանակահատվածը և հատկապես 2017 թվականի ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունները և հետընտրական իրավիճակը եկան հաստատելու, որ խնդիրների լուծման ճանապարհը մեր կողմից ճիշտ է ընտրված» [4]:

Այսպիսով, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ իշխանության ճյուղերի անտարանջատ լինելու պատճառը պայմանավորված է իշխող սոցիալական խմբի (օլիգարխիա) միավորմամբ, որը հետապնդելով կոնկրետ տնտեսական շահեր ամբողջ քաղաքական համակարգը ծառայեցնում է իր սուբյեկտիվ նպատակների իրականացմանը, խոչընդոտելով իշխանության ճյուղերի ծագումնաբանական առաքելության իրականացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, «Նաիրի», 2001:
2. Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և Իրավունքի տեսություն (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով), «ԳՈԾ» հրատարակչություն, Երևան, 1997:
3. Шохин А.Н., Взаимодействие властей в законодательном процессе, изд. «Наш дом», М., 1997.
4. Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը վեցերորդ գումարման Ազգային ժողովին, 18.05.2017:
5. https://alvardmanukyan.wordpress.com/2015/06/04/նախագահական-հանրապետություն վ
6. http://civilngo.com/semi-presidentialsystem-ofgovernment/
7. https://hy.wikipedia.org/wiki/Հայաստանի_Հանրապետության_պետական_կառավարման_համակարգ
8. http://www.chi.am/index.cfm?objectID=80F51EE0-8DC0-11E0-9A42005056A30FF7&year=2011&month=03&legacyURL=110311/11031108
9. http://www.court.am/files/news/765_am.pdf

Особенности государственной роли в политической системе Армении

Гусенкова Наира
Историко-географический факультет,
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации –
к. ист. н. А. Кохликян

Резюме

Ключевые слова: *государство, политика, власть, государственный аппарат, партия, республика*

Данная статья посвящена одной из актуальных проблем политической системы Армении – неделимости ветвей власти. Обсуждается основная причина этого явления и приведены мнения некоторых политиков по этому вопросу. Можно сделать вывод, что вся политическая система РА служит интересам определенного социального класса, и пока один и тот же социальный класс находится во главе власти, ветви власти не могут действовать независимо друг от друга.

Peculiarities of the State Role in the Political System of Armenia

Gusenkova Naira
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: A. Kokhlikyan,
Ph. D in History

Summary

Key words: *state, politics, authority (power), state apparatus, party, republic*

One of the most important elements of the political system- the state, its forms, types and state structure are presented in the present article. All this is presented parallelly to the example of RA. This article highlights one of the urgent problems of the political system of Armenia, the indivisibility of the power branches. The main reason of this has been discussed and some politicians' opinions on this subject have been observed. We have come to the conclusion that the whole political system of RA serves the interests of a particular social class and as long as the same social class is in the head of the power, power branches can not operate independently from each other.

Որակի կառավարման հիմնախնդիրների վերլուծությունը արտադրական կազմակերպություններում

Գրիգորյան Հեղինե
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ է. Նասիլյան

Հանգուցային բառեր. *Սերտիֆիկացում, ստանդարտիզացումացում, որակ, որակի մշակույթ, որակի կառավարում, որակի կառավարման ռազմավարություն*

Շուկայական մրցակցության արդի պայմաններում արտադրական կազմակերպությունների առջև ակնհայտ խնդիր է դրվել գրավել սպառողների ու հետագայում նաև պահպանել նրանց: Ուստի անհրաժեշտ է թողարկել այնպիսի արտադրանք, որը լիովին կհամապատասխանի սպառողի պահանջներին: Գոյություն ունի այն կարծիքը, որ «ապրանքները վերադառնում են, իսկ գնորդները՝ ոչ» [5]: Տնտեսության զարգացման ներկա փուլում առավել հրատապ է դրված ապրանքի և մատուցվող ծառայության որակն ու դրա մրցունակությունը, որը յուրաքանչյուր արտադրական կազմակերպության մարքեթինգային ռազմավարության մշակման ու արտադրության կազմակերպման հիմնական ելակետն է: Որակը կազմակերպության համար կարող է հանդիսանալ այն զենքը, որի միջոցով նա շուկայում կտարբերվի իր արտադրանքով և սպառողների թվով: Որակը տարբեր մարդկանց ու կազմակերպությունների կողմից տարբեր կերպ է ընկալվում: Արտադրողի տեսակետից «որակ» ասելով հաճախ հասկացվում է արտադրանքի համապատասխանության աստիճանը նախօրոք սահմանված պահանջներին, ինչպիսիք են՝ հուսալիությունը, անվտանգությունը և սպասարկման հարմարավետությունը, այն դեպքում, երբ սպառողին առաջին հերթին հետաքրքրում է դրա օգտագործման պիտանելիությունը [1, 378-379]:

Որպեսզի կազմակերպությունները կարողանան ապահովել իրենց կողմից թողարկվող արտադրանքի բարձր որակը, անհրաժեշտ է, որ արտադրանքը թողարկելիս առաջնորդվեն արդյունավետ որակի կառավարման համակարգով, այսինքն՝ արտադրանքի որակի կառավարումը պետք է իրականացվի համակարգային մոտեցմամբ, երբ ձեռնարկություններում ներդրած լինի արտադրանքի որակի կառավարման համակարգ՝ կազմակերպական կառուցվածք, որում աշխատողների միջև տարանջատվում են տեխնոլոգիական յուրաքանչյուր օղակի կատարման պատասխանատվությունը և արտադրական գործընթացների կատարումը:

Ինչպես նշեցինք, որակի համակարգը կազմակերպական կառուցվածքների, մեթոդների, գործընթացների ու ռեսուրսների համակցությունն է, որն անհրաժեշտ է արտադրանքի ընդհանուր որակը կառավարելու համար: Որակի կառավարման համակարգի գործողությունը տարածվում է արտադրանքի կենսական ցիկլի բոլոր փուլերի վրա և պետք է ապահովի որակի կառավարումն արտադրության բոլոր օղակներում, ներգրավի կոլեկտիվի բոլոր խմբերը, կազմակերպի ռեսուրսների խնայողաբար օգտագործման ու միավոր արտադրանքին ընկնող ծախսերի իջեցման խնդրի կատարումը, բացահայտի թերությունները և վերացնի

դրանց պատճառները [2, 438-439]:

Որակի կառավարման համակարգի գլխավոր նպատակն է գիտատեխնիկական, արտադրական և սոցիալ-տնտեսական հնարավորությունների պլանային օգտագործումը, արտադրանքների բոլոր տեսակների որակի բարելավման մշտական բարձր տեմպերի ապահովումը: Արտադրանքի որակի կառավարման ցանկացած համակարգի արդյունավետ գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է նախապես լուծել մի շարք խնդիրներ,որոնցից առավել կարևորներն են՝ արտադրանքի որակի ձևավորման վրա ազդող գործոնների ու պայմանների վերհանումը, արդյունավետ կառավարման եղանակների լայն կիրառումը, կառավարման գործառույթների հստակ սահմանազատումն ու բաշխումը [4. 48-51]: Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պահպանել որակի կառավարման հետևյալ սկզբունքները՝ նպատակաուղղվածությունը, պլանավորումը, համակարգումը, մշտական կատարելագործումը, օպտիմալացումը և այլն [1. 378-379]: Նշված սկզբունքները հիմք են հանդիսանում որակի ընդհանուր կառավարման համար: Սակայն հաճախ այս սկզբունքների խախտման պատճառով ստեղծվում են մի շարք խոչընդոտներ.

- Միայն հիմնական ուղղության կառավարում,
- Գործունեության գնահատում քանակական ցուցանիշների համակարգի հիման վրա,
- Կարճաժամկետ օգուտներ ստանալու նկատմամբ կենտրոնացում,
- Ռազմավարության բացակայություն,
- Կադրերի հոսունություն:

Որակի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ՝ մասնավորապես շուկայական պահանջարկը, աշխատանքային ռեսուրսները, սարքավորումները, հումքը և այլն: Արդի ժամանակաշրջանում, երբ ինչպես միջազգային այնպես էլ ներքին շուկաներում սրվել է մրցակցությունը, շատ կազմակերպությունների համար գործունեության կայունության չափորոշիչ է դարձել նաև կազմակերպչական մշակույթի ստեղծման հնարավորությունը, որի շնորհիվ կարելի է ներգրավել և պահպանել տաղանդավոր մարդկանց, ամբողջ կոլեկտիվը կողմնորոշել դեպի ընդհանուր նպատակները, մոբիլիզացնել աշխատողների նախաձեռնությունը ապահովելով նրանց արդյունավետ համագործակցությունը, փորձի, գիտելիքների և հմտությունների փոխանակումը: Այսօր որակի մշակույթի կառավարման ամենավառ օրինակ է Ճապոնիան, քանի որ ոչ մի երկիր նրա նման ուշադրություն չի դարձրել այդ խնդրին: Ճապոնացիների համար որակի կառավարումը այնպիսի արտադրանքի թողարկումն է, որը լիովին կբավարարի սպառողին [3,184]: Այս տեսանկյունից հետաքրքրության է արժանի «Կայձեն» ճապոնական հայեցակարգը, որը լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում: «Կայձեն» պատկերացումը առաջացել է ճապոնական երկու հիերոգլիֆներից՝ «կայ» փոփոխություն, և «ձեն» լավ, որոնք միասին թարգմանվում են որպես «փոփոխություն դեպի լավը», կամ «անընդհատ կատարելագործում»: Կատարելագործմանն է վերաբերում այն ամենը, ինչը մենք կատարում ենք և այն ընդունել է կոնկրետ ձևեր, մեթոդներ և տեխնոլոգիաներ: Այսպես, եթե ղեկավարությունը զարգացնում է կազմակերպչական մշակույթ երկարաժամկետ կողմնորոշմամբ, ապա կազմակերպությունը ժամանակի ընթացքում դառնում է ավելի արդյունա-

վետ, շահութաբեր, մրցունակ և կայուն: «Կայծեն» հայեցակարգին կողմնորոշված կազմակերպչական մշակույթը պահանջում է անընդհատ կատարելագործում և արտադրական համակարգի կայուն զարգացման ապահովում: Հաշվի առնելով ապրանքի որակի կարևորությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում և այն պահանջները, որոնք ներկայացվում են ղեկավար մարմինների և օրենքի նորմերի կողմից այս խնդրին՝ յուրաքնաչյուր կազմակերպություն պետք է մշակի որակի կառավարման հայեցակարգ, ձևավորի որակի կառավարման կազմակերպության կառուցվածքային մոդել, անընդհատ վերահսկի, գնահատի որակի կառավարման գործընթացի արդյունավետությունը:

Ներկայացվող աշխատանքում, նպատակ դնելով վերլուծության ենթարկել ՀՀ-ում ձեռնարկությունների որակի կառավարման համապատասխանումը ներկայացվող պահանջներին, մեր կողմից ուսումնասիրվել է Վանաձոր քաղաքի արտադրական կազմակերպություններից մեկը՝ «ԳԻՊԿ» ՓԲԸ: Վերջինիս ընտրությունը հիմնավորված է նրանով, որ այստեղ գործի է դրված որակի կառավարման արդյունավետ գործընթաց, և թողարկվում է որակյալ արտադրանք:

Է.Ղ.Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների գիտահետազոտական և նախագծային ինստիտուտը՝ «ԳԻՊԿ»-ը, կազմավորվել է 1967 թ.: 1996 թ.-ից վերակազմավորվել է որպես «ԳԻՊԿ» ՓԲԸ: Այս կազմակերպությունը դեռ խորհրդային ժամանակաշրջանից ունի արտադրանքի որակի կառավարման մեծ փորձ, քանի որ կազմակերպության արտադրանքը արտահանվում էր ոչ միայն Խորհրդային Միության բազմաթիվ առաջատար կազմակերպություններ, այլ նաև մի շարք արտասահմանյան երկրներ: Այս հանգամանքը ներկայացնում է խիստ պահանջներ որակին: Ձեռնարկության կեսդարյա գիտական աշխատանքների արդյունքում ստեղծվել է գիտական մշակումների հարուստ պահեստարան և պոլիմերային սոսինձների արտադրական բազա: Հիմնականում կազմակերպությունը արտադրում է արդի ժամանակների գիտության և տեխնիկայի պահանջներին համապատասխան արտադրանք, որոնցից առավելլայն սպառում են ստացել կոնստրուկցիոն սոսինձներ ամրության և պնդեցման համար, հալույթ սոսինձներ, պլաստիզոլային սոսինձ-հերմետիկներ, էլեկտրա-ջերմահաղորդիչ սոսինձներ, մթնոլորտակայուն և հրապաշտպան ներկեր, ջերմակայուն լաքեր:

Նշված սոսինձները և պատվածքները լայն կիրառում են ստացել արդյունաբերության բազմաթիվ ճյուղերում՝ շինարարությունում, հանքարդյունաբերությունում, էներգետիկայում, սննդի և թեթև արդյունաբերությունում և այլն: Հաշվի առնելով արտադրանքի կիրառումը տնտեսության խիստ կարևոր և ռազմավարական ճյուղերում՝ կառավարության կողմից լուրջ պահանջներ են ներկայացվել նշված արտադրանքների բնութագրական չափորոշիչներին: Ուստի «ԳԻՊԿ» ՓԲԸ-ի արտադրանքի որակը պետք է համապատասխանի միջպետական և միջազգային ստանդարտներին: «ԳԻՊԿ»-ում ստանդարտներին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ աշխատանքի անվտանգության (ԳՕՍՏ 12.1.005), աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ.վնասակար նյութերի դասակարգում և անվտանգության ընդհանուր պահանջներ (ԳՕՍՏ 12.1.007), հարաբերական մածուցիկության որոշման մեթոդներ (ԳՕՍՏ 8420) և այլն: «ԳԻՊԿ» ՓԲԸ սկսած իր հիմնադրման օրից (ներառյալ խորհրդային ժամանակները) մշակել է հարյուրից ավելի պոլիմերային սոսինձներ և այլ տեսակի ապ-

ռանքների մակնիշներ, ընդորում այս բոլոր ապրանքները, համաձայն գործող օրենքի, անցել են ստանդարտացման բոլոր պահանջներին համապատասխան գործընթացները: Վերջին ժամանակաշրջանում կազմակերպության արտադրանքը հիմնականում արտահանվում է միայն Ռուսաստանի Դաշնություն և կիրառվում է ՀՀ ներքին շուկայում: Դեպի Ռուսաստան արտահանվող ապրանքներին ներկայացվում է «ТУ» «Техническе условия» ստանդարտը: Այսօրվա դրությամբ ՌԴ արտահանում են «ТУ» ստանդարտավորում ունեցող 5 մակնիշի պոլիմերային սոսինձներ: 1999-2008թթ ժամանակահատվածում կազմակերպությունում մոտ 10 ապրանքանիշ ստանդարտիզացման էր ենթարկվել հայկական ստանդարտով (ՀՍՏ): Սակայն 2016 թ.-ից թույլատրվում են նաև ներքին շուկայում վաճառքի ենթարկել ապրանքներ ձեռնարկության ստանդարտով (ՁՍՏ): Համաձայն ՁՍՏ-ի՝ ներքին շուկայում վաճառքի է դրված մոտ 55 ապրանքի տեսակ: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ տվյալ կազմակերպությունում արտադրվող յուրաքանչյուր ապրանք ստանդարտիզացվում է համաձայն գործող օրենքի, ապրանքների նմուշները փորձաքննության են ուղղարկվում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կից ստանդարտիզացման բաժին և անցնում են ստանդարտիզացման բոլոր փուլերը: Ցավոք, կազմակերպության ապրանքները արտահանվում են միայն ՌԴ, ուստի կազմակերպությունում բացակայում են ստանդարտիզացման այլ ձևեր (Եվրոպական (ECC), միջազգային (ISO) և այլն): Այս խնդրի լուծման համար, հաշվի առնելով ապրանքի բարձր որակը, կարծում ենք,որ ան հրաժեշտ է ուժեղացնել գովազդային գործունեությունը արտասահմանյան երկրների համար և մշակել ապրանքը այլ երկրներ դուրս բերելու ռազմավարություն:

«ԳԻՊԿ» ՓԲԸ-ի կողմից արտադրվող սոսինձները, լաքաներկանյութերը, բազմաբնույթ պատվածքները մինչ սպառողին հասնելը անցնում են վերահսկողության 3 փուլ: Առաջին փուլում կատարվում է հումքի որակն ապահովող նորմատիվ չափորոշիչների ստուգում: Երկրորդ փուլում համապատասխան տեխնիկական վերահսկող կառույցի կողմից ստուգվում է արտադրանքի որակի համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերում նշված չափորոշիչներին: Չափող գործիքները և սարքավորումները գտնվում են մշտական վերահսկողության տակ, որպեսզի ապահովվի «Չափորոշիչների միասնականության ապահովման մասին» օրենքի սահմանակարգը:Երրորդ փուլում ստուգվում է որակի համապատասխանությունը ուղեկցող տեխնիկակական փաստաթղթերին և տրվում է որակի հավաստագիր: Բացի որակը բնութագրող տեխնիկական փաստաթղթերից, որակի հավաստագրից, ապրանքի ուղեկցող փաստաթուղթ է նաև կիրառման տեխնոլոգիական հրահանգը, որի մեջ նշված է տեղեկատվության նշանակման, նախապատրաստական աշխատանքների կիրառման և անվտանգության ցուցումները: «ԳԻՊԿ» ՓԲԸ-ում արտադրվող ողջ տեսականին վերահսկվում է ըստ տվյալ արտադրանքը բնութագրող տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին՝ ենթարկվելով «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի սահմանած կարգին, որն էլ հնարավորություն է տալիս «ԳԻՊԿ» ՓԲԸ-ում աշխատելու առանց խոտանի:

Այսպիսով, ամփոփելով «ԳԻՊԿ» ՓԲԸ-ի արտադրանքի որակի կառավարման վերաբերյալ վերլուծության արդյունքները, եկել ենք այն եզրակացության, որ

տվյալ կազմակերպության որակի կառավարման համակարգը գտնվում է բավականին բարձր մակարդակում: Քանի որ որակը յուրաքանչյուր ապրանքի մրցունակության երաշխիքն է, ապա կարելի է փաստել, որ «ԳԻՊԿ» ՓԲԸ-ը արտադրանքը մրցունակ է: Սակայն, դիտարկելով նշված կազմակերպության որակի կառավարման համակարգի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին, նաև մի շարք արտադրական կազմակերպություններում անցկացնելով հարցում, եկել ենք հետևյալ եզրակացությունների՝

- Համաձայն գործող օրենքի, բոլոր արտադրական կազմակերպություններում վաճառահանվող ապրանքները պարտադիր ենթարկվում են ստանդարտիզացման:
- Ոչ բոլոր կազմակերպություններն ունեն որակի կառավարման համապատասխան կառույց (բաժին). հաճախ որակի կառավաման համակարգում ամբողջ գործընթացը իրականացվում է ղեկավարության կողմից նշանակված անձի կողմից:
- Գրեթե բոլոր արտադրական կազմակերպություններում բացակայում են կառավարման երկարաժամկետ ռազմավարություններ:
- «Որակի մշակույթ» համակարգին կազմակերպությունների մեծ մասը նույնիսկ ծանոթ չէ:
- Լուրջ խոչընդոտներ կան որակի կառավարման մասնագետների պատրաստման գործընթացում:

Նշված եզրակացությունների հիման վրա ներկայացնում ենք հետևյալ առաջարկները.

- Երկրի տնտեսության կառավարման տարբեր մակարդակներում (նախարարություններ, տարածքային կառավարման մարմիններին և այլն), մշակել կազմակերպություններիհամար որակի մշակույթի մոդելի ձևավորման կանոնակարգ և հրահանգել դրա պարտադիր կատարումը:
- Ուսումնասիրել որակի կառավարման դրական փորձ ունեցող կազմակերպությունների ձեռքբերումները և դրանց հիման վրա կազմակերպել փորձի փոխանակման միջոցառումներ:
- Տնտեսագիտական մասնագիտացում ունեցող կրթական հաստատություններում և կառավարման այլ օղակներում նախատեսել որակի կառավարման մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Երևան, «Տնտեսագետ», 2002:
2. Խաչատրյան Գ., Ձեռնարկության էկոնոմիկա և կառավարում, Երևան, 2009:
3. Бугель Дж., Управление производством, М., Мир, 1973.
4. Ребрин Ю.И., Управление качеством, Учебное пособие, Таганрог, 2004.
5. www.mersoft.am

Анализ проблем управления качеством на производственных предприятиях

Григорян Эгине
Историко-географический факультет,
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации –
к.э.н., доцент Э. Насилян

Резюме

***Ключевые слова**: Сертификация, стандартизация, качество, культура качества, управление качеством, стратегия управления качеством*

В современных условиях рыночной конкуренции для производственных предприятий становится важной и актуальной задачей привлечение потребителей, в связи с чем повышается роль и значимость качества продукции. В статье рассмотрены сущность качества, структура системы качества, цели, принципы, факторы, влияющие на процесс формирования и управления качеством. Отдельно рассмотрен один из важных элементов управления качеством – культура качества. В статье представлен также практический анализ управления качеством продукции на конкретном предприятии и результаты опроса, проведенного на некоторых производственных предприятиях, и на основе данных анализа предложены соответствующие рекомендации.

Analysis of Problems of Quality Management in Manufacturing Enterprises

Grigoryan Heghine
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: E. Nasilyan,
Ph. D in Economics, Associate Professor

Summary

***Key words:** Certification, standardization, quality, quality culture, quality management, quality management strategy*

The given article touches upon some observations on the problems of quality management in manufacturing enterprises.

In modern conditions of market competition, the attraction of the consumer becomes an important and urgent task for production enterprises. In this respect the role and significance of product quality is gradually increasing. The article deals with the essence of quality, the structure of the quality system, goals, principles, factors influencing the process of formation and quality management. One of the important elements of quality management is the quality culture. The article also presents a practical analysis of product quality management a particular sphere and the results of a survey conducted at some manufacturing enterprises and based on the analysis data, appropriate recommendations are also proposed.

ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություն

Հակոբջանյան Լաուրա
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ.գ.թ. Հ. Պապոյան

Հանգուցային բառեր. *արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ծառայություններ, ՍԳԻ, մանրածախ առևտուր, արտահանում, ներմուծում, ներդրումներ*

Լինելով տարածքի մեծությամբ երրորդը հանրապետությունում՝ Լոռու մարզը բնութագրվում է ոչ միայն նրա տարածքի մեծության և բնակչության թվաքանակի մեջ գրանցած զգալի տեսակարար կշռով, այլև տնտեսության մեջ ունեցած իր ուրույն դերով և բաժնով:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերն են հանդիսանում գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: Արդյունաբերությունը կենտրոնացված է Թումանյանի տարածաշրջանում: Արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական, մշակող (մասնավորապես՝ մետաղագործական ու սննդի) և թեթև արդյունաբերություններն են (Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը): 2017թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է՝ 146408,6 մլն դրամ՝ նախորդ տարվա 131000,8 մլն. դրամի դիմաց (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր1. Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ [3]

Համադրելի գներով 2017թ. թողարկվել է 129184,6 մլն. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 98,6%-ը: Համադրելի գներով նվազումը կազմել է 1816,2 մլն. դրամ, ինչը պայմանավորված է պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրությամբ զբաղվող «էյ-Սի-Փի» ՓԲԸ-ում (93,5%), «Թեղուտ» ՓԲԸ-ում (95,4%), ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունում (83,2%) արտա-

դրանքի ծավալների նվազմամբ [1, 13]:

Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետական ծավալում 2017թ.-ին կազմել է 8,8 % (4-րդ ցուցանիշը), 2016թ.՝ 9,1% (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. << Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը << արտադրանքի ծավալում,% [3]

Մարզի արդյունաբերության ընդհանուր ծավալում 2017թ. հանքարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 52,6%, մշակող արդյունաբերությանը՝ 39,7% էլեկտրական էներգիայի արտադրությանը՝ 6,9%, ջրամատակարարմանը և այլ ճյուղերինը՝ 0,8%:

Մարզի արդյունաբերական արտադրանքի 79,8%-ը բաժին է ընկնում 6 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, 20,2%-ը փոքր և միջին ձեռնարկություններին: Այսինքն, մարզում դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ փոքր և միջին ձեռներեցության զարգացումը՝ որպես նոր աշխատատեղերի ստեղծման և դրա միջոցով աղքատության նվազեցման լծակ:

Չնայած համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը՝ ոլորտն իր ցուցանիշներով եղել է ամենակայունը և զարգացման միտումներ ցուցաբերողը (տե՛ս գծապատկեր 3): Որպես արդյունք՝ աճել է նրա տեսակարար կշիռը մարզի պայմանական ՀՆԱ-ի կառուցվածքում:



Գծապատկեր 3. Արդյունաբերական արտադրանքի ծավալը Լոռու մարզում՝ ըստ արտադրության բաժինների, մլն. դրամ [3]

Ինչպես փաստում են գծապատկեր 4-ի տվյալները, Լոռու մարզում գյուղատնտեսության ճյուղի համախառն արտադրանքը ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009թ.-ին գրանցված 41.7% անկումից հետո կայուն աճ է գրանցել:



Գծապատկեր 4. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ [3]

Հետճգնաժամային ժամանակահատվածում ճյուղի արագ վերականգնմանը զգալիորեն նպաստել է գյուղատնտեսության ոլորտը տնտեսության գերակա ճյուղ սահմանելն ու գյուղատնտեսության զարգացման նպատակով պետական աջակցության քաղաքականության կիրառումը:

2017թ. Լոռու մարզում գյուղատնտեսության ճյուղի համախառն արտադրանքն ընթացիկ գներով կազմել է 78,9 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով 14% աճ:



Գծապատկեր 5. ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ արտադրանքի ծավալում, % [3]

Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի թողարկման մեջ մարզի ներդրումն ավելի մեծ է եղել նախաճգնաժամային հատվածում՝ կազմելով միջինը 10,2%: 2009-2017թթ. մարզի միջին տեսակարար կշիռը կազմել է 7,4%: 2017թ. այն կազմել է 8,7% (6-րդ ցուցանիշը) (տե՛ս գծապատկեր 5):

2017թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի 707 օբյեկտներ ապահովել են 37635,6 մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2016թ. համապատասխանաբար 1010 օբյեկտի և 39756,6 մլն. դրամի ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը նվազել է և կազմել նախորդ տարվա միայն 94,7%-ը, այնինչ հանրապետական ցուցանիշը նախորդ տարվա համեմատ գրանցել է 7,4% աճ (տե՛ս գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ [3]

Մարզի կտրվածքով մեկ շնչին բաժին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2017թ. կազմել է 172,8 հազ. դրամ միջին հանրապետական 449,3 հազ. դրամի համեմատ՝ վերջինիս զիջելով 2,6 անգամ և 2016թ. 178,1 հազ. դրամի դիմաց:



Գծապատկեր 7. Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը, դրամ [3]

Ծառայությունների ծավալը մարզում 2017թ. կազմել է 18214,7 մլն. դրամ, 2016թ.-ի համեմատությամբ գրանցելով 15,5% աճ, իսկ տեսակարար կշիռը՝ հանրապետական ծառայությունների 1.3%-ը, նախորդ տարվա 1.2%-ի դիմաց:



Գծապատկեր 8. Ծառայությունների ծավալը ՀՀ-ում և Լոռու մարզում, մլն. դրամ [3]

2017թ. մեկ շնչին բաժին ընկնող ծառայությունների ծավալը մարզում կազմել է 83,6 հազ.դրամ 2016թ. 70,7 հազ. դրամի դիմաց և միջին հանրապետական ցուցանիշի 17,1%-ը: Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալներից(տե՛ս գծապատկեր 9) ակնհայտ երևում է, որ մարզի կտրվածքով մեկ շնչին բաժին ընկնող ծառայությունների ծավալը մշտապես զգալիորեն զիջել է հանրապետական միջին ցուցանիշին՝ վերջին 10 տարիներին կազմելով նրա միջինը 17,9%: Պետք է նշել, որ նկատվում են ծառայությունների ծավալների զգալի տարածքային անհամաչափություններ: Մայրաքաղաք Երևանի համանման ցուցանիշն, ի տարբերություն մարզերի, այս նույն ժամանակահատվածում կազմել է 231,3%՝ Լոռու մարզի ցուցանիշին գերազանցելով 13 անգամ: Այս անհամաչափությունները մեծապես պայմանավորված են երեք հիմնական ոլորտներով՝ ֆինանսական ծառայություններ, կապ, տրանսպորտ և պետական կառավարում, որը որոշակի առումով, արդյունք է գրանցման վայրով ծառայությունների տարածքային բաշխման:



Գծապատկեր 9. Միջին հաշվով մեկ բնակչին բաժին ընկնող ծառայությունների ծավալը, դրամ [3]

Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ 2005-2017թթ. մարզի արտաքին ապրանքաշրջանառության ծավալները մշտապես աճի միտում են դրսևորել (տե՛ս գծապատկեր 10): Առևտրային հաշվեկշռի մնացորդը մշտապես հավելուրդով է եղել՝ կազմելով միջինը 67,07 մլն. ԱՄՆ դոլար:



Գծապատկեր 10. Արտահանման և ներմուծման դինամիկան Լոռու մարզում (ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների), հազ. դոլար [3]

Մարզի արտահանման ծավալները 2017թ. կազմել են 198,77 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով 2.1% աճ, իսկ ներմուծման ծավալները 87,14 մլն. ԱՄՆ դոլար՝ ևս աճելով 16,2%: 2017թ. Լոռու մարզի արտահանումը կազմել է ՀՀ արտահանման 8,9%-ը՝ 2016թ. համեմատությամբ նվազելով 2%-ով՝ զիջելով միայն Երևանին և Սյունիք մարզին (տե՛ս գծապատկեր 11): Մարզից հիմնականում արտահանվում է կոնվերտորային (սև) պղինձ, պղնձի խտանյութ, գազակտրիչ սարքեր, հագուստ, պանիր, պահածոներ և այլն:



Գծապատկեր 11. Լոռու մարզի տեսակարար կշիռը ՀՀ արտահանման և ներմուծման կազմում, % [3]

Տարածաշրջանային մակարդակով գնաճի ուսումնասիրության դեպքում նկատում ենք, որ մարզում ՍԳԻ-ն գրանցում է հանրապետական ցուցանիշից չնչին չափով տարբերվող արժեք (տե՛ս գծապատկեր 12), քանի որ մեր հանրապետության տարածքի փոքրության, մարզերի կտրվածքով տնտեսական համեմատական անկախության բացակայության պատճառով չեն ձևավորվում ռեգիոնալ գներ:



Գծապատկեր 12. Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում և Լոռու մարզում, նախորդ տարվա նկատմամբ, %[3]

2017թ. ևս մարզում գրանցված գնաճը համահունչ է եղել հանրապետական ցուցանիշին:



Գծապատկեր 13.
ՍԳԻ-ն Լոռու մարզում 2017թ.
(նախորդ ամսվա համեմատ, %) [3]



Գծապատկեր 14.
ՍԳԻ-ն ՀՀ-ում 2017թ.
(նախորդ ամսվա համեմատ, %) [3]

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն

2017թ. զգալի փոփոխություններ են նկատվել նաև ներդրումների ծավալում: Նախորդ տարվա 21126,5 մլն. դրամի համեմատ 2017թ. մարզում ներդրումների ծավալի 64% աճ է գրանվել՝ կազմելով 34645,2 մլն. դրամ:



Գծապատկեր 15. 2017թ. Լոռու մարզում իրականացված ներդրումների կառուցվածքն՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների, % [1, 11]

2017թ. մարզում կատարված ներդրումների գերակշիռ մասը՝ 56,7%-ը, ֆինանսավորվել է պետական բյուջեի միջոցներից, 2016թ. նկատմամբ գրանցելով 184,2% աճ: Աճ է գրանցվել նաև ֆինանսավորման աղբյուրների մեջ իր տեսակարար կշռով 2-րդ տեղը գրավող մասնավոր ներդրումների ծավալում՝ 19,9%, իսկ ֆինանսավորման մնացած բոլոր աղբյուրները զգալի անկում են ապրել:

Ոլորտային կտրվածքով ներդրումների ուսումնասիրության ժամանակ նկատում ենք, որ 2017թ. ներդրումների բավականին զգալի մասն իրականացվել է ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ՝ 15 654,1 մլն. դրամ, որի գերակշռող մասը՝ 12118,5 մլն. դրամը ներդրվել է ճանապարհաշինության ոլորտում՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2,9 անգամ: Նկատելիորեն աճել է նաև գյուղատնտեսության ոլորտում կատարված ներդրումների ծավալը 2016թ. ցուանիշի համեմատ աճելով 13,6 անգամ: Նվազում նկատվել է միայն «Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված»-ի ոլորտում իրականացված ներդրումների ծավալում՝ 0,9 անգամ:



Գծապատկեր 16. Լոռու մարզում կատարված ներդրումների ծավալներն՝ ըստ ոլորտների [1, 11-12]

Մարզում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացմանը, տարածքային մրցունակության բարձրացմանը, տարածքային տնտեսությունների դիվերսիֆիկացմանը, գյուղական բնակչության բարեկեցության ապահովմանը և կենսամակարդակի բարձրացմանը նպաստելու գործում կարևոր նախապայմաններից է հանդիսանում արդյունավետ տարածքային կառավարման համակարգի առկայությունը: Ներկայումս հայաստանում գործող տարածքային կառավարման համակարգ չի նպաստում տարածքային զարգացման ապահովմանը: Մարզպետները զուրկ են տնտեսական զարգացման ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմից, նրանց լիազորությունների գերակշիռ մասը կապված է ուղղակի կառավարման և համակարգման հետ:

Հիմք ընդունելով այս ամենը՝ 2019թ. հունվարի 1-ից հանրապետությունում կսկսի գործել տարածքային կառավարման նոր համակարգ, որի շրջանակներում փոփոխության կենթարկվեն մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակն ու մարզպետարանի ստորաբաժանումների կառուցվածքը:

Մարզային ներդրումային և տնտեսական այլ ծրագրերի ֆինանսավորման և իրականացման նպատակով մարզերում ձևավորվելու են մարզային զարգացման հիմնադրամներ: Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները՝

- ներդրումների ներգրավում,
- դոնորների հետ տարվող աշխատանք,
- գործարարության և գյուղատնտեսության աջակցում,
- ներդրումային ծրագրերի պատրաստում և իրականացում,
- իրականացվող ծրագրերի մշտադիտարկում [2, 23]:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ մարզի տնտեսական վիճակի փոփոխություններն ու գրանցած արդյունքները հիմնականում համահունչ են եղել հանրապետության տնտեսական զարգացումներին:

Որպես մարզի տնտեսության լոկոմոտիվ եղել և շարունակում է մնալ հանքարդյունաբերության ճյուղը, որն իր դրական նպաստումն է ունեցել նաև մարզի մշտապես դրական մնացորդով առևտրային հաշվեկշռի ձևավորմանը:

Ինչ վերաբերում է մարզի մակարդակով 1 շնչին բաժին ընկնող մակրոտնտեսական ցուցանիշներին, ապա նկատում ենք, որ նրանք մշտապես զգալիորեն զիջել են համապատասխան միջին հանրապետական և մայրաքաղաքային ցուցանիշներին՝ ինչը ևս մեկ անգամ հաստատում է տարածքային անհամաչափ զարգացման փաստը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017թ. աշխատանքային գործունեության հաշվետվություն:
2. Տարածքային կառավարման հայեցակարգ, 2017թ.:
3. www.armstat.am
4. www.mtad.am

Анализ макроэкономических показателей, характеризующих социально-экономическое положение Лорийской области

Акобджанян Лаура
Историко-географический факультет,
«Общественное управление»,
руководитель – к.э.н. Г. Папоян

Резюме

Ключевые слова: *промышленность, сельское хозяйство, услуги, ИПЦ, розничная торговля, экспорт, импорт, инвестиции*

В статье представлена динамика промышленного и сельскохозяйственного производства, розничной торговли, услуг, экспорта и импорта, объема инвестиций в регионе Лори РА и удельный вес области в тех же республиканских показателях.

Мы также коснулись изменений, которые будут внесены в территориальную систему управления, которые окажут положительное влияние на улучшение экономической ситуации в регионе.

Analysis of Macroeconomic Indicators Characterizing Socio-Economic Situation of RA Lori Region

Hakobjanyan Laura
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: H. Papoyan,
Ph. D in Economics

Summary

Key words: *industry, agriculture, services, CPI, retail trade, export, import, investments*

The dynamics of industrial and agricultural production, retail trade, services, exports and imports, the volumes of investments made in the Lori Region and similar specific weight registered by the region in the national indexes are presented in this article. The changes to be made in the territorial system of government which will have a positive impact on the economic situation of the region are also touched upon.

Քաղաքական մշակույթի ըմբռնումը և բնորոշումը

Մանուկյան Արսեն
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
պ.գ.թ. Ա. Կոխլիկյան

Հանգուցային բառեր. *քաղաքական մշակույթ, բաղադրատարրեր, գիտակցություն, պետական ապարատ, քաղաքականություն, տեսություն*

Քաղաքական մշակույթը հասարակության քաղաքական կյանքի կարևոր բաղադրատարրերից է, որն ունի իր առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները: Այն դրսևորվում է հասարակության քաղաքական գործընթացներում և հանդես է գալիս որպես այդ գործընթացների որակական բնութագրման գործոն: Քաղաքական մշակույթ հասկացությունում դրսևորվում են ինչպես քաղաքականությանը, այնպես էլ մշակույթին վերաբերող արժեքներ: Այս առումով քաղաքական մշակույթը քաղաքագիտության և մշակութաբանության անհրաժեշտ հասկացություններից է [1, 43]:

Քաղաքականությունը և մշակույթը փոխկապակցված են և հանդես են գալիս որպես հասարակության կենսագործունեության կարգավորիչներ: Մշակույթը ներթափանցում է քաղաքականության ոլորտ, ազդում է իշխանության իրականացման եղանակների վրա: Քաղաքականության վրա մշակույթի ազդեցության հիմնական ուղիներից է անձի սոցիալականացումը, որը հնարավորություն է տալիս նրան մասնակցելու քաղաքական կյանքին, արժեքների համակարգի ստեղծմանը, վարքի չափանիշների ձևավորմանը և այլն: Քաղաքականությունն իր հերթին կարող է որոշակի ներգործություն ունենալ մշակույթի վրա, նրան հաղորդել այս կամ այն ուղղվածությունը: Ընդհանրապես մշակույթի զարգացումը կախման մեջ է քաղաքական վերափոխումներից: Իրենց առանձնահատկությունների դրսևորմամբ քաղաքականության և մշակույթի փոխկապակցվածությունը արտահայտվում է քաղաքական մշակույթի մեջ:

Քաղաքականությունը քաղաքական հարաբերությունների ոլորտում կոնկրետ, իրացվող գործողություն է, իսկ քաղաքական մշակույթը այդ գործունեության բնութագրումը, իմացության և գիտակցման աստիճանը: Քաղաքական մշակույթի գործունեության ոլորտը հասարակական քաղաքական կյանքն է, որն ընդգրկում է այն բոլոր հասարակական հարաբերությունները, գործունեության տեսակները, որոնք կապված են իշխանության և կառավարման իրականացման հետ, այն ամենը, ինչը շոշափում է իշխանության և կառավարման հիմնահարցերը, մարդկանց մասնակցությունը քաղաքականությանը [2, 142]:

Քաղաքական մշակույթը մարդկային հասարակության ընդհանուր մշակույթի համընդհանուր ճանաչում գտած այն ոլորտն է, որն անմիջականորեն կապված է քաղաքականության, մարդկանց քաղաքական գործունեության, վարքագծի և գիտակցության հետ: Քաղաքական մշակույթ հասկացության ներքո հիմնականում հասկանում են ազգային կամ վերազգային հանրույթի պատմական և սոցիալական փորձը, որն ազդում է փոքր և մեծ սոցիալական խմբերի, անհատների քաղաքական կողմնորոշումների, քաղաքական վարքագծի ձևավորման վրա:

Քաղաքական մշակույթ հասկացության մեջ մշակույթ եզրի առկայությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որքաղաքական մշակույթ հասկացությունը որոշակի կապ ունի մշակույթ հասկացության հետ: Քաղաքական մշակույթը՝ որպես հասարակական երևույթ, գտնվում է քաղաքականության և մշակույթի հատման կետում:

Քաղաքական գիտության մեջ և կիրառական և տեսական մակարդակով տրվում են քաղաքական մշակույթի տարբեր մեկնաբանություններ և սահմանումներ: Այս հանգամանքը բացատրվում է ինչպես քաղաքականության և մշակույթի վերաբերյալ եղած բազմաթիվ սահմանումներով, այնպես էլ քաղաքական մշակույթի բարդությամբ: Քաղաքական մշակույթը մի կողմից կարող է դիտվել որպես հասարակության խտացված դրսևորում, ազգային կամ խմբային պատմական փորձի դրսևորում, մյուս կողմից կարող է հանդես գալ որպես վարքագծի ձև:

Քաղաքական մշակույթը մարդկային հասարակության կողմից ստեղծված արժեքների այն մասն է, որը վերաբերում է հասարակական կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը, պետության ու նրա կառույցների ձևավորմանն ու կայացմանը, իշխանության ձևավորման և իրականացման ձևերին ու եղանակներին, քաղաքական համակարգերի բնույթին ու գործառույթներին, քաղաքական կազմակերպությունների, պետության և իշխանությունների փոխհարաբերություններին, քաղաքական գործընթացներին և նրա մասնակիցներին, քաղաքական սուբյեկտների փոխհարաբերություններին ու գործունեության սկզբունքներին [1, 390]:

Մասնագիտական գրականության մեջ հիշյալ հասկացության վերաբերյալ չկա մեկ միասնական, ընդունված մոտեցում: Այդ է պատճառը, որ այսօր քաղաքական մշակույթի վերաբերյալ տրվել է մոտ քառասուն սահմանում՝ տրված տարբեր սերունդների մասնագետների կողմից: «Քաղաքական մշակույթ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է 18-րդ դարի գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը:

Յ. Հերդերը մասնավորապես գրել է. «...հին հույն իմաստունների մեծամասնությունը զբաղեցնում էր հանրային պաշտոններ՝ որպես ժողովրդական առաջնորդներ, թագավորների խորհրդականներ, զորահրամանատարներ, քանզի նման նշանավոր մարդկանցից, արիստոկրատներից կարող էր միայն սկիզբ առնել քաղաքական մշակույթը և գործուն կերպով ազդել ստորին խավի մարդկանց վրա»:

Հրապարակվելուց մոտավորապես 170 տարի անց՝ 20-րդ դարի 50-ական թվականների վերջին՝ 60-ական թվականների սկզբին, ամերիկյան քաղաքագիտական մտքի շրջանակներում ձևավորվել և գիտական շրջանառության մեջ է դրվել «քաղաքական մշակույթ» հասկացությունը նկարագրող տեսությունը [6, 368], համաձայն որի քաղաքական մշակույթը բնորոշվում է որպես վարքագծի, արժեքների, դիրքորոշումների ամբողջություն, որը վերաբերում է իշխանության և քաղաքացիների միջև փոխադարձ հարաբերություններին: Այս սահմանմամբ էլ առաջնային են համարվում իշխանության և քաղաքացիների փոխհարաբերությունները [4, 407]:

Համաձայն մեկ այլ սահմանման. «Քաղաքական մշակույթը կարելի է սահմանել որպես խորհրդանշական համակարգ, որն ընդգրկում է քաղաքական ավանդույթներ, քաղաքական նորմեր և արժեքներ, քաղաքական գաղափարներ

և ապագայի ծրագրեր» [7, 224]: Ինչպես երևում է սահմանումից, այն ընդգրկում է երեք ժամանակաշրջան՝ անցյալը, որն ամրագրված է քաղաքական ավանդույթներում, ներկան, որն արտահայտված է տվյալ ժամանակի քաղաքականության սուբյեկտների վարքի և նորմերի մեջ, և ապագան, որն ամփոփում է ապագայի նպատակներ:

Քաղաքական մշակույթ հասկացությունն առավել համապարփակ և համակողմանի ուսումնասիրել է քաղաքական փիլիսոփայության ականավոր մասնագետ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Բատալովը:

Է. Բատալովը կարծում է, որ եթե մշակույթը հասարակական ինքնավերարտադրության միջոց է, ապա քաղաքական մշակույթը՝ որպես մշակույթի արտահայտություն քաղաքականության ոլորտում, հասարակության քաղաքական կյանքի ինքնավերարտադրության միջոց է [8, 20-21]:

Ամբողջացնելով իր միտքը՝ նա առաջարկում է «քաղաքական մշակույթ» հասկացության հետևյալ ընդարձակ սահմանումը. «Քաղաքական մշակույթը պատմականորեն ձևավորված, հարաբերականորեն կայուն, անցյալ սերունդների փորձը մարմնավորող, դիրքորոշումների, համոզմունքների, պատկերացումների, վարքագծի մոդելների համակարգ է: Այն արտացոլվում է քաղաքական գործընթացի սուբյեկտների անմիջական գործունեության մեջ՝ ամրագրելով նրանց առնչությունների սկզբունքներն ինչպես այդ ամբողջական գործընթացի, այնպես էլ նրա առանձին տարրերի, քաղաքական համակարգի նկատմամբ, որի շրջանակներում ընթանում է այդ գործընթացը, և դրանով իսկ ապահովվում է հասարակության քաղաքական կյանքի վերարտադրությունը՝ իրավահաջորդության հիմքի վրա: Այս սահմանման էությունը կարելի է առավել համառոտ ձևակերպել հետևյալ կերպ. քաղաքական մշակույթը՝ որպես ընդհանրական հասկացություն, բնութագրում է սոցիալական սուբյեկտների՝ ազգերի, դասերի, խմբերի, անհատների գոյության ձևը՝ որպես քաղաքական գործընթացների սուբյեկտներ»:

Ինչպես երևում է սահմանումից, այստեղ քաղաքական մշակույթը բնորոշվում է որպես նախորդ սերունդների փորձ, որն ամրագրված է տվյալ ժամանակի քաղաքական գործընթացների սուբյեկտների՝ անհատի, սոցիալական խմբի, ազգի, հասարակության դիրքորոշումներում, համոզմունքներում, վարքագծում և արտահայտվում է նրանց անմիջական գործունեության մեջ: Ուսումնասիրելով քաղաքական մշակույթի վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ, որոնք բացահայտում են հիշյալ հասկացության էությունը, կարելի է ասել, որ հիմնական վեճը տարբեր հեղինակների միջև ընթանում է հիմնախնդրի այս կամ այն կողմի վերաբերյալ: Քաղաքական մշակույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա բազմաթիվ սահմանումները, որոնք լրացնում են մեկը մյուսին այս կամ այն չափով, գրեթե բոլորն էլ ընդունվում են համաշխարհային քաղաքական գիտության կողմից:

Եթե նշված քաղաքական մշակույթի բոլոր բնորոշումները դիտարկենք մեկ միասնության մեջ, ապա կունենանք քաղաքական մշակույթի լրիվ և ամբողջական պատկերացումը: Բայց այս դեպքում էլ, մենք կունենանք ոչ թե քաղաքական մշակույթի սահմանումը, այլ նրա առանձնահատկությունների, բնույթի ու բովանդակության մանրամասն վերլուծությունը:

Քաղաքական մշակույթի առանձնահատկությունն այն է, որ ոչ թե կազմում է

քաղաքականությունը կամ քաղաքական գործընթացը, այլ դրանց ըմբռնումն ու մեկնաբանումը: Քաղաքականության ոլորտում նշանակություն են ձեռք բերում ոչ միայն պետության կողմից ձեռնարկված իրական գործողությունները և միջոցները, այլ նաև այն, թե ինչպես են դրանք գնահատում և ընդունում մարդիկ: Քաղաքական մշակույթը կարելի է ուսումնասիրել նաև որպես սոցիալական հարաբերությունների, մշակութային նորմերի, կարծրատիպերի և քաղաքական գործընթացների միջնորդ: Ցանկացած հասարակության քաղաքական մշակույթին բնորոշ է իր առանձնահատկությունները, որոնք արտացոլում են միայն տվյալ հասարակությանը ներհատուկ նորմերը, արժեքները, կարծրատիպերը, քաղաքական մասնակցության ձևերը և իշխանական հարաբերությունները: Քաղաքական մշակույթի վրա իրենց հետքն են թողնում պատմական պայմանները և ազգային ավանդույթները, աշխարհայացքային պատկերացումները, կրոնական հայացքները և այլն: Այստեղ նաև էական դեր են խաղում հիմնականում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, քաղաքական վարչաձևը, կրթական մակարդակը և բնակչության իրավական մշակույթը:

Քաղաքական մշակույթը դիտվում է նաև որպես քաղաքական գործողության եղանակ, այդ գործունեության բնութագրում: Խոսքը գնում է այն մասին, որ նշված արժեքները, պատկերացումները և կողմնորոշումները, որպես քաղաքական մշակույթի հիմք, մարմնավորում են պրակտիկ գործունեության ձևերում:

Քաղաքական մշակույթը բնորոշվում է նաև որպես «պատմականորեն ձևավորված, մարդկանց նախորդ սերունդների հարաբերական կայուն փորձը մարմնավորող դիրքորոշումների, գիտելիքների, համոզմունքների և սկզբունքների համակարգ, որը դրսևորվում է քաղաքական գործընթացները իրականացնող սուբյեկտների գործունեության մեջ» [9, 379]:

Քաղաքական մշակույթի վերաբերյալ ներկայացված տարբեր մոտեցումներում կա մի ընդհանրություն. դա քաղաքականության սուբյեկտների՝ անձի, սոցիալական խմբի, ազգի, հասարակության քաղաքակրթվածության աստիճանն է, նրանց ընդունակությունը յուրացնելու քաղաքական վարքագծի և գործողության որևէ սկզբունք:

Հիմնվելով վերոհիշյալ սահմանումների և վերլուծության վրա՝ մենք փորձել ենք տալ քաղաքական մշակույթի հետևյալ սահմանումը. քաղաքական մշակույթը որևէ որոշակի երկրի բնորոշ քաղաքական կյանքի՝ նախորդ սերունդների կողմից ստեղծված հասարակության կազմակերպմանն ու կառավարմանն առնչվող քաղաքական արժեքների, նորմերի, հայացքների, վարքի ձևերի մշտապես փոփոխվող համակարգ է, որն ամրագրված է տվյալ ժամանակի քաղաքականության սուբյեկտների՝ անհատի, սոցիալական խմբի և առավել լայն իմաստով ազգի, հասարակության դիրքորոշումներում, համոզմունքներում, պատկերացումներում, վարքի ձևերում, արտահայտվում է նրանց անմիջական քաղաքական գործունեության մեջ, հարստացվում է նրանց կողմից ժամանակի քաղաքական կյանքում ընդունված քաղաքական նոր արժեքներով, նորմերով, հայացքներով, վարքի ձևերով և փոխանցվում հասարակության քաղաքական կյանքի հաջորդ սերնդին:

Առաջարկելով նման սահմանում՝ մենք նկատի ունենք, որ քաղաքական մշակույթը քաղաքական սուբյեկտների, այն է՝ անհատի, սոցիալական խմբերի,

հասարակության, ազգի քաղաքական վարքագծի տիպերի, արժեքային կողմնորոշումների, գիտելիքների իրացման միջոցների ամբողջական համակարգ է:

Այսպիսով, քաղաքական մշակույթը իր մեջ ներառում է քաղաքական սուբյեկտի զարգացման մակարդակը, նրա քաղաքական գործունեությունն ու այդ գործունեության արդյունքը, որոնք առարկայացված են համապատասխան հասարակական-քաղաքական կառույցների և հարաբերությունների մեջ: Ընդհանրապես մշակույթն ունենում է որոշակի նորմեր ու վարքագծի կանոնոր կյանքի տարբեր բնագավառների ու տարբեր իրավիճակների համար, այդպես էլ քաղաքական մշակույթը սահմանում է վարքագծի նորմեր ու խաղի կանոններ քաղաքական բնագավառի համար: Առանձին անհատին այն տալիս է քաղաքական վարքագծի ղեկավարման սկզբունքներ, իսկ կոլեկտիվին՝ արժեքների ու կողմնորոշումների համակարգ, որն ապահովում է միասնություն:

Քաղաքական մշակույթը որոշ իմաստով սահմանում է շրջանակ, որի մեջ հասարակության անդամներն ընդունում են գոյություն ունեցող հասարակական կառավարման ձևն իբրև օրինական կամ մերժում են այն:

Այս մշակույթը նպաստում է վարքագծի որոշակի ձևավորմանը, նրանց տալիս է որոշակի ուղղվածություն: Քաղաքական մշակույթի մեջ են մտնում տվյալ հասարակությանը բնորոշ քաղաքական գիտելիքները, նորմերը, կանոնները, սովորույթները, քաղաքական վարքագծի, գնահատականների կարծրատիպերի, քաղաքական փորձն ու ավանդույթները, դաստիարակությունն ու սոցիալականացումը: Քաղաքական մշակույթը կարելի է բնութագրել որպես որոշակի մտածելակերպ, քաղաքականության մասին պատկերացումների ամբողջականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Ռ., Քաղաքագիտություն, Երևան, 2004:
2. Ստեփան Հասան-Ձալալյան, «Քաղաքական Մշակույթ» հասկացությունը և հիմնարար սահմանումները:
3. Ղահրամանյան Կիմ, Քաղաքագիտություն, Երևան, 2005:
4. Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան խմբագիր՝ Մակլին Ա., Երևան, 2003,
5. Галкин А.А. Становление политической науки: М., 1991.
6. Гердер И., Идеи к философии истории человечества, перевод и примечания А.Михайлова, Москва, 1977.
7. Панарин А. Политология, Москва, 1997.
8. Баталов Э.Политическая культура современного американского обшества. М., 1990.
9. Политология. Курс лекций, под ред. Радугина, М., 1999.

Понимание и определение политической культуры

Манукян Арсен
Историко-географический факультет
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации –
к. ист. н. А. Кохликян

Резюме

Ключевые слова: *политическая культура, составляющие, сознание, государственный аппарат, политика, теория*

Эта статья посвящена восприятию и описанию термина «Политическая культура». Проанализированы подходы школ политологии и культурологии, связанные с термином политической культуры. Отдельно представлены взаимосвязь и взаимодействие политики и культуры.

Understanding and Defining Political Culture

Manukyan Arsen
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: A. Kokhlikyan,
Ph. D in History

Summary

Key words: *political culture, components, consciousness, state apparatus, politics, theory*

This article is devoted to the perception and describtion of the term "Political culture". Political Science and Culturological schools approaches concerning the term of political culture have been raised and analysed. All the important decisions given by them have been discussed. The interconnection and interaction of politics and culture have been introduced seperately.

Անկայուն տնտեսության պայմաններում ինֆլյացիոն տեղաշարժերի վերլուծությունը ՀՀ-ում

Միսկարյան Միեր
Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Ն. Բարսեղյան

Հանգուցային բառեր. *ինֆլյացիա, դեֆլյացիա, փոխարժեք, բյուջե, դրամավարկային քաղաքականություն, տոկոսադրույք*

Ինֆլյացիան տնտեսության մակրոտնտեսական անկայունությունը բնութագրող մեծությունն է, որն արտահայտվում է գների ընդհանուր մակարդակի բարձրացման միջոցով: Ուստի մակրոտնտեսագիտությունը ենթադրում է, որ ցածր գնաճի համադրությունը ֆինանսական հատվածի զարգացման հետ որոշիչ և կարևոր դեր է խաղում կայուն տնտեսական աճի ձեռքբերման համար: Գնաճն այն կարևոր խոչընդոտներից է, որը բացասական ազդեցություն է թողնում ֆինանսական հատվածի և տնտեսական աճի վրա: Ինֆլյացիայի բարձր տեմպերը կապված են դրամական զանգվածի ավելացման հետ, որի արդյունքում փողը արժեզրկվում է, գներն աճում են, և հետևաբար խախտվում են տնտեսական համեմասնությունները: Ինֆլյացիա կարելի է համարել առաջարկի և պահանջարկի անհավասարակշռություն, որն արտահայտվում է գնաճով:

Լայդլերն ու Պարկինը ինֆլյացիան սահմանում են որպես «գների շարունակական աճի, կամ որ նույնն է, փողի արժեքի շարունակական անկման գործընթաց» [6, 741]: Ինֆլյացիա դեռևս չի նշանակում բոլոր ապրանքների թանկացում, բայց միևնույն ժամանակ այն նշանակում է «կյանքի որակի» թանկացում:

Համաձայն «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ որպես ԿԲ առաջնային նպատակ սահմանված է գների կայունության ապահովումը: Գների կայունությունը բառացիորեն չի նշանակում անփոփոխ գներ,այլ նշանակում է գների դանդաղ և կայուն աճ: Գների չափավոր աճը նպաստում է արտադրության ծավալների ընդլայնմանն ու տնտեսության զարգացմանը, և հակառակը՝ գնանկումը կարող է նվազեցնել արտադրության խթանները: Գների այն մակարդակը, որը, տվյալ երկրի տնտեսության առանձնահատկություններից ելնելով, առավել համապատասխանում է գների կայունության վերոնշյալ սահմանմանը, ընտրվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: Ինֆլյացիայի նպատակային մակարդակն ամրագրվում է յուրաքանչյուր տարվա «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում [5]: 2007 թվականից սկսած՝ ՀՀ-ում որպես ինֆլյացիայի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝ 1.5% տատանումների թույլատրելի միջակայքով: Գնաճից բխող ռիսկերը առաջանում են դրամական հոսքերի անկանխատեսելիության պատճառով:

Երբ գնաճի մակարդակը բարձր է, ապա տնտեսվարող սուբյեկտները խուսափում են օգտագործել ազգային արժույթը, և վերջինիս նկատմամբ պահանջարկն անկում է ապրում: Որոշ դեպքերում, եթե ամսական կտրվածքով գնաճի

մակարդակը չանցնի 1% սահմանը, կարելի է այն համարել նույնիսկ օգտակար:

Ինֆլյացիայի տեմպն զգալիորեն ազդում է փոխարժեքի մակարդակի վրա. որքան բարձր է ինֆլյացիայի տեմպը, այնքան ցածր է ազգային արժույթի կուրսը, քանի որ արտարժույթի փոխարժեքի ձևավորման հիմքում ընկած է արտարժույթի հարաբերակցությունը՝ ըստ դրանց գնողունակության [1, 9]: Փոխարժեքի դինամիկան զգալիորեն կախված է շուկայական և պետական կարգավորման հարաբերակցությունից, իսկ փոխարժեքի պետական կարգավորումը, մասնավորապես Կենտրոնական բանկի արտարժութային ինտերվենցիաների միջոցով, ուղղված է դրա կա՛մ բարձրացմանը, կա՛մ նվազմանը՝ ելնելով տնտեսական քաղաքականության խնդիրներից [3, 27-28]: Փոխարժեքը կախված է գնաճի աստիճանից և սպասումներից [2, 305-306]: Փոխարժեքը, որպես երկրի ներքին արժույթի արտաքին գին, փոփոխվում է ինչպես ներքին և արտաքին արժույթների քանակական, այնպես էլ դրանց ներքին գնային տոկոսադրույքների փոփոխությամբ՝ հայտնվելով դրամավարկային քաղաքականության ուղղակի ազդեցության ներքո: Կարելի է եզրակացնել, որ երկրում ձևավորվող գնաճի ցուցանիշն ուղղակի կախված է փոխարժեքի փոփոխությունից: Հայաստանի Հանրապետությունում 2003-2008թթ. ընկած ժամանակահատվածում տեղի ունեցավ փոխարժեքի արժևորում՝ 1 դոլլարի դիմաց 590 դրամից (2003թ. մարտ) մինչև 302 դրամ (2008թ., օգոստոս): Փոխարժեքի տատանումներ կարող էին գրանցվել 1 օրվա մեջ հաշված ժամերի ընթացքում: Նման երևույթ տեղի ունեցավ 2014թ.-ի դեկտեմբերին՝ 1 դոլլարի դիմաց հասնելով մինչև 600 դրամի [4]: Այն շատ կարճ ժամանակահատվածում բնակչության մեջ առաջացրեց խուճապ: Մարդիկ բանկերում ներդրած իրենց ավանդները շտապեցին դուրս հանել, որի արդյունքում բանկային շատ կազմակերպություններ հայտնվեցին սնանկացման եզրին: Ի վերջո, ՀՀ Կենտրոնական բանկը ստիպված էր վերանայել առևտրային բանկերի պահուստային մնացորդները, որոնցով բանկերը պարտավոր էին բավարարել ավանդ ներդնողների նվազագույն փոխհատուցումները: Փոխարժեքի տատանումներից է կախված նաև երկրում ապրանքների գների տատանումները, մասնավորապես փոխարժեքի արժեզրկումը հանգեցնում է արտահանելի ապրանքների հարաբերական գների աճի և դրանց նկատմամբ հարաբերական պահանջարկի նվազման:

Ներկայացող աշխատանքում առանձնացրել ենք տարբեր տարիների ընթացքում ՀՀ-ում ինֆլյացիայի տեմպերի աճի նկարագիրը և դրա վրա ազդող գործոնները: ՀՀ տնտեսության զարգացման դինամիկայի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ 1990թ.-ից մինչև 1994թ.-ին, հիպերինֆլյացիան կաթվածահար էր արել տնտեսությունը: Ազգային արժույթը դադարել էր արդյունավետ իրագործել շրջանառության, վճարման և կուտակման ֆունկցիաները: Չնայած պաշտոնական վիճակագրությունը արձագանքում էր ՀՆԱ-ի մինչև 50 տոկոս հասնող անկում, սակայն իրականում տնտեսական անկման մի զգալի մասը գործում է ստվերային հատվածում: 1995թ.-ից ինֆլյացիայի տեմպը զգալի նվազեց, ինչը շատ թե քիչ բարենպաստ միջավայր ստեղծեց տնտեսական աճի համար: Ինչպես հայտնի է, բարձր ինֆլյացիան ստեղծում է ինֆլյացիոն անորոշություն, որն էլ իր հերթին ձևավորում է համապատասխան սպառումներ, որոնք խոչընդո-

տում են ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Ինչպես ցույց է տալիս անցումային տնտեսությունների փորձը, գրեթե բոլոր դեպքերում բարձր ինֆլյացիա ունեցող տնտեսությունները զարգացել են ավելի դանդաղ: Իհարկե, պետք է նշել, որ ինֆլյացիան նաև պայմանավորված է կառուցվածքային գործոններով: Սակայն ինֆլյացիայի դրամական զանգվածի չափազանց շեղվածությունը կարող է ճնշել տնտեսական աճը, իհարկե, եթե տեղի չի ունենում արտադրողական աճով պայմանավորված դեֆլյացիա, որը առողջ երևույթ է, բայց բնորոշ չէ մեր իրականությանը: Հայաստանի տնտեսության ինֆլյացիայի այժմյան վիճակը չի կարելի բնութագրել որպես չափազանց բարենպաստ, քանի որ դրամավարկային կոշտ քաղաքականությանը զուգահեռ գոյություն ունեն բյուջետային մեծ դեֆիցիտներ, և դրանց ֆինանսավորման ոչ ինֆլյացիոն տարբերակը ճնշում է գործադրում մասնավոր հատվածի ներդրումային հնարավորությունների վրա: Դրամավարկային, հակաբյուջետային և արժութային քաղաքականությունները թողնում են անհամաձայնեցվածության տպավորություն: Թվում է, թե տնտեսական քաղաքականության նպատակը միայն գների կայունությունն է: Սակայն պետք է հիշել, որ դեֆլյացիան նույնքան անցանկալի երևույթ է, որքան ինֆլյացիան: 2011թ. ՀՀ-ում գնաճը կազմել է 5.6 %, 2012թ.-ին՝ (2.6%), 2013թ.-ին՝ (5.8%), 2014թ.-ին՝ (5.5%):

Չնայած գնանկումային որոշակի ռիսկերի դրսևորմանը, 2016թ.-ի չորրորդ և 2017 թ. առաջին եռամսյակներում, ինչպես և սպասվում էր, 12-ամսյա գնաճը էականորեն ավելացել է՝ մարտի վերջին կազմելով -0.1% (2016թ.-ն ավարտվել է -1.1% ցուցանիշով): Նշենք, որ այս ժամանակահատվածում գնաճային զարգացումները մեծ մասամբ կրել են ԿԲ-ի կողմից իրականացված, ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Հաշվի առնելով 2016թ. հոկտեմբեր-2017թ. մարտ ժամանակահատվածում դեռևս պահպանվող ցածր ներքին պահանջարկը՝ արտաքին հատվածից պարենային, իսկ ավելի ուշ՝ ոչ պարենային ապրանքներին փոխանցվող գնանկումային ազդեցությունները, ինչպես նաև 2017թ. Կառավարության կողմից նախանշված զսպողական հարկաբյուջետային քաղաքականության ընկալվող ազդեցությունը, ԿԲ այդ ընթացքում շարունակել է դրամավարկային պայմանների մեղմումը՝ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր հաշվով 0.75 տոկոսային կետով՝ փետրվարի վերջին սահմանելով 6.0%:

2017թ. երկրորդ եռամսյակում գնաճը զգալիորեն ավելացել է՝ հիմնականում պայմանավորված գյուղմթերքի գների բարձր մակարդակների ձևավորմամբ, որի հետևանքով ապրիլից 12-ամսյա գնաճի ցուցանիշն արդեն մտել է դրական տիրույթ՝ եռամսյակի ընթացքում տատանվելով միջին հաշվով 1.3 տոկոսի սահմաններում: Այդ ժամանակահատվածում 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝խթանող դրամավարկային քաղաքականության ներքո նախորդ եռամսյակի -0.9 տոկոսից բարձրանալով 0.3 տոկոսի: Երրորդ եռամսյակում արդեն դիտվել է մրգի և բանջարեղենի գների 12-ամսյա աճի տեմպերի դանդաղում, ինչը զսպել է գնաճի վերականգնումը, որը միջինում գտնվել է 1 տոկոսի սահմաններում, այն դեպքում, երբ 12-ամսյա բնականոն գնաճը շարունակվել է աճել արագ տեմպերով՝ եռամսյակի վերջում կազմելով 1.9 տոկոս: Նշենք, որ հոկտեմբերին թե՛ ընդ-

հանուր թե՛ բնականոն գնաճերը ավելացել են՝ կազմելով համապատասխանաբար 1.2% և 2.4%, ինչը խոսում է մինչև տարեվերջ սեզոնային գյուղմթերքի գների աճի և գնաճային որոշակի սպասումների կուտակման մեծ հավանականության մասին: Ընդ որում, բնակչության գնաճային սպասումներն աճում են ավելի արագ՝ պայմանավորված պարենային ապրանքների միջազգային շուկայում որոշ մթերքների գների աճով: Ստեղծված իրավիճակում ԿԲ-ն գնահատում է, որ նախկինում իրականացված դրամավարկային քաղաքականությունը բավարար խթանող է եղել գնաճի վերականգնման առումով և մինչև տարեվերջ դեռևս փոխանցելու է իր ազդեցությունը: Դրանից ելնելով՝ ԿԲ երկրորդ և երրորդ եռամսյակներում անփոփոխ է թողել դրամավարկային պայմանները՝ պահպանելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 6% մակարդակում: 2017թ. երրորդ եռամսյակում արձանագրվել է 2.8% գնաճ (կանխատեսված 1.8%-ի), որը բացառապես պայմանավորվել է սեզոնային պարենային ապրանքների սպասվածից քիչ գնաճով, մասնավորապես միրգ, բանջարեղեն ու կարտոֆիլ ապրանքախմբերի համապատասխանաբար՝ 32.4% և 37.6% գնաճով [5]:

Այսպիսով, ինֆլյացիան պայմանավորված է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կայուն մակրոտնտեսական անհաշվեկշռվածությամբ, որը բնութագրվում է ամբողջ տնտեսական գործընթացի խանգարումներով և պահանջում է անհետաձգելի կարգավորում, ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ», հետազոտական խմբի ղեկավար Ս.Ս Սուքիասյան, «Ամբերդ» մատենաշար, Երևան, 2014:
2. Акопова Е.С, Воронкова О.Н., Мировая экономика и международные экономические отношения, Феникс, 2001.
3. Международные валютно-кредитные отношения, учебник, под общей ред. Н.П.Гусакова, М., 2008.
4. www.armstat.am
5. www.cba.am
6. Laidler D., Parkin M., Inflation-A Survey Economic Journal,1975, December 85.

Анализ инфляционных сдвигов в условиях экономической нестабильности в РА

Мискарян Мгер
Историко-географический факультет
«Общественное управление»
руководитель магистерской диссертации –
к.э.н., доцент Н. Барсегян

Резюме

***Ключевые слова**: инфляция, дефляция, обменный курс, бюджет, денежно-кредитная политика, процентная ставка*

Инфляция – это процесс, характеризующий макроэкономическую нестабильность экономики, что выражается повышением общего уровня цен и играет важную роль в стабилизации экономического роста.

В статье представлены виды инфляции и правовые основы защиты. Рассмотрен анализ взаимосвязи темпов инфляции и уровня курсов валюты. Приведен также ряд статистических данных, которые характерезуют состояние инфляции и финансовых структур в РА. В статье предствлена также общая картина инфляционных колебаний за последние годы, на основе которых предложены подходы по решению данной проблемы.

Inflationary Shifts Analysis in Conditions of Economic Instability in the RA

Miskaryan Mher
Faculty of History and Geography,
Public Management,
Academic Supervisor: N. Barseghyan,
Ph. D in Economics, Associate Professor

Summary

***Key words:** inflation, deflation, exchange rate, budget, monetary policy, interest rate*

The article touches upon some obsepvation on inflationary shifts analysis in conditions economic instavility in the RA. Inflation is a process that characterizes the macroeconomic instability of the economy, which is expressed by an increase in the general price level and plays an important role in stabilizing economic growth.

The article presents the types of inflation and the legal basis for protection. The article analyzes the interrelation between inflation rates and the level of currency exchange rates. A number of statistical data that characterize the state of inflation and financial structures in the RA are also presented. The article discusses a general picture of inflationary fluctuations in recent years, as will as some approaches to solve this problem completely.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ

EDUCATION MANAGEMENT

Կրթությունը՝ որպես տնտեսական աճի գործոն

Դիլանյան Սերինե
Մանկավարժության ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ.գ.թ. Ա. Խառատյան

Հանգուցային բառեր. *տնտեսություն, տնտեսական աճ, կրթություն, կրթության որակ, հասարակություն, գիտություն*

«Մարդկային կապիտալում մտավոր ներուժի առկայությամբ են պայմանավորված հասարակության զարգացման տեմպերը և որակը [1, 173]: Ամերիկացի տնտեսագետ Թեոդոր Շուլցը դեռևս 1960-ական թվականներին մարդկային կապիտալի վերաբերյալ իր տեսության մեջ ընդգծում էր կրթական կապիտալի առանցքային դերը մարդկային կապիտալում, հետևաբար երկրների տնտեսական զարգացման գործընթացներում»:

Վերլուծելով Գերմանիայի և Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսությունների վերականգնման պատճառահետևանքային կապերը, Շուլցը եկավ եզրակացության, որ դա հիմնականում պայմանավորված էր առողջ և կրթված քաղաքացիների բարձր տեսակարար կշռով այդ երկրների բնակչության կազմում, քանի որ կրթված քաղաքացիները ավելի ստեղծագործ են ու արտադրողական: Շուլցի տեսության հիմնադրույթները հետագայում զարգացվեցին Գարի Բերքերի կողմից՝ նույնպես կարևորելով կրթական բաղադրիչի դերը մարդկային կապիտալում [2, 108]:

Հ. Բեքերի տեսակետով մարդկային կապիտալը ձևավորվում է կրթության միջոցով, նրանում կատարվող ներդրումների հաշվին, արտադրության մեջ մասնագիտական պատրաստումներով, առողջապահական և սոցիալական ծախսերով, ինչպես նաև միգրացիայով և տեղեկատվությամբ:

Հասարակության տնտեսական կյանքում կրթության դերի բացահայտման մեջ ծանրակշիռ ներդրում ունեն տնտեսագիտության դասականները՝ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Ֆ. Լիստը և այլոք: Մասնավորապես, Ա. Սմիթը պնդում էր, որ կրթության վրա կատարված ծախսերն ու ժամանակը փոխհատուցվում են աշխատանքի գնով և որ կրթության նկատմամբ ընդունակությունը անհատի հիմնական կապիտալն է, քանի որ իրականանում է նրա անձի բնավորության միջոցով: [3, 569] Դ. Ռիկարդոն՝ երկրների ետ մնալու պատճառներից մեկը տնտեսական զարգացման մեջ, համարում էր կրթության անբավարարությունը հասարակության բոլոր շերտերում [4, 208]: Մարդկային կապիտալի զարգացման մեջ հիմնական ներդրումը կատարվում է կրթության վրա ծախսերով, ներառյալ հատուկ մասնագիտական և ընդհանուր մասնագիտական կրթությունը:

Համաշխարհային բանկի գնահատականներով զարգացած երկրների ազգային հարստության կառուցվածքում գերակշռում է մարդկային կապիտալը, որի շնորհիվ վերարտադրության և զարգացման գլխավոր գործոն է հանդիսանում ոչ թե նյութական բարիքների կուտակումը, այլ գիտելիքների տիրապետումը, կարողությունների, հմտությունների ձեռք բերումը: Օրինակ, ԱՄՆ-ի տնտեսական հարստության մոտավորապես 70%-ը ստեղծվում է կրթված և բարձր մասնագիտական որակավորում ունեցող մարդկային կապիտալի շնորհիվ [5, 87]: Ներկայումս զարգացած բոլոր երկրների տնտեսական աճի տեմպերը որոշվում են գիտության և տեխնիկայի առաջնահերթ ուղղությունների զարգացման

մասշտաբներով, տեմպերով և բարձրորակ մարդկային կապիտալով, որի գիտելիքները թույլ են տալիս տիրապետել նորարարական մեթոդներին, տեխնոլոգիաներին, կիրառել այն արտադրատեխնիկական և տնտեսական գործունեության ընթացքում, այդպիսով ապահովելով նրանց ազդեցությունը տնտեսական զարգացումների վրա: Ի վերջո, բարձրորակ կրթության միջոցով արտացոլվում է բարձրորակ մարդկային կապիտալ, որը դառնում է երկրների տնտեսական աճի գործոն:

Ժամանակակից էտապում մասնագիտական բարձրորակ կրթությունը դարձել է տնտեսական աճի ռազմավարական գործոն, իսկ նրա աջակցումը և բարեփոխումների ու կատարելագործման արդյունքների կանխատեսումը, բարձրորակ մասնագետների դերի ճանաչումը և գնահատումը տնտեսական զարգացման գործընթացներում՝ երկրների տնտեսական քաղաքականության առարկա: Բարձրորակ կադրերը արտադրատեխնիկական համակարգի ամենադինամիկ տարրերն են, որոնք ստեղծում են նոր գաղափարներ, նպաստում գիտական հայտնագործությունների ներդրմանը, կիրառմանը և ապահովում գիտատեխնիկական, տեխնոլոգիական, հետևաբար նաև տնտեսական առաջընթացի տեմպերը:

Կրթության զարգացման խթաններից մեկն էլ նրա ընկալումն է՝ որպես մարդկային կապիտալի արտադրության, զարգացման և սոցիալ-տնտեսական աճի գործոն:

21-րդ դարի գլոբալացված բարձր տեխնոլոգիական տնտեսությունը պահանջում է որակյալ մասնագիտական կրթությամբ աշխատակիցներ, որոնք ընդունակ են արագ կողմնորոշվելու և հարմարվելու արտադրական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական և տեղեկատվական գործընթացներում տեղի ունեցող փոփոխություններին: Աշխատողների կրթական մակարդակի բարձրացումը նաև ավելի բարձր աշխատավարձի նախադրյալ է և ընդլայնում է նրանց աշխատանք ունենալու հնարավորությունները: Բարձրագույն կրթությունը մեծացնում է քաղաքացիների մրցակցային ունակությունները աշխատաշուկայում: Որքան բարձր է երկրի բնակչության կրթական մակարդակը, այնքան մեծ է նրանց տնտեսական և մշակութային ակտիվությունը: Բարձրագույն մասնագիտական կրթությամբ քաղաքացիների ներգրավվածությունը տնտեսական ու մշակութային գործընթացներում կարևոր ցուցանիշ է տվյալ երկրում բիզնեսի մակարդակի տնտեսական ու մշակույթային զարգացման հեռանկարի համար:

Բարձրագույն կրթության որակը և մասնագիտական պատրաստվածությունը համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից դիտարկվում է որպես վճռական գործոն ժամանակակից բարձր տեխնոլոգիական տնտեսության համար, ինչը հաստատվում է զարգացած երկրների, որտեղ կրթությունը և գիտությունը գտնվում են բարձր մակարդակի վրա և կարևորվում տնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիական ու մշակութային զարգացումների և մրցողունակության ապահովման համար կրթության, գիտության և առաջընթաց զարգացող տնտեսության միջև արդյունավետ կապի դրսևորումներով: Ըստ գլոբալ մրցունակության ինդեքսի ռեյտինգային աղյուսակում 2017-2018թթ. առաջին տասնյակը կազմում են հետևյալ երկրները (տես աղ. 1) [6, 54]:

Հայաստանի Հանրապետությունը այդ ինդեքսով զբաղեցնում է 85-րդ տեղը:

Առաջին տասնյակի երկրները առաջնակարգ տեղ են զբաղեցնում նաև «Բարձրագույն կրթություն և մասնագիտական պատրաստվածություն» ցուցիչով: Դրանք այն երկրներն են, որտեղ մարդկային կապիտալի զարգացման և որակի ապահովման հատուկ քաղաքականություն է իրականացվում և զգալի ներդրումներ կատարվում կրթության, առողջապահության և մշակութային ոլորտներում: Մարդկային կապիտալի զարգացման մեջ կատարվող ներդրումները թույլ են

տալիս ուղղակիորեն բարձրացնել մարդկանց մասնագիտական որակավորումը և կարողությունները և որպես հետևանք՝ նրանց կողմից կատարվող աշխատանքի արտադրողականությունը և որակը:

Երկիր	Ռեյտինգային տեղը ըստ գլոբալ մրցողունակության	Համաշխարհային մրցունակության ինդեքս
Շվեյցարիա	1	5,9
ԱՄՆ	2	5,9
Սինգապուր	3	5,7
Նիդերլանդներ	4	5,7
Գերմանիա	5	5,7
Հոնկոնգ	6	5,5
Շվեդիա	7	5,5
Մեծ Բրիտանիա	8	5,5
Ճապոնիա	9	5,5
Ֆինլանդիա	10	5,5

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, երկրների տնտեսական աճի տեմպերը որոշվում են.

- Աշխատողների մասնագիտական պատրաստվածությամբ և որակավորմամբ:
- Գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման առաջնահերթ ուղղությունների զարգացման մասշտաբներով և տեմպերով:
- Գիտարտադրական աշխատանքի միջոցների կատարելությամբ և առաջնակարգությամբ [7, 66-67]:

Այսինքն, այն ամենով, ինչը ապահովում է ազգային նախագծերի արագացված իրականացումը և այդ նպատակներով կատարվող ներդրումների ծավալները:

Կրթության ազդեցությունը տնտեսական աճի վրա առավելապես և անմիջականորեն դրսևորվում է գիտական հետազոտությունների և մշակումների ներդրումների միջոցով: Բարձրագույն կրթության համակարգը, պատրաստում է գիտական կադրեր, որոնք դառնում են գիտելիքների և ներդրումների նոր սերնդի կրողներ՝ ապահովելով աշխատանքի արտադրողականության աճի շարունակականությունը: Բարձրագույն մասնագիտական կրթությունը պայմանավորում է գիտատեխնիկական և տեխնոլոգիական զարգացումները: Երկրները, որոնք առաջ են անցնում գիտատեխնիկական, տեխնոլոգիական զարգացումներով, ստանում են երկարաժամկետ առավելություններ մրցակից երկրների նկատմամբ:

Ներկայումս գիտատեխնիկական, տեխնոլոգիական առաջընթացի «ներդրումը» ԱՄՆ-ի և զարգացած մյուս երկրների տնտեսական աճի մեջ գնահատվում է ազգային արտադրության տարեկան աճի 20-40%- ի չափով:

Գիտական ուսումնասիրությունների տվյալներով ԱՄՆ ազգային հարստության 70 % ստեղծվում է զարգացած մարդկային կապիտալի միջոցով [8, 51]:

Այսպիսով, ներդրումները կրթության որակի ապահովման, շարունակական բարձրացման և նրա միջոցով մարդկային կապիտալի, գիտության, տնտեսության և մշակույթի զարգացման մեջ դրսևորվում են երկրի տնտեսական աճի ցուցանիշների բարձացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шульц Т., Капиталовложения в человеческий капитал: роль образования и научных исследований, М., Наука, 1971.
2. Backer G. S. Mating in Marriage Markets, Harvard University Press, 1991.
3. Смит А., Исследование о природе и причинах богатства народов, М. Наука, 1993, Т.1
4. Клюкин П., Рикардо Д., Начало политической экономии и налогового обложения. Избранное. Экемо, М., 2007
5. Human Capital Trends 2012, Deloitte University Press, 2012.
6. The Clobal Competitiveness Report 2017-18- Access mode: http:/www.gcr. weforum. org.
7. Оценка выгод дня общества от системы высшего образования // Экономика образования, 2012-13.
8. Human Capital Trends 2017, Deloitte University Press, 2017.

Образование как фактор экономического роста

Диланян Серине
Педагогический факультет,
«Управление образованием»,
руководитель магистерской диссертации –
к.э.н. А. Харатян

Резюме

Ключевые слова: *экономика, экономический рост, образование, качество образования, общество, наука*

В статье на основе проведенного исследования и анализа данных обосновывается важная роль образования и качественно оценивается степень его воздействия на развитие и экономический рост на примерах экономически и технологически развитых стран, в которых высшее образование успешно осуществляется в сочетании с первоначальными и практическими научными исследованиями.

Education as a Factor of Economic Growth

Dilanyan Serine
Pedagogical Faculty, Educational Management,
Academic Supervisor: A. Kharatyan, Ph. D in Economics

Summary

Key words: *economy, economic growth, education, education quality, society, science*

In this article via the studies and analyses the significance of the role of education was established on the example of economically and technologically advanced countries carrying out high quality education, fundamental and applied research and the amount of its impact on the economic growth and developments was qualitatively assessed.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

ARMENIAN LANGUAGE AND LITERATURE

Գրաբարյան ներգործական սեռի բայերի անցումը չեզոքի և կրկնասեռության

Գալոյան Նարինե
Բանասիրական ֆակուլտետ,
«Հայոց լեզու և գրականություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ Ա. Սանթոյան

Հանգուցային բառեր. *հայցական հոլով, ուղիղ խնդիր, տրական հոլով, բառիմաստ, իմաստափոխություն*

Լեզվի պատմական զարգացման ընթացքում լեզվական մի շարք երևույթներ զարգանում ու փոփոխություն են կրում: Դա վերաբերում է նաև բայի սեռին, որի կրած փոփոխությունները բնորոշվում են որպես սեռային տեղաշարժեր կամ անցումներ. «Լեզվական ամեն մի երևույթ գտնվում է հարատև փոփոխման, շարժման ու զարգացման մեջ: Ժամանակի ընթացքում փոխվում է բառերի ինչպես արտաքին ձևաբանական՝ հնչյունական կերպարանքը, այնպես էլ ներքին՝ իմաստային կողմը: Դարերի ընթացքում, լեզվի աստիճանական էվոլյուցիայի հետևանքով, փոխվում են նաև քերականական կատեգորիաները. առաջանում են նոր քերականական կարգեր և կամ որոշ քերականական կարգեր լեզվից դուրս են ընկնում: Բայերի սեռը ևս քարացած ու կայուն մի բան չէ և փոփոխության է ենթարկվում ժամանակի ընթացքում» [5, 195]:

Տարբեր լեզվաբաններ իրենց աշխատություններում անդրադարձել են կրկնասեռության երևույթին և բայերի սեռային անցումներին [1, 662-722; 5, 190-199; 2, 305-309; 17, 249-258; 12, 220-230; 4, 49-63; 6, 106-112; 7, 172-206; 15, 119-126; 16, 55-85]:

Ա. Աբրահամյանը, խոսելով հայերենում բայերի սեռային անցումների մասին, նշում է. «Սեռային տեղաշարժերը որպես պատմական երևույթ առավել ցայտունությամբ ու բայաքանակի ավելի լայն ընդգրկումով հանդես են գալիս լեզվի պատմական կյանքի, անցած որակական տարբեր շրջանների ամբողջական ֆոնի վրա՝ հին հայերենից մինչև արդի շրջանը: Սակայն դա չի բացառում հայոց լեզվի մեկ շրջանի, տվյալ դեպքում՝ արդի գրական լեզվի ներսում կատարվող սեռային տեղաշարժերը» [1, 701]:

Հայերենում բայերի սեռային անցումները կատարվում են տարբեր ուղղություններով՝ 1) կրկնասեռությունից չեզոքի, 2) կրկնասեռությունից ներգործականի, 3) ներգործականից չեզոքի, 4) ներգործականից կրկնասեռության, 5) չեզոքից ներգործականի, 6) չեզոքից կրկնասեռության:

Այս աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գրաբարում ներգործական սեռի այն բայերը, որոնք ժամանակակից հայերենում դարձել են չեզոք կամ կրկնասեռ: Ուսումնասիրություններ կատարելիս ելակետ ենք ընդունել «Նոր հայկազյան բառարանը» (այսուհետ՝ ՆՀԲ), որում տեղ գտած ներգործական սեռի բայերը համեմատել ենք էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (այսուհետ՝ ԱՀԲԲ) և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետ՝ ԺՀԼԲԲ) տեղ գտած տվյալների հետ՝ փաստելով այդ բայերի սեռային փոխանցումները:

Բառարաններից բերված փաստերը ցույց են տալիս, որ գրաբարում ներ-

գործական սեռի բազմաթիվ բայեր ժամանակակից հայերենում չեզոք սեռի են կամ կրկնասեռ:

Քննարկենք մի շարք բայեր, որոնք գրաբարում ներգործական սեռի էին, իսկ ժամանակակից հայերենում՝ չեզոք:

Ծեքել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «թեքել, ծռել, թիւրել, կամակորել, ըստ մտի յեղաշրջել» նշանակությունները: *«Զբան աւետարանին մի՛ ծեքեսցեն, այլ ճշմարտութեան հետևեսցին» (Եսայի Նչեցի):* Այն ԺՀԼԲԲ-ում հղված է ***ծեքծեքել*** բայի երկրորդ նշանակությանը, այն է՝ «աղավաղել, աղճատել, ծռմռել»: Այս նշանակություններով բայը ներգործական սեռի է: ԱՀԲԲ-ում այն հղված է ***ծեքծեքել*** բային, որը, ներգործական սեռի «աղավաղել, աղճատել, ծռմռել» նշանակություններից զատ, ունի նաև «սեթևեթել» նշանակությունը, որն առաջացել է իմաստափոխության արդյունքում: Այս իմաստով բայը *չեզոք* սեռի է: *«– Ոհ, պարոն Հովհաննիսյան,– հծծեց տիկին Սիրանույշը ծեքծեքելով» (Զ. Եսայան):* Դժվար չէ նկատել, որ բառը վերջին ժամանակներում գերազանցապես օգտագործվում է չեզոք սեռի «սեթևեթել» իմաստով:

Ընկրկել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «ընդ կրունկն նահանջել, յետս կասեցուցանել կամ ձգել կամ դարձուցանել, շրջել և կորացուցանել ըստ կամի, նկուն առնել, ընկճել» իմաստները: «*Զյիմար և զանիմաստ յարձակմունսդ ընկրկեա, և դարձի՛ր» (Փիլոն Եբրայեցի):* ***Ընկրկել*** բայի իմաստները համընկնում էին ածանցավոր ***ընկրկեցուցանել*** բայի իմաստներին: Ժամանակակից հայերենում բայը գործածվում է «հարձակման՝ ընթացքի ժամանակ որևէ արգելիքի հանդիպելով կանգնել՝ ետ մղվել», «նահանջել, ետ քաշվել, ետ-ետ գնալ» նշանակություններով: *«Չին ընկրկեց և ապա ծնկների վրա ցած ընկավ» (Ռաֆֆի):* Այս իմաստներով բայը չունի անցողականության հատկանիշ և *չեզոք* սեռի է:

Կամակորել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «խեղաթյուրել, յեղաշրջել, ծռել իսպառ, խանգարել» նշանակությունները: «*Որ կամակորէր և թիւրէր զճանապարհն աստուծոյ» (Հովհան Ոսկեբերան):* Ժամանակակից հայերենում բայը *չեզոք* սեռի է, նշանակում է «կամակորություն անել, համառել»: Ընդ որում բայի այս իմաստով գործածությունը բխում է գրաբարում ***կամակոր*** ածականի ունեցած նշանակություններից: Վերջինս, «ծուռումուռ, խեղաթիւր, ոլորեալ» նշանակություններից բացի, գրաբարում ունի նաև այլ նշանակություն, որ մեկնաբանվում է հետևյալ կերպ. «ըստ համաձայնության յետին վկայութեանցս՝ ռամկօրէն կամ առ հետնագոյնս կամակոր ասի յամառն և կամապաշտ»: Սրանից պարզ է դառնում, որ ժամանակակից հայերենում գործածվող ***կամակորել*** բայի իմաստը ծագում է ***կամակոր*** բառի դեռևս գրաբարում ունեցած «յամառ և կամապաշտ» նշանակությունից: *«Արյո՞ւն է առել աչքերին, ինչ է, մի մատ երեխա՞ է դարձել, որ կամակորում է, աշխարհն էլ դեմ կանգնի, հետ չի դառնա» (Ռ. Ղազանչյան):*

Աստանդել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «այսր անդր տանել, ձգձգել, թիւրել, տատանել» նշանակությունները: «*Արբեցողն աստանդէ զբան բերանոյն» (Հովհան Ոսկեբերան):* Բայը ժամանակակից հայերենում *չեզոք* սեռի է, ունի «աստանդական դառնալ» նշանակությունը: Ժամանակակից հայերենում առկա է ***աստանդական*** ածականը, որն ունի «այս ու այն կողմ ընկած, թափառական» նշանակությունները: ***Աստանդական*** բառը հանդես է գալիս նաև

որպես գոյական «թափառական կյանք վարող անձ» նշանակությամբ: Այստեղից էլ բխում են ***աստանդել*** բայի «աստանդական դառնալ, թափառական մարդ դառնալ» չեզոք սեռի նշանակությունները:

Դավաճանել բայը գրաբարում ունի «դաւել, նենգել, խաբել, յորոգայթ արկանել» նշանակությունները, հանդես է գալիս հայցական հոլով դրված ուղիղ խնդրի հետ. *«Եթէ մեք զանձինս մեր ոչ դաւաճանիցեմք, ոչ այլ ոք կարէ նենգել զմեզ» (Հովհան Ոսկեբերան):* Ժամանակակից հայերենում այս բայն ունի «դավաճանություն անել, թշնամու կողմն անցնել, հայրենիքի շահերի դեմ գործել, խախտել հավատարմությունը՝ նվիրվածությունը որևէ բանի նկատմամբ, դրժել, ուխատազանց լինել, ամուսնական հավատարմությունը խախտել, անհավատարիմ լինել ամուսնուն, հույսը ի դերև հանել՝ չարդարացնել» նշանակությունները, պահանջում է տրական հոլովով դրված խնդիր, այն է՝ *չեզոք* սեռի բայ է համարվում: *«Քո հայրը, Մուշեղ, այդ սրով սպանեց յուր եղբայր Վարդանին, երբ նա դավաճանեց հայրենիքին» (Ռաֆֆի):* Վ. Առաքելյանը այս բառի անցումը չեզոք սեռի պատճառաբանում է այն հանգամանքով, որ այս և մի քանի այլ բայեր սովորաբար դրվում են անձ ցույց տվող խնդրի հետ, որը տրականաձև է: Այս բայի լրացումը դառնալով՝ իր ցույց տվող բառերը անձ ցույց տվող բառերի նմանությամբ դրվում են տրականաձև և ըմբռնվում են իբրև տրական [4, 52]:

Կավագործել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «շինել որպէս կաւագործ» նշանակությունը: *«Կաւագործէ զագարակն ի մարդկեղէն մարմինս. յետ կատարածին խեցեցուցանէ զամանս, սրբոցն՝ ի ձեռն շնորհին, իսկ զմեղաւորացն՝ ի ձեռն գեհենին» (Եփրեմ Ասորի):* Ժամանակակից հայերենում բայը *չեզոք* սեռի է, ունի «կավագործություն անել, բրուտություն անել, կավագործությամբ զբաղվել» իմաստները:

Գրաբարյան ներգործական սեռի մի շարք բայեր ժամանակակից հայերենում, ինչպես նշվեց, կրկնասեռ են: Սրանք այն բայերն են, որոնք գրաբարյան ներգործական սեռի նշանակությունը պահպանելուն զուգահեռ ձեռք են բերել նաև չեզոք սեռի նշանակություններ: Բերենք այդպիսի բայերի օրինակներ:

Երևակայել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «ձևացուցանել, ըմբռնել զգալի մտածութեամբ» և «երևակայացուցանել, երևեցուցանել» նշանակությունները: *«Զնոյն ինքն զձևս երևակայէ, արմատաւորէ յինքեան» (Դավիթ Անհաղթ):* Ժամանակակից հայերենում այն *ներգործական* է իր նախնական «մտքի մեջ վերարտադրել մեկին կամ որևէ բան, մտքով պատկերացնել, երևակայությամբ ստեղծել» նշանակություններով: *«Այդ տխուր հանգամանքների մեջ կարելի էր երևակայել Ոշտունյաց Աշեխեն օրիորդի վիշտը, որ հոգով և սրտով նվիրված էր յուր սիրելիին» (Ռաֆֆի):* Բայիմաստի հետաքրքիր փոփոխության արդյունքում բայը ձեռք է բերել «իրեն մեծ բան կարծել, մեծամտել, իրեն մեծ բանի տեղ դնել, իրեն գոռոզ պահել» նշանակությունները: Վերջին նշանակություններով բայը *չեզոք* սեռի է: *«Դու էլ շատ մի երևակայիր» (Հ. Քոչար):*

Խարսխել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «հաստատել իբրև ի վերայ խարսխի կամ որպես զխարիսխ, անշարժ հաստատել, առարկայացուցանել, ամրացուցանել, սահմանել» նշանակությունները: *«Սիւն և նեցուկ նորին ամրոցի հաստատ պնդութեամբ դու խարսխեցար» (Գրիգոր Նարեկացի):* Դեռևս գրաբարում ***խարիսխ*** բառը, իր նախնական «ստորին կամ խորին նեցուկ իրաց,

պատուանդան, յատակ» նշանակություններից բացի, ուներ նաև «երկաթ կամ ճանկ մեծ արկեալ պարանաւ ի յատակ ծովու՝ առ անշարժ պահելոյ զնաւն առ ետեղ» նշանակությունը: Ժամանակակից հայերենում ***խարսխել*** բայը կրկնասեռ է: Ներգործական սեռի է «խարիսխ գցելու միջոցով նավը կանգնեցնել» և «բնակության համար մի վայրի հետ կապել՝ ամրացնել, հիմնավորել, հիմնադրել» նշանակություններով: Խարիսխ գցելու միջոցով կանգնելու հանգամանքով պայմանավորված՝ նավի կանգ առնելու գործողությունը սկսել է արտահայտվել ***խարսխել*** բայով: Ուստի «կանգնեցնել» նշանակությամբ բայը *ներգործական* սեռի է, «կանգ առնել» նշանակությամբ՝ *չեզոք*: *«Նավաստիները ափից քիչ հեռու **խարսխեցին նավը»**, «Շոգենավը **խարսխեց** Սերքեմիի մոտերը» (Ե. Օտյան):*

Երկրագործել բայը գրաբարում *ներգործական* սեռի է, ունի «գործել զերկիր, մշակել» նշանակությունները: *«Զանդաստանս իւրեանց թողուն, և զօտարսն երկրագործեն» («Ոսկիփորիկ»):* Ժամանակակից հայերենում այն գրաբարյան «հողը մշակել» ներգործական սեռի նշանակությանը զուգահեռ հանդես է գալիս «երկրագործություն անել, հողագործությամբ զբաղվել» *չեզոք* սեռի նշանակություններով:

Ուսանել բայը գրաբարում *հասարակ* (կրավորակերպ ներգործական) սեռի բայ է համարվում, ունի «ուշիւ առնուլ ի միտ, զուշն լնուլ, սերտել ի միտ» նշանակությունները: *«Ուսանէր ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեան» (Եղիշե):* Ժամանակակից հայերենում բայը կրկնասեռ է, գրաբարյան ներգործական սեռի նշանակության կողքին բայը ձեռք է բերել «բարձրագույն ուսումնական հաստատության մեջ սովորել, ուսանող լինել» իմաստները: Այս իմաստներով բայը *չեզոք* սեռի է: «*Հայրիկս չի համաձայնի, որ ես ուսանելու գնամ, հին մարդ է, կանանց բարձրագույն կրթությանը դեմ է» (Ավ. Իսահակյան):*

Այսպիսով՝ ինչպես նշվեց, գրաբարյան ներգործական սեռի բազմաթիվ բայեր ժամանակակից հայերենում դարձել են չեզոք կամ կրկնասեռ: Կրկնասեռ բայերի մեջ երկու սեռի հատկանիշը երբեմն հավասար կերպով է հանդես գալիս, իսկ երբեմն սեռերից մեկը գերիշխում է: Չի բացառվում, որ ժամանակի ընթացքում դրանք կարող են դառնալ միասեռ: Սեռային անցման հիմական պատճառները բայի անցողականության հատկանիշի կորուստն է կամ իմաստափոխությունը: Բայի իմաստի փոփոխությունները ընթանում են հիմնականում երկու ուղիներով՝ 1) գրաբարյան նախնական իմաստը վերանում է, առաջանում է նոր իմաստ (այս դեպքում բայը միասեռ է), 2) նախնական իմաստը զարգացում է ապրում և իմաստափոխվում է՝ հանգելով նոր իմաստի (եթե նախնական իմաստը զուգահեռաբար պահապանվում է, բայը կրկնասեռ է, իսկ եթե չի պահպանվում՝ միասեռ): Մարդկանց զբաղմունք ցույց տվող մի քանի բայեր, որոնք գրաբարում ներգործական սեռի էին և ուղիղ խնդիր էին պահանջում, ժամանակակից հայերենում չեզոք սեռի են, քանի որ անվանում են այդ երևույթը ընդհանրապես և վերացարկված ձևով (կավագործել, երկրագործել, ուսանել): Հարկ է նշել, որ ժամանակակից հայերենում չեզոք սեռի փոխարկված մի շարք բայերի այժմյան իմաստների ակունքները դեռևս կարելի է տեսնել այդ բայերի առաջին հիմքերի գրաբարյան նշանակությունների մեջ (առարկել, կամակորել):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962, 726 էջ:
2. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., ժամանակակից հայոց լեզու, հատոր 2, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 587 էջ:
3. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, 1615 էջ:
4. Առաքելյան Վ. Դ., Հայերենի խնդրառության մասին, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր. հասարակական գիտություններ, 1955, համար 7, էջ 49-64:
5. Ասատրյան Մ. Ե., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 1959, 231 էջ:
6. Զաքյան Հ. Ս., Բայերի սեռային փոխանցումները հայերենի պատմական զարգացման մեջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատություններ, 2004, համար 7, էջ 106-112:
7. Զաքյան Հ. Ա., Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2015, 240 էջ:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 601 էջ:
9. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 714 էջ:
10. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 574 էջ:
11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 828 էջ:
12. Հարությունյան Հ. Ա., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1983, 335 էջ:
13. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1836, 1140 էջ:
14. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1837, 1067 էջ:
15. Սաֆարյան Տ. Վ., Կրկնասեռության քերականական դրսևորումները արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 2005, թիվ 1, էջ 119-126:
16. Սաֆարյան Տ. Վ., Հայերենի կրկնասեռ բայերը, Երևան, «Նաիրի» հրատ., 2013, 168 էջ:
17. Քոսյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 486 էջ:

Переход глаголов действительного залога на средней залог и двузалоговость в грабаре

Галоян Нарине
Филологический факультет,
«Армянский язык и литература»,
руководитель магистерской диссертации –
к. филол. н., доцент А. Сантоян

Резюме

Ключевые слова: *винительный падеж, прямой объект, дательный падеж, лексическое значение слова, смысловое изменение*

Как и многие языковые явления, залог глагола тоже с течением времени терпит изменения, которые характеризуются как залоговые переходы или сдвиги. В работе исследован переход глаголов действительного залога в грабаре на средний залог и гермафродитизм, рассмотрены основные причины, создавшие залоговые переходы.

Исследования показали, что многие глаголы действительного залога в грабаре в современном армянском языке являются глаголами среднего залога или гермафродитными. Это происходит в результате различных изменений смысла глагола.

The Transition of Grabar Verbs of Active Voice into Middle Voice and Double Voice

Galoyan Narine
Faculty of Philology,
Armenian Language and Literature
Academic Supervisor: A. Santoyan
Ph. D in Philology, Associate Professor

Summary

Key words: *accusative case, direct object, dative case, lexical meaning, change of meaning*

Like a number of language phenomena the category of voice also changes over time. They are characterized as voice transition and movements. In this work we have studied the transition of Grabar verbs of active voice into middle voice and double voice. We have examined the main causes of voice transition. Researches have indicated that many verbs of active voice in Grabar are middle voice or double voice in Modern Armenian. This happens as a result of the changes of the meaning of the verb.

Գրաբարյան չեզոք սեռի բայերի սեռային փոխանցումները ներգործական սեռի և կրկնասեռության

Վարդանյան Տաթևիկ
Բանասիրական ֆակուլտետ,
«Հայոց լեզու և գրականություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ Ա. Սանթոյան

Հանգուցային բառեր. *արդի հայերեն, ուղիղ խնդիր, հայցական հոլով, բառիմաստ, իմաստափոխություն, խնդրառություն*

Լեզվի քերականական կարգերը պատմական զարգացման ընթացքում ենթարկվում են զանազան փոփոխությունների: Դրանից զերծ չի մնացել նաև բայի սեռի քերականական կարգը:

Մի շարք լեզվաբաններ իրենց աշխատություններում անդրադարձել են սեռային փոխանցումներին: Ոմանք հարցը քննել են ձևաբանության ու շարահյուսության (այդ թվում՝ սեռի քերականական կարգի) համապատկերում: Եվ հենց բայի սեռի քերականական կարգը ներկայացնելուն զուգահեռ անդրադարձել են նաև սեռային տեղաշարժերին, ոմանք էլ հարցին անդրադարձել են լայն թեմատիկ ընդգրկմամբ՝ շեշտը դնելով զուտ սեռի քերականական կարգի, մասամբ էլ՝ սեռային տեղաշարժերի վրա[1]:

Բայասեռը հաստատուն քերականական կարգ չէ և չի ուղեկցում տվյալ բային նրա ողջ լեզվապատմական գործածության ընթացքում՝ իբրև նրա անփոփոխ, կայուն հատկանիշ: Բայասեռը կապված է բայիմաստի հետ, իսկ բայիմաստը կենդանի լեզվի մի այնպիսի առանձնահատկություն է, որ ժամանակի ընթացքում ենթակա է փոփոխությունների, իսկ այդ փոփոխություններին զուգընթաց փոխվում է նաև բայասեռը: Պատմական զարգացումը կարող է հանգեցնել այն բանին, որ բայի հին իմաստի և սեռի փոխարեն գան նոր իմաստն ու նոր սեռը[2]:

Հայերենում բայերի սեռային անցումները կատարվում են տարբեր ուղղություններով՝

1. չեզոքից ներգործականի, 2. չեզոքից կրկնասեռության, 3. կրկնասեռությունից ներգործականի, 4. կրկնասեռությունից չեզոքի, 5. ներգործականից չեզոքի, 6. ներգործականից կրկնասեռության:

Բայիմաստի հետ անմիջական կապ ունի խնդրառությունը: Խնդրառության

---

[1] Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 662-722, **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 190-199, **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան,** Ժամանակակից հայոց լեզու, հատոր 2, Երևան, էջ 305-309, **Վ. Քոսյան**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1963, էջ 249-258, **Հ. Հարությունյան,** Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 220-230, **Վ. Առաքելյան**, Հայերենի խնդրառության մասին, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր. հասարակական գիտություններ, համար 7, Երևան, 1955, էջ 49-63, **Հ. Զաքյան,** Բայերի սեռային փոխանցումները հայերենի պատմական զարգացման մեջ, Գիտական աշխատություններ, համար 7, Գյումրի, 2004, էջ 106-112, **Տ. Սաֆարյան**, Կրկնասեռության քերականական դրսևորումները արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 1, Երևան, 2005, էջ 119-126:

[2] Տե՛ս Վ. Առաքելյան, Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում, «Պատմաբանասիրական հանդես», 1980, հ. 2, էջ 72:

դերը մեզ հետաքրքրում է մասնավորապես հայցական հոլովով խնդիր առնելու տեսանկյունից, քանի որ երբեմն նախկին չեզոք սեռի բայերը, աստիճանաբար հայցական հոլովով խնդիր ստանալով, սկսում են կա՛մ միաժամանակ ըմբռնվել ներգործական սեռով, կա՛մ չեզոքությունը կորցնում են ու դառնում ներգործական սեռի բայեր:

Այս աշխատանքում անդրադարձել ենք առաջին երեք կետերին համապատասխանող սեռային փոխանցումներին, որի նպատակն է ուսումնասիրել գրաբարի չեզոք սեռի այն բայերը, որոնք ժամանակակից հայերենում դարձել են ներգործական կամ կրկնասեռ և այն բայերը, որոնք կրկնասեռության չեզոք սեռը կորցրել են՝ մնալով միայն ներգործական սեռով: Ուսումնասիրություններ կատարելիս ելակետ ենք ընդունել «Նոր հայկազյան բառարանը», որում տեղ գտած ներգործական սեռի բայերը համեմատել ենք էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»[3] և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»[4] տեղ գտած տվյալների հետ՝ փաստելով այդ բայերի սեռային փոխանցումները:

Չեզոքից ներգործականության անցած բայերը հայերենում

Ալէլուեմ բայը գրաբարում եղել է **չեզոք սեռի՝** «*օրհնութիւն վերառաքել*» իմաստով («*Ազդեցէր մեզ ալէլուեմ քեզ յաւուր յիշատակի բարեաց քոց*»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*ալելու երգել*» իմաստով («*Քահանան ալելուեց շարականը, որից հետո ժողովրդին բաշխեց հղորդության նշխարքը*»):

Թարթեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*որպէս թէ կշռել ական, այն է ճօճել աչաց իբրեւ ի մէտս կշռոց, բանալով եւ փակելով իսկոյն*», այժմ **ներգործական սեռի** է՝ «*կոպերը բանալ-խփել*» իմաստով:

Յոլովանալ / յոլովեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*բազմանալ, յաճախել, առաւելուլ, յաւելուլ*» իմաստներով («Յորժամ մոռանայցեմք զերկիւղն Աստծոյ և ի չարիսն յոլովիցեմք»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*բառը փոփոխել ըստ հոլովի և թվի»*,«*շարունակ միևնույն բանը կրկնել*» իմաստներով («Հոլովի՞ր *մայր* բառը», Բավական է այդ թեման հոլովես»):

Ականջել բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*ունկն դնել*» իմաստով («Ականջնես հնչման սուրբ հոգւոյն»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*լսել, ունկնդրել, ականջ դնել*», «*լրտեսել, գաղտնաբար լսել*» իմաստներով («Այդ հանգամանքն այն աստիճան գչգռեց տիկնոջ հետաքրքրասիրությունը, որ նա որոշեց ականջել նրանց»):

Փափագեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*փափագ ունել, անձկալ, տենչալ, բաղձալ, ցանկալ, ախորժել*» իմաստներով («Որք վերնոյ թագին փափագեն»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*տենչալ, կարոտանքով սպասել մի բանի*» իմաստներով («Փափագեց նրա հետ ծանոթանալ»):

Սաստեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*սաստիկ խոսել, յանդիմանել, կշտամբել, սպառնալ, ցասնուլ*» իմաստներով («Սաստեցէ ի քեզ Տէր», «Սաստեաց ալեացն և լռեցին»), այժմ **ներգործական սեռի** է՝ «1. *լռեցնել, կարգի հրավիրել, 2. զսպել, արգելել, չթողնել, 3. հանդիմանել, կշտամբել*», իմատներով («Դե

[3] Այսուհետ՝ ԱՀԲԲ:
[4] Այսուհետ՝ ԺՀԼԲԲ:

սուս է՛, թող տեսնենք՝ ինչ է ասում,– սաստեցին նրան», «Հայացքներով իրար սաստում էին»):

Ձեռնարկեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*ձեռն ի գործ արկանել, բուռն հարկանել, ձեռնամուխ և ձեռներէց լինել*» իմաստներով («Ի պատերազմիլ ընդ նմա ձեռնարկեաց», «Մեծաւ յուսով ձեռնարկեսցուք ի գործս»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*մի բան սկսել*» իմաստով («Նոր նախագիծ են ձեռնարկել»):

Չեզոքից ներգործականության անցած բայերը՝
իրենց չեզոքությունը պահելուն զուգահեռ

Թարթեմ/թարթիմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*որպէս թէ կշռել ական. այն է՝ ճօճել աչաց իբրեւ ի մէտ կշռոց, բանալով եւ փակելով իսկոյն*» իմաստով («Ի թարթել ական գաւ յայնմ տեղւոջ»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*կոպերը բանալ-խփել*» իմաստով («Մեզանում այսպես էլ կարելի է, այնպես էլ,- նկատեց գեղեցկուհին՝ աչքերը խորհրդավոր թարթելով») և **չեզոք սեռի** է՝ «*կոպերը խփվել-բացվել*» իմաստով («Ծաղիկ աչքերը կրկին կթարթեն»):

Զղջանամ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*ի զեղջալ, ցավիլ ընդ գործն անցեալ, մանաւանդ ի վերայ մեղաց, աւաղել*» իմաստներով («Ոչ գոյ մարդ, որ զղջանայ ի վերայ չարեաց իւրոց», «Ոչ դարձցի և ոչ զղջասցի Տէր»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*հրաժարվել*» իմաստով («Խոստովանք արա, զղջա անցյալը, խույս տուր գալիքից») և **չեզոք սեռի** է՝ «*ափսոսալ արածի կամ չարածի համար, ցավել, փոշմանել, մեղքերը խոստովանել*» իմաստներով («Ես ճանաչեցի իմ սխալը և չարաչար զղջացի»):

Զիջանեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*կարի ի վայր իջանել, խոնարհիլ, ցածանալ, մեղմանալ*» իմաստներով («Մարդասեր է Աստուած և ըստ այնմ զիջանէ», «Զիջանէ և թոյլ տայ և ի գլուխն ևս թափել զիւղն»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*պարտքը չպահանջել, տված գումարը թողնել պարտապանին*» («Վարչությունը որոշել է տասնհինգ հազար ռուբլու պարտքը զիջել չքավորներին»), «*զեղչ կատարել, չեղչել*» («Որոշեցի զիջել այս ապրանքում ունեցած իմ օգուտը»), «*ուրիշի օգտին կամավոր հրաժարվել մի բանից*» («Նա իր սենյակը զիջեց եղբորը») և «*տեղի տալ, ասպարեզը թողնել ուրիշներին*» («Պրոֆեսորը, տասնյակ տարիներ ամուլ մնալով, ամբիոնը չզիջեց ուրիշի») իմաստներով և **չեզոք սեռի** է՝ «*այլևս հակառակը չպնդել, համաձայնվել, համակերպվել, իր հատկանիշներով ցած մնալ, չհավասարվել*» իմաստներով («Հարկ էր, որ մի կողմը զիջի», «Դերասանը իր խաղով զիջում էր մյուս դերասաններին»):

Խաղամ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*ի խաղս զվարճութեան պարապիլ, կաքաւել, խայտալ, ոստնուլ, ճախրել, եռալ, շարժիլ*» իմաստներով («Խաղայր ընդ Իսահակայ որդւոյ իւրում», «Խաղայ մանուկն յորովայնի նորայ», «Ամենայն թռչնոց որ յօդս խաղայցեն»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*մարզական մրցությամբ զբաղվել, մրցել», «կատարել որևէ բեմական դերբեմի վրա որևէ կերպար ներկայացնել» և «ցուցադրել, ձևացնել, կեղծել»* իմաստներով («Կազմակերպված մրցույթին մարզիկները խաղում էին ֆուտբոլ, թենիս, վոլեյբոլ և այլ հետաքրքիր խաղեր», Փափազյանը այդ ներկայացման մեջ Օթելլո էր խաղում», «Հմտորեն դաժանություն ու լրջություն էր խաղում») և **չեզոք սեռի** է՝ «*ուրախ ժամանակ անցկացնել, զվարճանալ», «որևէ առարկայի հետ զբաղվել՝ աննպատակ շարժել, պտտել», «պար գալ, կաքավել», «որևէ լուրջ գործի անլուրջ ու թեթև վերաբերել»,*

«թղթախաղով կամ այլ մոլությամբ զբաղվել[5]» իմաստներով («Երկու մանուկ խաղում էին բակում», «Խաղում էր մազերի հետ», «Գործ չունես այդպիսի անպատասխանատու մարդու հետ. նա խաղում է», «Պարողները ուրախ, պայծառ, Խաղ կկանչեն, կխաղան», «Դու խաղացել ես տերության գործերի հետ»):

Մոլորեմ/մոլորիմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*խոտորիլ, շեղիլ, սխալիլ, խաբիլ, թափառիլ, տատանիլ*» իմաստներով («Երթեալ մոլորեալ շրջէր յանապատի», «Գինով մոլորեալ են», «Մոլորեսցին իբրև զարբեալ»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*կորցնել*» իմաստով («Կամ գուցե արևը մոլորե՞լ է իր ճամփան», «Ճամփան մոլորե՞լ եք») և **չեզոք սեռի** է՝ «*շվարել, անելիքը չիմանալ*» իմաստով («Ակնապիշ, անձայն պատանի, ու՞ր ես մտքով մոլորած»):

Թևեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*իբր թևանալ, վերաթևել*» իմաստներով («Թռչունք լողան խաղան յօդս և այսր անդր թևեն»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*որևէ առարկայի կամ գործիքի վրա թևեր ավելացնել*» իմաստով («Հեծանիվի անիվի կենտրոնական մասին թիթեղյա կտորներ թևեց») և **չեզոք սեռի** է՝ «*թևերը շարժելով թռչել, թևածել*», «*արագորեն ընթանալ, սլանալ*» իմաստներով («Ծիծեռնակը թևում էր բնի վրա»):

Հանդուրժեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*համբերել, տանել, տոկալ, հանդարտել, բաւական լինել*» իմաստներով («Ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն», «Ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*դիմանալ, տոկալ, կրել*» իմաստներով («Ես չեմ հանդուրժում ինձ վրա իշխող ոչ մի զորություն») և **չեզոք սեռի** է՝ «համբերել» իմաստով («Հանդուրժե՞մ պիտի, որ աչքերս բաց ինձ խորտակեն»):

Տարածայնեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*չհամաձայնիլ, ոչ ձայնակցիլ, անհամաձայն, անմիաբան գտանիլ*» («Ի սոցանէ ոչինչ տարաձայնեալ երևի»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*տարփողել, տարածել, հայատարարել, հռչակել*» իմաստներով («Եվ գյուղացին երգ հորինեց, գովեց հովվին ու յարին, Եվ երգելով տարաձայնեց Այս *արկածը* սիրային») և **չեզոք սեռի** է՝ «*չհամաձայնել, հակառակ կարծիք հայտնել, տարբեր կարծիքի լինել*» իմաստներով («Մրցակցում են իրար հետ, վիճում, տարաձայնում»):

Սովորեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*միտք սովորեաց խուզել և քննել*», «*բնավորիլ, վարժիլ, ընտելանալ, ուսանիլ*» իմատներով («Ոչ վաստակելն ապականել զմեզ սովորեաց»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*կարդալով մի բան յուրացնել, գիտելիքներ ձեռք բերել, սերտել*», «*մեկից մի բան ընդօրինակել, յուրացնել*» իմաստներով («Քեզանի՞ց պիտի սովորեմ քաղաքավարության նորմերը») և **չեզոք սեռի** է՝ «*վարժվել, ընտելանալ*» իմաստներով («Նրա աչքերը այն աստիճան սովորած էին գիշերվա խավարին, որ գազանի նման մթության մեջ տեսնում էին»):

Անցանեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*խաղալ, գնալ, փոխիլ՝ տեղւոջէ ի տեղի, յառաջ երթալ*», «*շիջանիլ*», «*թաքչիլ*», «*դիւրաւ եղծանիլ*», «*զանց առնել, թողուլ, արտաքոյ ելանել*» իմաստներով («Անցցէ խաղաղութեամբ զճանապարհս ոտից իւրոց»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*որոշ տարածությամբ ճանապարհ կտրել*», «*ուսումնասիրել*» իմաստներով («Մեքենան անցնում էր ժամում 100 կմ»,

[5] Այս իմաստի համար բառարանները նշում են չեզոք սեռ, բայց այժմ նաև ներգործականության իմաստ ենք տեսնում սրա մեջ, ինչպես՝ «Նա ամեն երեկո թուղթ էր խաղում»:

«Այդ դպրոցում գերմաներեն էին անցնում») և **չեզոք սեռի** է՝ «*շարժվել, գնալ, հեռանալ, ոտքով գբոսնել*» իմաստներով («Փողոցով անցնում էին երկու կին»):

Ծորամ/ծորեմ բայը գրաբարում **չեզոք սեռի** է՝ «*հոսիլ, կաթել, հալել, ջրի պես վազել*» իմաստներով («Սիրտ իմ ծորայ ի բանջարաբոյս», «Ծորէր իջանէր արիւնն ի վերայ խաչին»), այժմ **ներգործական սեռի** է՝ «*կիսահեղուկ կամ հեղուկ նյութ ծորեցնել*», «*ծոր տալով երկարեցնել*» իմաստներով («Սամվելը տիկը առեց նրա ձեռքից, սկսեց գինին փքոր առ փոքր ծորել մահամերձ վիրավորի բերանը», «Նա երգելիս ծորում էր ձայնը այնքան ժամանակ, մինչև որ շնչակտուր էր լինում») և **չեզոք սեռի** է՝ «*ծոր տալով հոսել, թափվել, կաթկթել, բխել, երկարել*» իմաստներով («Պատռվում է երկնքի պռունկն ու աշխարհի վրա է ծորում վաղորդյան լույսը»):

Կրկնասեռությունից (ն., չ.) ներգործականության

Բախեմ բայը գրաբարում **կրկնասեռ** է՝ «հարկանել ուժգին՝ մինչև ցթնդիւն և ի հնչիւն» իմաստներով. «Կալ արտաքոյ, և բախել զդուռնն», «Բախեցէք և բացցի ձեզ: Որ բախէ՝ բացցի նմա: Եւ պետրոս ստէպ բախէր»: Այժմ **ներգործական սեռի** է՝ «հարված հասցնել, խփել, դիպցնել» իմաստներով. «Դուռը բախեց և բացող չեղավ»:

Գծեմ բայը գրաբարում **կրկնասեռ** է՝ «գիծ ինչ առնել, նիշ թողուլ» իմաստներով. «Ոչ կարայ զհետս իւր գծել ի վերայ վիմին», «Ուր ոչ գծէին նետք»: Այժմ միայն **ներգործական** սեռի է՝ «գծեր քաշել, գծերով արտահայտել» իմաստով. «Նա սկսեց գծել զինանոցի վրա հարձակվելու և այնտեղից դուրս գալու ծրագիրը»:

Խնայեմ բայը գրաբարում **չեզոք** սեռի է՝ « գթալ, ներել, պահել» իմաստներով. «Որ խնայէ ի գաւազան, ատեայ զորդի իւր» և **ներգործական** սեռի է՝ «խնամով պահել» իմաստով. «Խնայեաց զանձն նորա ի մաուանէ»: Այժմ **ներգործական** սեռի է՝ «տնտեսել, խնայողաբար գործածել, չվատնել, չպատժել, գթալ, խղճալ» իմաստներով. «Սենեկապետը սկսեց խնդրել շահին, որ գոնե խնայի հայերին», «Ձեռքիցդ եկած լավությունը մի խնայիր»:

Սեռային փոխանցումներն ուղեկցվել են նաև կառուցվածքային փոփոխությամբ՝ բայածանցի կորսուստով: Այսպիսով չեզոք սեռից ներգործականության անցման ճանապարհին որոշ բայեր կորցրել են իրենց բայածանցը **(«ան», «ն»)** կամ փոխել մի սոսկածանցը մյուսով (**ան>ն**)՝

գրաբարում	**աշխարհաբարում**
անց**ան**եմ	անց**ն**ել
բաղձամ // բաղձ**ան**ամ	բաղձալ
զղջամ // զջան**ան**ամ	զղջալ
զիջ**ան**եմ // զիջ**ան**իմ	զիջել
ըղձամ // ըղձ**ան**ամ	ըղձալ
շիջ**ան**իմ	շիջել

Այսպիսով, բայերը թե՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում հիմնականում բազմիմաստ են, և հայերենի պատմական զարգացման ընթացքում բայը կարող է կորցնել իր իմաստը կամ իմաստներից մեկը, որով պայմանավորված էլ կորցնի իր սեռը կամ կարող է ձեռք բերի նոր իմաստ կամ իմաստներ, որոնցով պայմանավորված էլ ձեռք բերի նոր սեռ՝ այդ կերպ ենթարկվելով սեռային փոխանցման:

Իմաստային փոփոխությունները միակ գործոնը չեն սեռային փոխանցման համար: Սեռային փոփոխություն կատարվում է ոչ միայն իմաստի կորստի կամ նոր իմաստի ավելացման հետևանքով, այլ նաև խնդրառությամբ, երբ իմաստը պահպանվում է, բայց բայը սկսում է ստանալ այլ հոլվով խնդիր (մեր թեմայի համար կարևորում ենք արդի փուլում նախկին տրականի փոխարեն հայցականով խնդիր ստանալու հանգամանքը):

Փոխաբերական կիրառություններով սեռային փոխանցումները որպես այդպիսին չեն ընդունվում, բայց կարծում ենք, որ ներունակ են ներգործականության հատկանիշ ձեռք բերելու, բացի այդ, այդպիսի փոխաբերական իմաստները երբեմն կարող են այքան լայն տարածում գտնել, որ այևս չդիտվեն որպես փոխաբերական կիրառություն, օրինակ անձնավորման եղանակով բայի ստացած խնդրի և դրանով պայմանավորվոծ սեռային փոխանցումները, ինչպես՝ «Սիրում է հայրենիքը», բայց՝ «Սիրում է տիկնիկին»:

Բայի բառական իմաստի և խնդրառության փոփոխության հետևանքով տեղի են ունեցել և տեղի կունենան բայասեռի փոփոխություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, 847 էջ:
2. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Գիրք 1, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1962, 726 էջ:
3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., ժամանակակից հայոց լեզու, հ. 2 (Ձևաբանություն), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, 551 էջ:
4. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976, 1615 էջ:
5. Առաքելյան Վ., Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում, «Պատմա-բանասիրական հանդես»,1980, հ. 2:
6. Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1959, 232 էջ:
7. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւագեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1979, 1142 էջ:
8. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւագեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.. Բ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1979,1070 էջ:
9. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Հայկական ՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ., Ե., 1953, 422 էջ:
10. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 603 էջ:
11. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 719 էջ:
12. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Գ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 575 էջ:
13. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Դ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 828 էջ:
14. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1983, 336 էջ:

Родовой переход глаголов среднего залога в грабаре в действительный залог и двузалоговость

Варданян Татевик
Филологический факультет,
«Армянский язык и литература»,
руководитель магистерской диссертации –
к. филол. н., доцент А. Сантоян

Резюме

Ключевые слова: *среднеармянский, современный армянский, прямое дополнение, винительный падеж, смысл слова, изменение смысла, управление*

Залог глагола тесно связан со смыслом слова и управлением глагола, в связи с этим, с изменением последних меняется и залог глагола. Изменения залога происходили в течение исторического развития армянского языка (1. грабар, среднеармянский – современный армянский, 2. грабар – среднеармянский, современный армянский, 3. среднеармянский – современный армянский).

Изменение залога глагола сопровождалось также следующими изменениями: изменение слагаемого гласного и добавление или усечение гласного аффикса.

The Verb Voice Transmission of the Old Armenian Middle Verbs into the Active and Double Voice

Vardanyan Tatevik
Faculty of Philology,
Armenian Language and Literature
Academic Supervisor: A. Santoyan
Ph. D in Philology, Associate Professor

Summary

Key words: *Modern Armenian, direct object, objectivity, word-meaning, change of meaning*

The verb voice has a close contact with the word-meaning of the verb and objectivity and due to changing of the latters the verb voice is changed too. The voice changings have been done during (writing period) the different of the Armenian language. The verb voice changing has also been gone by the foolowing structural changings as the changing of the decliner vowal and the adding or falling of the verbal affix.

Ժամանակի պատկերման առանձնահատկությունները Վ. Մուղնեցյանի եռապատումում («Ալիզ», «Եկվորներ», «Տաբու»)

Այվազյան Թինա
Բանասիրական ֆակուլտետ,
«Հայոց լեզու և գրականություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
բ.գ.դ., պրոֆ. Վ. Եղիազարյան

Հանգուցային բառեր. *ժամանակ, եռապատում, ժամանակային հաջորդականություն, կրկնություններ, տեմպ*

Ժամանակը Վ. Մուղնեցյանի եռապատումի կարևոր տարրերից է: Սա առաջին հերթին պայմանավորված է ժամանակի պատկերման հարցում հեղինակի ունեցած հետևողականությամբ: Վեպերում որևէ դեպք կամ իրադարձություն պատկերելիս անպայմանորեն շեշտվում է, թե այն երբ է կատարվել՝ սկսած ժամանակի ամենափոքր միավորներից (րոպե, պահ), մինչև տարի կամ տասնամյակ: Այս հետևողականությունը հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից քննելու հեղինակային պատումի կառույցը: Աշխատանքի նպատակն է բացահայտել ժամանակի պատկերման հիմնական սկզբունքներն ու օրինաչափությունները Վ. Մուղնեցյանի եռապատումում, որի իրագործման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ բացահայտել եռապատումի ժամանակային տևողությունը, տալ ժամանակային հաջորդականության հստակ պատկերը և անդրադառնալ ժամանակային կրկնություններին: Առաջնորդվել ենք կառուցվածքաբանական մեթոդով, և աշխատանքի նորույթը նախ՝ ժամանակի պատկերման առանձնահատկությունների քննությունն է նարատալոգիայի՝ պատումային երկերի կառուցվածքաբանության տեսանկյունից, ապա՝ եռապատումի ժամանակային առանձնահատկությունների բացահայտումը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է պատումային ժամանակի քննության նարատիվ սկզբունքների օգտագործմամբ, ինչը դեռևս կիրառված չէ հայ գրականագիտության մեջ:

Ժամանակի պատկերման առանձնահատկությունների ուսումնասիրությունը պատումային երկերում առաջին հերթին ենթադրում է պատմության ժամանակի ու պատումի ժամանակի փոխհարաբերության բացահայտում, քանի որ այս տիպի երկերում ժամանակն ունի երկակի դրսևորում, և պատումի հիմնական գործառույթներից մեկն էլ մի ժամանակի փոխակերպումն է մյուսին [2,299]: Պատմության ու պատումի ժամանակի փոխհարաբերությունը Ժ. Ժենետը քննում է երեք տեսանկյունից՝ ժամանակային տևողության (արագություն, տեմպ), ժամանակային հաջորդականության ու ժամանակային կրկնության (իրադարձությունների խտություն, պարբերականություն): Գրական երկի ժամանակային տևողությունը, ինչպես նշում է Ա. Ձրբաշյանը, իրական տևողության հետ համադրելը բավական բարդ խնդիր է այն պարզ պատճառով, որ պատումի տևողությունը ոչ ոք չի կարող չափել: Ժամանակային իրական տևողությունը չափվում է ժամանակի միավորներով (վայրկյան, րոպե, ժամ, տարի, տասնամյակ և այլն), իսկ տեքստի ժամանակը սովորաբար հաշվարկվում է տարածական միավորներով(տողեր, էջեր, գլուխներ, հատորներ և այլն) [2,306]: Ինչ վերաբերում է տեմպին, ապա այն փոփոխական է: Պատումի տեմպի փոփոխությունը կատարվում է բացթողումների (էլիպսիսների), դադարների, տեսարանների ու ամփոփման միջոցով, որոնք, ըստ Ժենետի, պատկերացում են տալիս պատմության ու պատումի ժամանակի փոխհարաբերության մասին: Այսպես՝ դադարի դեպքում պատումի ժամանակա-

յին երկարությունը մեծ է պատմության ժամանակի երկարությունից, տեսարանի (սցենա) դեպքում ստեղծվում է թվացյալ հավասարություն, ամփոփման դեպքում պատումի ժամանակը փոքր է պատմության ժամանակից, իսկ էլիպսիսի դեպքում պատումի ժամանակը հավասար է զրոյի, մինչդեռ պատմության ժամանակը շատ երկար է: Այս պարագայում պատումի ժամանակն անհամեմատ փոքր է պատմության ժամանակից [7,345]: Ժամանակային հաջորդականության ուսումնասիրման տեսանկյունից ուշադրության կենտրոնում ժամանակային միավորների հերթականության, և հատկապես այդ հերթականության խախտումների ուսումնասիրությունն է, որոնք են հետընդգրկումները (անալեպսիս), և առաջընդգրկումները (պրոլեպսիս): Պատմողը երբեմն հետ է գնում առաջնային պատումի ժամանակից՝ հիշատակելով մի բան, որը ավելի վաղ է կատարվել կամ առաջ է ընկնում՝ պատմելով նաև ապագայում կատարվելիքը:

Վ. Մուղնեցյանի եռապատումում ժամանակի պատկերումը ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջնային պատումի ժամանակի պատկերման գործում էական դեր են խաղում էլիպսիսները և ամփոփումները (բացթողումները): Սրանց միջոցով պատմողը խտացնում, ամփոփ ձևով է պատկերում այս կամ այն իրողությունը՝ գիտակցելով որ տվյալ ժամանակահատվածում ուշարժան ոչինչ չի եղել: Առաջնային պատումի ժամանակային անցումները պատկերվում են եղանակների արագ հերթափոխով: Թեպետ չի խախտվում եղանակների հաջորդականությունը, բայց բաց են թողնվում կամ մեկ տողի մեջ ամփոփվում են որոշ եղանակներ, որոնց ժամանակ կարևոր որևէ իրադարձություն չի եղել: Այսպես՝ «Ալիզում» առաջնային պատումի ժամանակը կառուցված է ամփոփումների ու փակ էլիպսիսների հաճախակի կիրառմամբ: Սրա շնորհիվ արագացվում է պատումը, այն սկսում է արագ ռիթմով: Ամփոփման հնարի կիրառմամբ 6-ից-10-րդ էջերում հակիրճ պատկերվում է երկու տարվա գործողություններ.«Ամեն **գարնան** Մայմեխի ձնհալից Տանձուտը վարարում էր, վշշում ու թշշում էր…[4, 6], // **Ամռանը** Համոն ճիպոտը ձեռքից չէր գցում…[4, 6], // Երեկոն այնպես եկավ, ինչպես **աշնանային** տաք օրվա բոլոր երեկոները…[4, 8] // Համոն արտը չհնձեց ու մինչև **գարուն** չերևաց…[4,8], **Աշուն** եկավ. տղերքը մի տարով մեծացել էին [4,10]»: Պատմողը այս երկու տարվա գործողությունները տեղավորում է չորս էջի մեջ, բայց հաջորդող 18-ից-101 էջերում, այսինքն՝ 81 էջի սահմանում, պատկերում է միայն մեկ ամառվա մեջ տեղի ունեցածը՝ հաճախակի շեշտելով, թե ամռան որ հատվածում է կատարվում տվյալ դեպքը՝ ամռան սկիզբ (էջ 30), ամռան վերջ (էջ 79): Այստեղ տեմպը միջին արագության է, քանի որ շատ են տեսարանները, բայց դրանք պատկերվում են ամփոփումներով: Պատմության ժամանակի ու պատումի ժամանակի միջև երբեմն թվացյալ հավասարություն է ստեղծվում, հետո պատումի ժամանակը փոքրանում է պատմության ժամանակից: Հաջորդող 23 էջերում (110-133) պատկերվում է աշունը, իսկ 133-ում, կիրառելով ամփոփման հնարը, մի կարճ տողով նշում է ձմեռ-գարուն եղանակների հերթափոխը. «Իսկ Իվետայի եղբոր երջանկաբեր ազդարարումները շարունակվեցին անընդմեջ **ձմռան ու գարնան բոլոր օրերին** և ընդմիջվեցին **ամռան առաջին օրը**, երբ Նաթանիելի ակացիաների տակ բացված բակային ճամբարի կենտրոնում Վահրամը տնկեց տասնյոթ մետրանոց երկաթե ձողը»[4, 133]: Հասնելով ամռանը՝ պատումի ռիթմը դարձյալ սկսում է դանդաղել, և 133-ից-139-ը էջերում պատկերվում է ամռան իրադարձությունները, ապա պատմողը, տեմպը արագացնելով, բաց է թողնում աշունը և անցում կատարում ձմռանը (էջ 147), այնուհետև նորից բաց են թողնվում գարունն ու ամառը, և պատկերվում է ամռան վերջին օրը, որից հետո շուրջ մեկ տարվա իրողությունների բացթողմամբ պատումը շարունակվում է հաջորդ ամառվանից, և 53 էջ (254-ից 307) բազմաթիվ ամփոփ տեսարան-

ներով պատկերվում է ամռանը տեղի ունեցածը, ապա մինչև պատումի վերջը՝ էջ 307-318-ը, պատկերվում են աշնանը կատարված իրողությունները: Կարելի է եզրակացնել, որ առաջնային պատումի տեմպը այստեղ փոփոխական է, այն անընդհատ տատանվում է միջինից երբեմն դեպի արագ հերթագայությամբ: Այսպես՝ առաջնային պատումի ժամանակը ունի հետևյալ պատկերը՝



Ժամանակի պատկերման հիմնական սկզբունքները «Եկվորներում» էական փոփոխություններ չեն կրել: Առաջնային պատումի ժամանակը դարձյալ պատկերվում է տարվա եղանակների հերթափոխով: Էլիպսիսը՝ բացթողումը, և ամփոփումը այստեղ ևս գործող հնարներ են, ավելի հաճախ հանդիպում են հետընդգրկումների՝անալեպսիսների մեջ: Պատմողն առաջնային պատումում մոտավորապես 15 ամսվա իրողություններ չի ներկայացնում, որից հետո պահպանում է եղանակների հաջորդականությունը, բայց նրանց ներսում, դարձյալ կիրառելով ամփոփման ու էլիպսիսի հնարները, ոչ բոլոր ամիսներն է նշում, այլ միայն նրանք, որոնց ժամանակ տեղի է ունեցել այս կամ այն հիշարժան դեպքը: Էլիպսիսներն ու ամփոփումները կիրառվում են նաև անալեպսիսների մեջ, նրանցում պատկերվող դեպքերը ամփոփ ներկայացնելու համար: Այդպիսին է էջ 7-ի անալեպսիսը, որի մեջ ամփոփումներով պատկերվում է թաղի ձևավորման սկզբնական ժամանակահատվածը (որը ստույգ չի հիշատակվում), ապա աստիճանաբար մոտենում է առաջնային պատումի ժամանակին նախորդած ոչ վաղ անցյալին՝ մոտավորապես վերջին 11 տարուն: Առաջնային պատումի մեջ բացթողումները քիչ են, ավելի շատ ամփոփումներն են, ուստի պատումի տեմպը միջին արագության է: Այն ունի հետևյալ պատկերը՝



«Տաբու» վեպում պահպանվում է առաջնային պատումի ժամանակի կառուցման հիմնական սկզբունքը, բայց այստեղ բացթողումները ավելի շատ են ու երկար ժամանակահատվածներով: Կիրառվում են էլիպսիսի բաց և փակ տեսակները, առաջինի դեպքում պատմողը ուղղակիորեն նշում է, թե քանի տարի բաց թողեց ու անցավ, իսկ երկրորդի դեպքում ոչինչ չի նշվում, բացթողումը ընկալվում է պատկերվող իրողություններից: Այստեղ առաջնային պատումի ժամանակի պատկերման հարցում պատմողը անհետևողական է, և այն պատկերվում է մասամբ եղանակների հերթափոխով, մասամբ էլ մտացածին իրականության մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Պատումի սկզբից՝ էջ 9-ից մինչև 174 էջը պատմողը պահպանում է հետևողականությունը և ժամանակի ընթացքը պատկերում է եղանակների հերթափոխով՝ այդպես պատմելով մեկ տարվա գործողություններ, բայց այնուհետև պատկերվող իրադարձությունները հուշում են, որ ժամանակը շատ ավելի արագ է հոսում, քան պատմողը հիշատակում է: Այսպես՝ էջ 9-ից 145-ում պատկերվում է աշուն, էջ 145-ից -168-ում՝ ձմեռ, 168-ից-171-ում ամառ, իսկ 171-ից-180-ումդարձյալ աշուն: Սկսած էջ 199-ից՝ ժամանակի պատկերման հետևողականությունը խախտվում է: Այստեղ ևս հիշատակվում է, որ աշուն է. «Երևանյան աշուն: Արվեստագետների ու երազողների աշունը…», բայց երբ հետևում ենք պատկերվող իրադարձություններին, նկատում ենք, որ էջ 174-ում նշված է, թե կերպարներից մեկը՝ Գոդոն, նոր է դպրոց հաճախելու.«Նա վաղուց դպրոցահասակ էր և ամեն օր առիթ էր փնտրում, որ ընկերների հետ, Փարամազին թևի տակն առած՝ գնա պտտվի դպրոցի կողքերին…», իսկ էջ 199-ում նա արդեն 6-րդ դասարան է.«Տղերքը փոխադրվել էին 6-րդ դասարան»: Կիրառելով փակ էլիպսիս՝ պատմողը բաց է թողնում 6 տարվա իրադարձություններ, որից հետո ժամանակի մասին պատկերացում տվող հաջորդ հատվածները էջ 209-ում և 224-ում են, բայց այստեղ արդեն կիրառված է բաց էլիպսիս. և՛ էջ 209-ում, և՛ էջ 224-ում պատմողը նշում է, որ անցել է երկու տարի (միասին չորս տարի): Ստացվում է, որ պատումի սկզբից մինչև էջ 224-ը անցել է 11 տարի, և պատումի սկզբի երեխա կերպարները էջ 227-ում արդեն համալսարանի ուսանողներ են: էջ 254-ում պատկերվում է ԽՍՀՄ-ի փլուզումը և Հայաստանի անկախացումը. «Կրեմլի երկաթե կաթսայից դուրս թռած աղաղակն ահագնացավ, ողողեց կայսրության ողջ տարածքը, ցնցեց, տեղահան արեց ժողովուրդներին, որոնք այդ աղաղակին ականջալուր եղան յուրովի՝բացահայտելով իրենց հավաքական բնույթին բնորոշ դրսևորումները…»[6, 254]: Պարզ է դառնում, որ խոսքը 1991թ-ի մասին է, իսկ 257-ում՝ Արցախյան պատերազմի (կարելի է ասել վերջերը, այսինքն՝ դարձյալ 1991 թ.-ը), ուրեմն նորից կիրառվել է փակ էլիպսիս, և բաց է թողնվել 10 տարի, քանի որ պատումի սկզբում (էջ 183) ծնված երեխաները, արդեն 20 տարեկան են և մասնակցում են պատերազմին: Նրացից մեկի՝ Բեկասլանի մասին նշվում է հետևյալը.«….Անուշիկը հիշեց ձեղնահարկում պահված զենքերի մասին, և բացվեց վրեժի բոցով հրդեհված Բեկասլանի **ի ծնե փակ և քսան տարի փակված** բռունցքը» [6, 254]: Սա պարզում է նաև, որ պատումի ժամանակը սկսում է 1970-ական թվականներից: Այնուհետև էջ 337-ում դարձյալ բաց էլիպսիսի ենք հանդիպում, նշվում է, որ անցել է յոթ տարի, իսկ վերջին ժամանակային հատվածում (էջ 338) տեղեկություն է տրվում եղանակի՝ գարնան մասին, ուրեմն պատումն ավարտվում է 1997-ի գարնանը՝ ընդգրկելով շուրջ 27 տարվա պատմություն: Պատումի սկզբում տեմպը դանդաղ է, և երեք ամսվա իրադարձությունները պատկերվում են 136 էջում (էջ 9-ից 145), իսկ հաջորդող երեք ամսվա գործողությունները ընդգրկում են 23 էջ (145-ից -168), արդեն 168-171 էջերում երեք ամսվա գործողությունները պատկերվում են երեք էջում: Սա նշանակում է, որ պատումի տեմպը աստիճանաբար է աճում ու արագանում:

Այնուհետև, էլիպսիսների միջոցով նախ՝ 23 էջում ամփոփ ներկայացնում է 6 տարվա իրողություններ (էջ 174-ից 199), ապա 15 էջի սահմանում՝ 209-ից մինչև 224-ը՝ չորս տարվա գործողություններ, որից հետո բաց թողնելով 10 տարի (այստեղ տեմպը ամենավերին սահմանին է)՝ էջ 254-ից մինչև 337-ը, այսինքն՝ 83 էջ, ամփոփման հնարի կիրառմամբ պատկերվում է յոթ տարվա ընթացքում տեղի ունեցածը: Սա էլ իր հերթին հուշում է, որ պատումի վերջում տեմպը դարձյալ դանդաղում է, ուստի այն ունի աստիճանական զարգացում և էջ 227-ից 254-ի սահմանում հասնում է ամենաբարձր կետին, որից հետո իջնում է ցած: Կրկնություններ չկան, սա նշանակում է, որ պատմողը մեկ անգամ պատմում է այն, ինչ կատարվել է մեկ անգամ: Այսպես՝ առաջնային պատումի ժամանակը ունի հետևյալ պատկերը՝



Նորայր Ղազարյանը, անդրադառնալով «Տաբու» վեպի ժամանակին, նշում է, որ այն տրոհված է իրականի՝ սյուժետայինի և միֆականի՝ վերսյուժետայինի [3], իսկ Արմեն Ավանեսյանը հետևյալ տեսակետն է հայտնում.«Վեպի գեղարվեստական ժամանակն ընդգրկում է նախորդ դարի 40-ականներից մինչև մեր օրերը: Բայց մի ուշարժան հանգամանք. եթե մեր էպոսում Սասունցի Դավիթը օրվա ընթացքում տարով էր մեծանում, ապա ժամանակն անզոր է «Տաբու» վեպի կերպարների համար: 40-ականների մանուկ-պատանիները մեր օրերում եռանդուն երիտասարդներ են կարծես, իսկ ծերունիներն ասես անմահ են» [1]: Ուսումնասիրողի տեսադաշտից, սակայն, վրիպել է, որ պատումի 182-րդ էջում նոր ծնված մանկիկները՝ Բեկասլանը, Բեկբագոն, Բեկազրաիրը, արդեն էջ 257-ում Արցախյան պատերազմի մասնակիցներ են, իսկ մասնավորապես Բեկասլանի մասին նշվում է հետևյալ միտքը. «….Անուշիկը հիշեց ձեղնահարկում պահված զենքերի մասին, և բացվեց վրեժի բոցով հրդեհված Բեկասլանի **ի ծնե փակ և քսան տարի փակված** բռունցքը» [6, 257]: Սա նշանակում է, որ պատումի սկզբում (էջ 182) ծնված երեխան 1991թ.-ին 20-21 տարեկան է, ուստի պատումի ժամանակը ոչ թե 40-ական թվականներից է սկսում, այլ 70-ականներից: Նկատենք նաև, որ պատումի սկզբի հատվածում հեղինակն առանձնակի շեշտում է, որ Գոդոն, Փարամազը, Եգորը երեխաներ էին: Գոդոն՝ Փայլակի տղան, անգամ դպրոց չէր հաճախում, որի մասին վկայում է հետևյալ հատվածը.«Գոդոն դեռ պիտի դպրոց գնա, սովորի ու ավարտի, ապա մարդամեջ մտնի, հարգանքի ու պատվի արժանանա…» [6, 21]: Փարամազից նա մեծ էր ինն ամսով.«Գոդոն ընդամենը ինն ամսով էր մեծ յոթնուկ եղբորից…» [6, 14]: Եթե պայմանականորեն ընդունենք, որ նա 6-7 տարեկան էր, ապա 1991թ.-ի իրադարձությունների ժամանակ բնական է, որ երիտասարդ է, իսկ մեր օրերում հասուն տղամարդ: Ինչ վերաբերում է մյուս հերոսներին՝ Փայլակին, Բագոյին, Կալիպսեին, ապա նրանք վեպի սկզբում երիտասարդ են: Կալիպսեն՝ Փայլակի կինը, 25 տարեկան էր. «Կալիպսեի ծննդյան **քսանհինգամյա** տարեդարձի կեսօրն էր…» [6, 20]: Այս դեպքում հավանական է, որ Փայլակը մոտավորապես 30 տարեկան լիներ, ուստի հավանական է նաև, որ 1997-2000-ականներին լինի մոտավորապես 57-60 տարեկան: Անմահ ծերունիներ չկան: Թե՛ Հրաշեկ պապը, թե՛ Փառնակ իմաստունը մահանում են: Կարելի է եզրակացնել, որ պատումի ժամանակը սկսում է ոչ թե 40-ական թվականներից, այլ 1970-ականներից, և բնականաբար հավերժ

երիտասարդ կամ անմահ կերպարներ չկան: Վեպում ժամանակն ընդգրկում է տասնամյակներ և հոսում է արագ ու անընդհատական: Այն ընդլայնողմիֆական ոչ մի տարր չկա:

Ժամանակային հաջորդականության տեսանկյունից եռապատումում նկատելի են խախտումներ: Առաջնային պատումի ժամանակն անընդհատ խախտվում է առաջընդգրկումների (անալեպսիսների) ու հետընդգրկումների (պրոլեպսիսների) միջոցով: «Ալիզում» շատ են թե՛ հետընդգրկումները, թե՛ առաջընդգրկումները: Հանդիպում են նաև բարդ կառույցներ, երբ անալեպսիսի մեջ կան պրոլեպսիսներ կամ հակառակը: Երբեմն հանդիպում են նաև անալեպսիսի մեջ անալեպսիս կառույցներ: Անալեպսիսների և պրոլեպսիսների թիվը գրեթե հավասար է: Պատմելու ընթացքում նարրատորը մոտավորապես 23 անգամ հետ է գնում՝ հիշատակելով անցյալում կատարվածը և 26 անգամ առաջ է ընկնում՝ անհամբերությամբ ներկայացնելով ապագայում կատարվելիքը: Կիրառվում են թե՛ անալեպսիսների, թե՛ պրոլեպսիսների փակ տիպը, այսինքն՝ պատմողն առաջնային պատումի ժամանակից առաջ ու հետ է ընկնում, ամփոփ ձևով ներկայացնում ավելի վաղ կամ ավելի ուշ կատարված իրադարձություն և ետ վերադառնում: Ըստ ձգվածության՝ անալեպսիսները շատ երկար չեն: Ամենաերկարը ընդգրկում է մոտավորապես 2 էջ (Մարտին ապոր հուշը էջ 15-ից-17-ը, Վահրամի հուշը (էջ 111-113): Սրանց մեծ մասը չեն անցնում հատվածի սահմանը: Վեպում հանդիպող անալեպսիսներից են. «Մի օր հայրը տուն բերեց սև, գունդուկծիկ, դեռ աչքերը փակ մի շան թուլա, տվեց Վահրամին, թե՝ աչքդ վրան պահիր, մեծացրու: Դա **երկու տարի առաջ** էր՝ հուլիսի սկզբներին...» [4,11], «**Մի քանի օր առաջ** տան դիմացի բարդին տապալվել էր....» [4, 29]: Անալեպսիսներ կան նաևէջ **25**-ում («Մի իրիկուն աղբրի գլխին զինված ձիավորների հանդիպեցինք...»), **47**-ում («**Պատերազմի նեղ օրերին** կոլխոզը սրա հորը...»), **49**-ում («Նայում էր Վահրամը, **հիշում էր...»), 63-ում** (Դիմացը երևի այդպես մել էլ հորձանք տվել...»**),111-**ում («Հոր հետ սար էին բարձրանում...»), **129**-ում («Նա **հիշեց** իր կյանքի ամենաարևոտ օրը...»), **158-**ում («Նրան օրուգիշեր հալածում էր հատկապես այն օրվա հիշողությունը...»), **263**-ում («Երկու ամիս առաջ Օղբաթ Մարտինի ձայնը եկել...»), **15**-ում («Վահրամը ծնվեց...»), **20**-ում («Էդ հլա ոչինչ...»), **21**-ում («Վերջինը Սիրանույշիկին տարան...»), **53**-ում («Հիշեց Սև եկեղեցին...»), **71**-ում («Սիմոնը հավաստիացնում էր...»), **74**-ում («Հիշում էր Վահրամը...»), **90-**ում («Երբեմնի անմարդաբնակ Դիմացի...»), **93-**ում («Անցյալ դարի...»), **115**-ում («Հենց այստեղ էին նստած...»), **148**-ում («Կուկուռուզի տարին...»), **207-**ում («Կռվի տարիներին...»), **218**-ում («Ժելեզնի Նշանը Վահրամի կրտսեր քրոջ...»), **308**-ում («Վահրամը հիշում էր...»): Հանդիպում են արտաքին անալեպսիսներ, երբ պատմողը դուրս է գալիս առաջնային պատումի ժամանակից՝ պատկերելով ավելի վաղ կատարված իրողություններ.«Մի օր հայրը տուն բերեց սև, գունդուկծիկ, դեռ աչքերը փակ մի շան թուլա, տվեց Վահրամին, թե՝ աչքդ վրան պահիր, մեծացրու: Դա **երկու տարի** առաջ էր...» [4,11]: Արտաքին անալեպսիսներ կան էջ **25**-ում «Հայ տղերք էին...», **26**-ում «Վերջինը Սիրանուշիկին տարան...», **49**-ում «Նայում էր Վահրամը, հիշում էր...», **60**-ում «Պատմում էին, թե ինչպես», **63**-ում «Դիմացը երևի այդպես...», **74**-ում «Եվ եթե չլիներ Օղբաթ Մարտինը...», **90**-ում «Պեղելով իր հայտնաբերած», **93**-ում «Անցյալ դարի վերջերին...», **111**-ում «Հոր հետ սար էին գնում», **115**-ում «Հենց այստեղ էին նստած...», **129**-ում «Նա հիշեց իր կյանքի....», **148**-ում «Կուկուռուզի տարին...», **308**-ում «Վահրամը հիշում էր...»: Արտաքին անալեպսիսների մեջ կան այնպիսիները, որոնց ժամանակը ստույգ չի նշվում, բայց հատվածի ընդհանուր բովանդակությունից կռահելի է, որ կատարվել են գլխավոր պատումի ժա-

մանակից առաջ: Կան նաև ներքին անալեպսիսներ, երբ իրադարձությունները դուրս չեն գալիս առաջնային պատումի ժամանակային սահմաններից, դրանց հաջորդականությունը խախտվում է այդ սահմանների ներսում: Այսպես՝ «.... Բա **էրեգ** ինչ օղբաթ արավ: Ի՛ քու մարդ ասողի,- Դարչոն ձեռքը ձանձրացած թափ տվեց եղբոր վրա ....» [4, 20], «**Երկու ամիս առաջ** Օղբաթ Մարտինի ձայնը եկել Եվգինեին ասել էր,» [4,263], **29**-ում «Մի քանի օր առաջ...», **53**-ում «Հիշեց Սև եկեղեցին, իր միջից չարքերը հանելու օրը», **158**-ում «Նրան օրուգիշեր հալածում էր...», **218**-ում «....եթե Դիմացում անգործ թափառելուց ձանձրացած Կոլոտ Լևիկը...»:Քանի որ կիրառվում են հիմնականում փակ ու արտաքին անալեպսիսներ, ապա սրանք ընթերցողի կողմից նկատելի են, ուստի շփոթ չեն առաջացնում, այլ, ընդհակառակը, ունեն լրացնող, ավելացնող ու մեկնաբանող նշանակություն: Անալեպսիսները հանդես են գալիս՝

ա) հուշերի ու հիշողությունների ձևով

Անալեպսիսների միջոցով միշտ հիշվում են մահացածները, նրանց արարքներն ու ասածները: «Ալիզ» վեպում այս կերպ ամբողջական է դառնում Օղբաթ Մարտինի կերպարը, ով մահացել էր վեպի սկզբում: Հիշվում են նաև այս կամ այն իրադարձությունները, հաճելի պահերը:

բ) անցյալի մասին թռուցիկ ակնարկով

Երբ պատմողը այս կամ այն կերպարին պատումի ընթացքում որոշ ժամանակ չի անդրադառնում, հետո ավելի ուշ պատկերում է այդ ընթացքում նրա կյանքում կատարվածը, օրինակ, Կոլոտ Լևիկի Սևան տեղափոխվելը, այնտեղ նրա հետ կատարվածը(էջ 218):

